# Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻՒ 14 (1664) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 19, 2014
VOLUME 34, NO. 14 (1664) SATURDAY, APRIL 19, 2014

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Դարձեալ Հայ Զոհեր Դամասկոսի եւ Հալէպի Մէջ

Ապրիլ 15-ին առաւօտեան Դամասկոսի Հայ Կաթողիկէ «Փարոս» վարժարանի վրայ ինկած ռումբի մը հետեւանքով զոհուած է ուսանող մը, իսկ վիրաւորուած են 57 անձեր:

Վիրաւորները փոխադրուած են մօտակայ հիւանդանոցները եւ անոնցմէ 6-ի կացութիւնը ծանր է: Փրկարար աշխատանքները կատարուած են Դամասկոսի Հայ Կաթողիկէ ժողովրդապետ հայր Գէորգ վրդ. Պահէնի եւ տեղւոյն առաջնորդ հայր Յովսէփ Եպս. Առնաութեանի նախաձեռնութեամբ:

Սուրիոյ վարչապետը այցելած է վարժարան եւ փոխանցած իր ցաւակցութիւնները, իսկ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարք կաթողիկոսը աղօթած է վիրաւորներու բուժումին համար:

Միւս կողմէ Սուրիոյ Հալէպ քաղաքին մէջ տեղի ունեցող ռազմական գործողութիւններուն ընթացքին, Ապրիլ 16-ի առաւօտեան զոհուած է սուրիական բանակի մէջ ծառայող Գոգօ Աշնագլեանը:

19-ամեայ հայ զինուորը զոհած է Ռամուսէի Թաղամասին մէջ տեղի ունեցող մարտերու ընթացքին:

## Սերժ Սարգսեան Այլեւս Թեկնածու չէ Երկրի Ղեկավարի Պաշտօնին

Սահմանադրական բարեփոխումներու մասնագիտական յանձնաժողովի անդամներուն հետ հանդիպումի ընթացքին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց, որ այլեւս երբեք պիտի չառաջադրուի պետութեան ղեկավարի պաշտօնին: «Վստահ եմ, որ մէկ մարդ երկու անգամէն աւել իր կեանքում չպէտք է յաւակնի ընդհանրապէս երկրի կառավարման ղեկին Հայաստանում», - ըսած է ան:

«Պաշտօնապէս յայտարարում եմ, որ ես՝ Սերժ Սարգսեանս, այլեւս երբեք չեմ առաջադրուելու Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնի: Եթէ վերջնական քննարկումների արդիւնքում իմ ցանկութեանը չհամապատասխանող ուղի ընտրուի, նկատի ունեմ պառլամենտական կառավարման մոդելը, ապա ես չեմ յաւակնի նաեւ վարչապետի պաշտօնին: Վստահ եմ անգամ, որ մէկ մարդը երկու անգամից աւելի իր կեանքում չպէտք է յաւակնի ընդհանրապէս երկրի կառավարման ղեկին Հայաստանում»,- ըսած է Սերժ Սարգսեան:

Հակառակ նախագահի այս հաւաստիացումներուն, ընդդիմադիր շրջանակները թերահաւատութեամբ ընդունեցին զայն:

## Անգարա Դժգոհ Ամերիկեան Ծերակոյտի Յանձնախումբի Ընդունած՝ Ցեղասպանութեան Բանաձեւէն

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ծերակոյտի Արտաքին Յարաբերութեան Յանձնաժողովը ձայներու մեծամասնութեամբ վաւերացուց թիւ 410 բանաձեւը, որ կու գայ ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը եւ նոյնը ընելու կոչով կը դիմէ նախագահ Պարաք Օպամային:

Փաստաթուղթի հեղինակներէն մէկը՝ Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի Նախագահ Ռոբերտ Մենենտեզ այս առթիւ յայտարարեց, որ ցեղասպանութիւնը ցեղասպանութիւն է, զայն տարբեր անունով կարելի չէ կոչել: «Պէտք է ընդունինք, որ յաջորդ տարի, երբ կը նշուի Ցեղասպանութեան 100-ամեակը, մէկ դար առաջ հայերը սպաննուած են Օսմանեան Թուրքիոյ մէջ», ըսաւ Մենենտեզ:

Հայաստան անմիջապէս ողջունեց Ծերակոյտի այս քայլը, իսկ Թրքական կառավարութիւնը մերժեց զայն:

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը ողջունելով Բանաձեւի ընդունումը յայտարարեց.- «Հայոց Ցեղասպանութեան 99-րդ տարելիցի նախաշեմին Սենատի յանձնաժողովի կողմից թիւ 410 բանաձեւի ընդունումը կարեւոր քայլ է պատմական ճշմարտութեան վերականգնման եւ մարդկութեան դէմ ոճիրների կանխարգելման ճանապարհին»:

Թրքական կառավարութիւնը իր կարգին յայտարարեց, որ Միացեալ Նահանգներու Ծերակոյտի Յանձնաժողովը ընդունելով հապշտապ եւ անձեռնհասութեամբ պատրաստուած բանաձեւի նախագիծը , գործած է իր լիազօրութիւններու, իրաւասութեան եւ պատասխանատուութեան շրջանակէն դուրս:

Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը մերժելով Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունումը զայն որակեց՝ «քաղաքական շահարկում, որ կ'աղաւաղէ պատմութիւնը եւ օրէնքը»:

Պաշտօնական Անգարա այս առթիւ վստահեցուց, որ հայ - թրքական երկխօսութեան միջոցով «1915 թուականի ողբերգական իրադարձութիւններու արդար յիշողութեան հասնելու նպատակով» պատմական խառն յանձնաժողով ստեղծելու առաջարկը կը մնայ օրակարգի վրայ:



Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ Ռոբերտ Մենենտէզ

Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Բանաձեւի ընդունուելու նախօրեակին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Դաւութօղլու հեռաձայնային զրոյց ունեցած է Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ջոն Քերրիի հետ՝ կապուած ԱՄՆ-ի Գոնկրէսէն

Շար.ը էջ 4

### Յովիկ Աբրահամեանին Նշանակելով Նոր Վարչապետ

## Սերժ Սարգսեան Յայտարարեց,- «Բարեփոխումներն Արդիւնաւէտօրէն Շարունակուելու Են»

Ապրիլ 13-ին, Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցութեան խորհուրդի նիստի ընթացքին որոշուեցաւ վարչապետի պաշտօնին առաջարկել Ազգային Ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանի անունը: Նիստը գլխաւորող նախագահ Սերժ Սարգսեան այս առթիւ յայտարարեց որ նոր կառավարութեան առաջնահերթութիւնները պիտի ըլլան Մաքսային Միութեանը միանալու աշխատանքները աւարտին հասցնելը եւ պարտադիր կենսաթոշակային համակարգի ներդրումը:

«Վերջին օրերի ընթացքում պարոն Աբրահամեանի հետ մենք երկար ենք խօսել ներկայի ու մեր ապագայ ծրագրերի մասին: Ես անկեղծօրէն ներկայացրել եմ բոլոր այն թերահաւատութիւնները, որոնք կան անգամ մեր թիմակիցների մօտ՝ կապուած ներթիմային միասնականութեան, այլ քաղաքական ուժերի հետ մեր յարաբերութիւնների կամ հասարակական տարբեր շերտերի կողմից հնարաւոր ընկալումների հետ», - վարչապետի պաշտօնում ներկայացնելով ՀՀԿ փոխնախագահ, ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանի թեկնածութիւնը՝ ըսած է Սերժ Սարգսեան, - «Մեր շարքերում առկայ հնարաւոր մտահոգութիւնները պարոն Աբրահամեանը խոստացել է շատ



Հայաստանի նորանշանակ վարչապետ Յովիկ Աբրահամեան

արագ փարատել: Ես վստահ եմ, որ բոլորը շատ արագ հասկանալու են, որ Հայաստանի Հանրապետութիւնն իսկապէս արդիւնաւէտ վարչապետ ունի»:

Սերժ Սարգսեան նշած է, որ Յովիկ Աբրահամեանի հետ պայմանաւորուած են շարք մը «աշխատանքային առաջնահերթութիւնների ու ոճի մասին»:

Հայաստանի Սահմանադրութեան համաձայն վարչապետի նշանակումէն յետոյ՝ քսանօրեայ ժամկէտի մէջ, պէտք է կազմաւորուի կառավարութիւն:

ՀՀԿ մամուլի խօսնակ Էդուարդ Շարմազանովի Խորհուրդի նիստի աւարտին լրագրողներուն յայտարարեց,- «Ինչպիսին էլ լինի ապագայ կաբինետը՝ այնտեղ հանրապետականների դերակատարումը լինելու է վճռորոշ: Նոր վարչապետին՝ Յովիկ Աբրահամեանին, քաղաքական մեծամասնութիւնը, Նախագահ Սարգսեանի գլխաւորութեամբ, տուել է մեծ ազատութիւն, որպէսզի նա իրականացնի ազատ կադրային քաղաքականութիւն, որպէսզի նա ընտրի ոչ միայն կուսակցական պատկանելութեամբ, այլ նաեւ ընտրի պրոֆեսիոնալ կադրեր, սակայն դա չի կարող լինել խնամի-ծանօթ-բարեկամ, քաւոր-սանիկ սկզբունքով», աւելցուց Շարմազանով:

Շարմազանով նաեւ յայտարարեց, որ իրենք պատրաստ են ապագայ կառավարութեան կազմին մէջ ընդգրկելու «Բարգաւաճ Հայաստանին» եւ Դաշնակցութեան:

Յովիկ Աբրահամեանի նշանակումէն մէկ օր ետք, Հայաստանի Նախագահի ստորագրած հրամանագիրերով Արտաքին Գործերու եւ Պաշտպանութեան Նախարարներու պաշտօններուն վրայ վերանշանակուեցան Էդուարդ Նալբանդեանն ու Սէյրան Օհանեան:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ռոբերտ Քոչարեանն առայժմ ոչ է ասում Սերժ Սարգսեանին

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

Յովիկ Աբրահամեանի վարչապետ նշանակուելուն զուգահեռ, դրա նախօրէին Սերժ Սարգսեանի ու Գագիկ Ծառուկեանի հանդիպմանը քննարկուած հարցերի վերաբերեալ ուշագրաւ տեղեկատուութիւն է տարածել Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան խօսնակ Տիգրան Ուրիխանեանը:

Ուրիխանեանն ասում է, որ Գագիկ Ծառուկեանը Սերժ Սարգսեանի հետ հանդիպմանը դէմ է արտայայտուել սահմանադրութեան փոփոխութեան առաջարկին, ասելով, որ ներկայում առաւել կարեւորը սոցիալ-տնտեսական խնդիրներն են:

Ինչպէս յայտնի է, Սերժ Սարգսեանը Ապրիլի 10-ին հրապարակ նետեց խորհրդարանական կառավարման մոդելի անցնելու առաջարկը: Հենց այդ օրը աւելի ուշ տեղի էր ունեցել վարչապետի թեկնածութեան շուրջ առաջին հանդիպումը Ծառուկեանի հետ: Նոյն օր երեկոյեան, Յովիկ Աբրահամեանի գրեթէ որոշուած համարուող թեկնածութեան հաստատումը յետաձգուեց, իսկ գիշերն էլ տեղի ունեցաւ անսպասելի հանդիպում «քառեակի» առաջին դէմքերի մասնակցութեամբ, առանց ՀՅԴ-ի:

Ապրիլի 12-ին Սերժ Սարգսեանը կրկին հանդիպեց Ծառուկեանի հետ, որի մասին էլ Տիգրան Ուրիխանեանը յայտարարութիւնը տարածեց Ապրիլի 13-ին: Այդ օրն էլ Յովիկ Աբրահամեանը նշանակուեց ՀՀ նոր վարչապետ, իսկ Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ նա հաւաստիացրել է փարատել «ներթիմային մտահոգութիւնները»:

Ինչ է դա նշանակում, ի՞նչ մտահոգութիւն կար «ներթիմում», որ պէտք է փարատի Յովիկ Աբրահամեանը:

Հազիւ թէ ՀՀԿ-ում մտահոգուած լինեն երկրի ճակատագրով: Այնտեղ մտահոգութեան առարկայ կարող է դառնալ միմիայն սեփական ճակատագիրը երկրում, իշխանութեան ու փողի հարցը: Այսինքն, ՀՀԿ-ին մտահոգում է, թէ արդեօք ԲՀԿ-ն «քառեակի» գլուխն անցած չի հեռացնի ՀՀԿ-ին իշխանութեան կարկանդակի առաջին «գծից», դրանից բխող բոլոր տնտեսա-իրաւական հնարաւոր հետեւանքներով:

Սերժ Սարգսեանն էլ փաստացի ասում է, որ Յովիկ Աբրահամեանը՝ Գագիկ Ծառուկեանի խնամին եւ իշխող համակարգի երկու բեւեռների իւրօրինակ կամուրջը, հաւաստիացնում է, որ կը կատարի ՀՀԿ-ի անվտանգութեան բարձիկի դերը:

Հաշուարկը թերեւս այն է, որ Գագիկ Ծառուկեանը դիմահար չի հարուածի ՀՀԿ-ին, իմանալով, որ բացուող բարձիկը լինելու է իր խնամի Յովիկ Աբրահամեանը:

Բայց, ԲՀԿ-ի յայտարարութիւնը Սերժ Սարգսեանի հանդիպմանը բարձրացրած խնդիրների եւ խորհրդարանական կառավարման առաջարկը մերժելու վերաբերեալ, փաստացի վերահաստատում է հարուածելու պատրաստակամութիւնը, չնայած Յովիկ Աբրահամեանին:

Հետեւաբար, տրամաբանական է, որ առնուազն բառապաշարի եւ առեւերոյթ գործունէութեան առումով ԲՀԿ-ին այսպէս ասած ընդդիմադիր դաշտում պահելը բխում է Սերժ Սարգսեանի շահից: Պարզապէս նա միեւնոյն ժամանակ իրավիճակը վերահսկելի պահելու համար ունի ՀՀԿ-ին էլ երաշխիքներ տալու անհրաժեշտութիւն, որովհետեւ մտահոգութեան կրիտիկական աստիճան կայ, որից յետոյ կարող է ներիշխանական տրամադրութիւններում յարաբերակցութիւն փոխուել, իսկ ԲՀԿ-ն չի յապաղի իհարկէ օգտագործել դա երկրորդից առաջինը դառնալու համար: Յովիկ Աբրահամեանի նշանակումը եւ խորհրդարանական կառավարման առաջարկն ունի հենց այդ փոփոխութիւններից ապահովագրուելու նպատակ:

Եւ այդ իմաստով, ԲՀԿ-ն փաստացի մերժում է ՀՀԿ-ի կամ Սերժ Սարգսեանի հետ յաւերժ երկրորդի դաշն կնքել, ինչպիսին որ պէտք է հանդիսանար Սահմանադրութեան փոփոխութիւնը եւ անցումը խորհրդարանական կառավարման մոդելի:

Ընդ որում, երկրորդն այստեղ բաւական բազմիմաստ հանգամանք է, նկատի ունենալով այն, որ փորձագէտները եւ մամուլը բաւական յաճախ են խօսում ԲՀԿ-ի գործունէութեան հետեւում երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի գործօնի մասին: Քոչարեանն էլ գուցէ չի ցանկանում մնալ յաւերժ երկրորդը, այսինքն յիշուել միշտ որպէս երկրորդ նախագահ եւ ոչ թէ ասենք նաեւ չորրորդ:

Գուցէ հենց դա է նաեւ պատճառը, որ 2013 թուականի նախագահի ընտրութիւնը բաց թողած, խորհրդարանի ընտրութեան 100 տոկոս համամասնական կարգի կողմ հանդէս եկած, ՀՀԿ-ին քաղաքական մենիշխանութեան համար մեղադրած ԲՀԿ-ն մերժում է խորհրդարանական կառավարման մոդելը: Սակայն ամենաէականն այն է, որ դրանով փաստացի մերժւում է նաեւ այդ մոդելի ներդրման համատեքստում Սերժ Սարգսեանի արած յայտարարութիւնը, թէ ինքը չի պատրաստւում երբեւէ կրկին նախագահ առաջադրուել կամ վարչապետ առաջադրուել խորհրդարանական մոդելում, եւ որ միեւնոյն մարդը երկու ժամկէտից աւելի չպէտք է յայտնուի պետութեան ղեկին:

Դա միասին հեռանալու ակնյայտ առաջարկ էր Քոչարեանին: Նրա գրասենեակի ղեկավար Վիկտոր Սողոմոնեանը յայտարարել էր, որ Ռոբերտ Քոչարեանն անպայման կ՚արձագանքի Սահմանադրութեան փոփոխութեան գաղափարին:

Այս դէպքում Յովիկ Աբրահամեանին փաստացի սպասում է կամպատանդի, կամ պարտիզանի ճակատագիր:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Սերժ Սարգսեանը բացել է ներքին ինտրիգը

*ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԷԿԵԱՆ*

Եւ այսպէս Հայաստանի 13-րդ վարչապետը Յովիկ Աբրահամեանն է: Ի՞նչ կը տայ այդ նշանակումը երկրին, պետական եւ քաղաքական համակարգին, ՀՀ քաղաքացուն հաւանաբար ցոյց կը տայ ժամանակը: Սակայն վարչապետի նշանակումը, եթէ այն դիտարկենք քաղաքական լուծում, հաշուարկուած քայլ էր: Սերժ Սարգսեանն ըստ էութեան այս նշանակմամբ ոչ իշխանական քառեակի քաղաքական ագրեսիւութիւնը եւ իշխանական առանձին թեւերի դժգոհութիւնը չէզոքացնելու նպատակ է հետապնդում եւ դա նրան կարծես թէ յաջողւում է:

Սերժ Սարգսեանը չի էլ թաքցնում, որ նշանակման գլխաւոր արգումենտացիան քաղաքական ուժերի պահանջատիրութեան համատեքստում է արուել: Ի սկզբանէ յայտարարելով Յովիկ Աբրահամեանի բոլոր կողմից ընդունելի թեկնածու լինելու մասին՝ Սերժ Սարգսեանն ակամայից քաղաքական կուլիսներից դուրս հանեց համակարգի կեղտոտ սպիտակեղէնը:

Վարչապետի պորտֆելի պահանջով ակնյայտօրէն կար ճնշում եւ դա ոչ միայն հրաշալի քառեակի այլեւ իշխանական հակատիգրանսարգսեանական թեւի պահանջն էր: «Ես անկեղծօրէն ներկայացրել եմ (Յովիկ Աբրահամեանին) բոլոր այն թերահաւատութիւնները, որոնք կան անգամ մեր թիմակիցների մօտ՝ կապուած ներթիմային միասնականութեան, այլ քաղաքական ուժերի հետ մեր յարաբերութիւնների կամ հասարակական տարբեր շերտերի կողմից հնարաւոր ընկալումների հետ: Բոլոր խնդիրների մասին խօսել ենք անկեղծ, բաց, ու ես ստացել եմ պարոն Աբրահամեանի յստակ հաւաստիացումները: Մեր շարքերում առկայ հնարաւոր մտահոգութիւնները պարոն Աբրահամեանը խոստացել է շատ արագ փարատել իր ակտիւ քայլերով, քաղաքական յստակ ուղերձներով, թիմային ոգին բարձրացնելու եւ աշխատանքի շուրջ բոլորին միաւորելու իր ձեռնարկումներով եւ, որ ամենակարեւորն է, աշխատանքի շօշափելի արդիւնքներով: Ես վստահ եմ, որ բոլորը շատ արագ հասկանալու են, որ Հայաստանի Հանրապետութիւնն իսկապէս արդիւնաւէտ վարչապետ ունի: Ես չեմ կասկածում դրանում եւ անձամբ ամէն ինչ անելու եմ՝ օգնելու համար պարոն Աբրահամեանին հնարաւորինս արագ հասնելու այդ իրականութեանը:», -ՀՀԿ ԳՄ նիստում, ներկայացնելով նոր վարչապետին, ասել է Սերժ Սարգսեանը:

Սերժ Սարգսեանի այս յայտարարութիւնը Աբրահամեանի նշանակման հետ կապուած բաւական ուշագրաւ դրուագներ է բացայայտում. նախ փաստացի նախագահն ընդունել է, որ իշխանութեան ներսում թերահաւատութիւն եւ տարընկալում կայ, թիմը ինչ-որ իմաստով նաեւ յուսալքուած է եւ պէտք է ոգին բարձրացնել: Սերժ Սարգսեանն ասել է նաեւ, որ կառավարութեան աշխատանքները կազմակերպուելու են ձեռքբերուած յաջողութիւնները ներկայացնելու եւ դրանց վրայ հիմնուելով առաջ գնալու, այլ ոչ թէ նախկին կառավարութեանը պախարակելու ճանապարհով: Իսկ կադրային հարցերում նոր վարչապետն ունենալու է բարձր աստիճանի ազատութիւն՝ պահպանելով լաւագոյններին՝ անկախ հայեացքներից, առաջադրելով նորերին՝ հնարաւորինս զերծ մնալով «ծանօթ-բարեկամ» նշանակումներից: Կարելի՞ է ենթադրել, որ նախկին վարչապետն այդ ազատութիւնը չի ունեցել: Եթէ այո, ապա որքանո՞վ էր բարոյական Տիգրան Սարգսեանին չտալով լիարժէք գործելու ազատութիւն, նրանից արդիւնք պահանջել: Եթէ նշուած հնարաւորութիւններն ունեցել է նաեւ նախկին վարչապետը, ո՞րն էր վարչապետի սահմանադրութեամբ ամրագրուած իրաւունքների մասին յատուկ շեշտելու Սերժ Սարգսեանի նպատակը:

Բայց առաւել ուշագրաւ է Սերժ Սարգսեանի կաշառքի վերաբերեալ արած դիտարկումը. «Վերաամրագրել ենք կարեւորագոյն առաջնահերթութիւն բոլորի համար. «պետական պիւտճէն անձեռնմխելի է, կաշառքն՝ արգելուած»,- ասել է նա:

Տրամաբանական հարց է առաջանում՝ նախագահն ակնարկում է, որ նախկին կառավարութեանն ու վարչապետին կաշառք տալը եղել է թոյլատրուա՞ծ: Ո՞վ է այդ թոյլտուութիւնը տուել: Եթէ Սերժ Սարգսեանը նման կասկածներ ունի, ինչո՞ւ չի փորձում քայլեր ձեռնարկել, որ երեւոյթին իրական գնահատական տրուի:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱԿ. «Քառեակի Հիմնական Խնդիրը Պէտք է Դառնայ Նախագահի Հրաժարականը»

Նորանշանակ վարչապետ Յովիկ Աբրահամեանը «ժամկէտանց խարդաւանք» է որակում Սերժ Սարգսեանի պաշտօնանկութեանը հասնելու՝ Հայ ազգային կոնգրէսի կոչը՝ ընդգծելով, որ հասարակութեանը հետաքրքրում է բոլոր ուժերի միաւորումը:

Անդրադառնալով ՀԱԿ-ի տարածած յայտարարութեանը, որտեղ ընդդիմադիր ուժը կոչ էր արել քառեակի գործընկերներին չսպասել նոր կառավարութեան ձեւաւորմանը եւ այս պահից արդէն աշխատել Սերժ Սարգսեանի պաշտօնանկութեան ուղղութեամբ, Աբրահամեանը Tert.am-ին ասել է. - «Երբեք չեմ ընդունել ու չեմ ընդունում մութ անկիւնում նստած խառնակչութեամբ զբաղուելու գործելաոճը: Եթէ առանձին մարդկանց թւում է, որ ոչ ոք չի նկատում տողերի մէջ թաքցրած՝ սեփական ուժերից վեր ամբիցիաները, եւ որ իրենք կարող են ուրիշների ձեռքով իրենց համար կարկանդակներ հանել, ապա իսկապէս սխալւում են»:

ՀԱԿ-ի յայտարարութիւնում նշւում էր, որ Հայաստանում իշխանութիւնները ոչ լեգիտիմ են եւ կոռումպացուած, ուստի ի վիճակի չեն երկրի զարգացման որեւէ ծրագիր իրականացնել եւ կորցրել են Հայաստանում կառավարութիւն ձեւաւորելու իրաւունքը:

Կուսակցութիւնը վերահաստատել էր իր պատրաստակամութիւնն ու վճռականութիւնը՝ շարունակելու քառեակի ձեւաչափով իշխանափոխութեանն ուղղուած միասնական ջանքերը եւ արդիւնաւէտ համագործակցութիւնը: Հաղորդագրութիւնում որեւէ քննադատական խօսք չկար անձամբ Յովիկ Աբրահամեանի հասցէին:

## Գագիկ Սարուխանեան-. «Վոլոդիա Աւետիսեանի Գործը Շինծու է»

«Ի պաշտպանութիւն ազատամարտիկ Վոլոդիա Աւետիսեանի» յանձնախմբի համակարգող Գագիկ Սարուխանեանն մամուլի ասուլիսի ժամանակ ասաց, որ պահեստազօրի գնդապետ Վոլոդիա Աւետիսեանը եւ միւս քաղբանտարկեալները կալանաւորուել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի եւ նրա կամակատարների ձեռքով:

«Այս ռակիրովկան իրենց ներսում է կատարուել, եւ մենք ոչ մի ռադիկալ փոփոխութեան չենք սպասում: Մասնաւորապէս Վ. Աւետիսեանի դէպքում բազմիցս ցոյց ենք տուել, որ շինծու գործ է: Մենք մեր պայքարը տարբեր ձեւերով շարունակելու ենք»,- ասաց նա՝ ընդգծելով, որ «Հելսինքեան» յանձնախումբը որպէս քաղբանտարկեալ է ընդունել նրան:



Վոլոդիա Աւետիսեանի պաշտպան յանձնախմբի համակարգող Գագիկ Սարուխանեան

Գագիկ Սարուխանեանը նաեւ նշեց, որ իրենք այս հարցով դիմել են նաեւ նախագահին, թէեւ նախապէս մեծ յոյսեր չէին կապում նախագահի պատասխանի հետ: «Սակայն որպէսզի կատարած լինենք բոլոր քայլերը, դիմել ենք նախագահին, որովհետեւ նա այս պահին, թէեւ ինքնակոչ, բայց ամէն դէպքում նախագահի պաշտօն է զբաղեցնում, Սահմանադրութեան հիմնական կատարողն է եւ պաշտպանը: Նամակում յետադարձ հասցէ նշուած էր, սակայն պատասխան չտրուեց մէկ ամսուայ ընթացքում, կրկին բարձրացանք նամակների բաժին, մեզ բանաւոր ասեցին, որ դատարանները անկախ են, եւ նախագահը իրաւունք չունի խառնուելու՝ խեղաթիւրելով մեր պահանջի իմաստը, իսկ մենք պահանջել էինք իրաւական դաշտ մտցնել, ոչ թէ միջամտել»,-ներկայացրեց նա:

Վերջինիս խօսքով՝ երկրում իրաւական «բեսպրեդել» է, եւ ինքը զարմանում է, թէ ինչով է զբաղւում Մարդու իրաւունքների պաշտպանութեան կոմիտէն. «Կարէն Անդրէասեանը փոխանակ նման բաների վրայ ուշադրութիւն դարձնի, ընկել Հայրիկեանին է կպնում»:

## Աշոտ Մանուչարեան.- «Հայաստանի Կարեւորագոյն Պաշտօնները Աճուրդի են Հանուած»



Նախկին «Ղարաբաղ» կոմիտէի անդամ Աշոտ Մանուչարեան

Ղարաբաղեան կլանը այլ թեկնածուներ էլ ունէր Հայաստանի վարչապետի պաշտօնի համար, եւ զարմանալի է, որ այն, իշխող Հանրապետական կուսակցութեան հետ միասին, իր ընտրութեամբ կանգ առաւ արդէն ներկայացուած թեկնածուի վրայ: Այս մասին Ապրիլի 16-ին կայացած մամուլի ասուլիսին յայտարարել է նախկին «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարեանը:

Խօսելով Յովիկ Աբրահամեանի՝ վարչապետի պաշտօնին նշանակման շուրջ վարկածների մասին, նա ասել է, որ դրանք բազմաթիւ են, «սկսած նրանից, որ Հայաստանի կարեւորագոյն պաշտօնները աճուրդի են հանուած, վերջացրած նրանով, որ արտաքին ուժերը այս կամ այն քաղաքական գիծն են առաջ տանում, որի շրջանակում էլ այս կամ այն քայլերն են իրագործւում»:

Հայաստանում ներկայումս անտանելի պայմաններ են, երկրից ոչ թէ արտագաղթ է տեղի ունենում, այլ տեղահանութիւն, եւ իշխող ՀՀԿ-ն իրեն այդ գործընթացի գործիք է հռչակել, յայտարարել է Մանուչարեանը:

Ըստ նրա՝ ցանկացած քաղաքական ուժ, որը կը համագործակցի իշխող կուսակցութեան հետ, կը դառնայ տեղահանութեան գործիք: «Մենք ծանր վիճակում ենք, եւ իշխանութեան մօտ երկիրը թալանելով զբաղուած քրէական շերտերից ուղերձ ենք ստացել: Ուղերձը հետեւեալ բովանդակութիւնն ունի՝ անկախ ամէն ինչից, երկրում թալանը շարունակուելու է», - ընդգծել է Աշոտ Մանուչարեանը՝ խիստ բացասական գնահատելով Յովիկ Աբրահամեանի վարչապետ նշանակուելը:

«Հայերը 1915թ. ցեղասպանութիւնից յետոյ իրենց պատմութեան երկրորդ վիթխարի ողբերգութիւնն է ապրում, բոլոր կողմերից հայերին տեղահանում են»,- յայտարարել է նախկին «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարեանը:

## «Օրինաց Երկիր» Կուսակցութիւնը Լքեց Կոալիցիան

«Օրինաց երկիր» կուսակցութիւնը կոալիցիոն կառավարութեան մաս չի կազմելու: Այսպիսի որոշում է կայացուել ՕԵԿ քաղաքական խորհրդի նիստում:

«Բաւականին երկար քննարկուեցին վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձութիւնները եւ ՕԵԿ-ը որոշում է կայացրել կոալիցիայից դուրս գալ»,-նիստից յետոյ լրագրողներին յայտնել է Հեղինէ Բիշարեանը՝ յաւելելով, որ խնդրայարոյց եւ ոչ նպատակայարմար է մնալ կոալիցիայում:

ՕԵԿ քվոտայով նախարարները՝ գիւղատնտեսութեան նախարար Սերգօ Կարապետեանը, քաղաքաշինութեան նախարար Սամուէլ Թադեւոսեանը եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմէն Երիցեանը դուրս են եկել ՕԵԿ-ից:

Նրա խօսքով՝ ՕԵԿ առաջնորդ Արթուր Բաղդասարեանը Ապրիլի 25-ին հանդէս կը գայ ասուլիսով եւ կը պատասխանի բոլոր հարցերին:

Ըստ այդմ, Արթուր Բաղդասարեանը Ազգային Անվտանգութեան Խորհրդի քարտուղարի պաշտօնից հրաժարուելու մասին հենց այդ ժամանակ կասի, այնուամենայնիւ, պատգամաւորները համոզուած են, որ Բաղդասարեանը կը հրաժարուի ԱԱԽ քարտուղարի պաշտօնից:

## Սահմանադրական Բարեփոխումների Հանրաքուէն Ծրագրւում է Մինչեւ 2016 Սկիզբ

Իշխանութիւնները ծրագրել են Սահմանադրական բարեփոխումների հանրաքուէն անցկացնել 2015 թուականին, իսկ ամենաուշը 2016-ի սկզբին:

Այս մասին ասաց Հանրապետական կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը՝ պատասխանելով «Ազատութեան» հարցին:

Վերահաստատելով, որ Սերժ Սարգսեանը մտադիր չէ երկրի ղեկին մնալ, Գալուստ Սահակեանը յաւելեց. - «Բայց դա չի նշանակում, որ Հանրապետականը իր հզօրութիւնները կորցնելու է: Բնականաբար, Հանրապետականը շարունակելու է իր գործունէութիւնը»:

Աւելին, ըստ Գալուստ Սահակեանի, հենց Սերժ Սարգսեանը կարող է ստանձնել վարչապետի պաշտօնը, եթէ բարեփոխումների արդիւնքում երկիրը չանցնի կառավարման խորհրդարանական մոդելի:

«Եթէ այնպիսի պայման առաջանայ, երբ որոշուի, բնականաբար կը լինի: Եթէ չցանկանայ, էլի չի ցանկանայ: Բայց պայման է դնում, ասում է՝ որպէսզի լարուածութիւն չմտնի այս Սահմանադրութեան քննարկմանը: Ես այդպէս հակուած չեմ, որ իշխանութեան ղեկին լինեմ», - յաւելեց նա:

«Բարգաւաճ Հայաստանը» ներկայացնող Վարդան Օսկանեանը, յայտարարեց, թէ սահմանադրական բարեփոխումները անընդունելի են, քանի որ առաջնային են երկրում առկայ բազմաթիւ խնդիրները, հիմա տնտեսութիւնն է պէտք բարեփոխել:

Գալուստ Սահակեանն արձագանքում է՝ Վարդան Օսկանեանին մի հաւատացէք.- «Ես խնդրում եմ, դուք բոլորդ հաւատացէք միայն այն դէպքում, երբ խօսում է Գագիկ Ծառուկեանը: Անմշակ քաղաքական գործիչների յայտարարութիւններին չի կարելի հաւատալ»:

Հայ ազգային կոնգրէսում եւ «Ժառանգութիւնում» տարակուսած են՝ ինչու հենց ներքաղաքական լարուած այս փուլում իշխանութիւնները շրջանառութեան մէջ դրեցին բարեփոխումների նախագիծը:

Կոնգրէսի խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը անհեթեթ է որակել այս իրավիճակը: «Ժառանգութիւնից» Ռուբիկ Յակոբեանն էլ ասում է՝ իրենք միշտ էլ կողմ են եղել խորհրդարանական համակարգին անցնելուն, բայց հիմա հարցեր են առաջացել. - «Եթէ նոյնիսկ վաղուց էին նախատեսել, միեւնոյնն է՝ այն, ինչ կատարւում է այսօր մեր պետութեան մէջ, ինչ լարուածութիւն որ կայ, չեմ կարծում, որ այս պահին այդ հարցը պէտք է դրուի քննարկման»:

Սերժ Սարգսեանը հեշտութեամբ կը հրաժարուի իր խոստումներից, թէ պաշտօն չի ստանձնելու, ասել էր Լեւոն Զուրաբեանը:

Ռուբիկ Յակոբեանը յաւելեց.- «Իշխանութեան վերարտադրութիւնը միայն անձով չէ, իշխանութեան վերարտադրութիւնը նաեւ համակարգով է»:

Խորհրդարանի ոչ իշխանական ուժերից միայն Դաշնակցութիւնն է ողջունում Սերժ Սարգսեանի խոստումը՝ չառաջադրուել նախագահի կամ վարչապետի պաշտօնում: Դաշնակցական պատգամաւոր Աղվան Վարդանեանի խօսքով, նախագահը ճիշտ ժամանակին արեց այս յայտարարութիւնը. - «Հաւատը կեանքի այլ չափանիշ է: Ես ողջունում եմ նախագահի նման յայտարարութիւնները, կապրենք, կտեսնենք»:

# ԼՈՒՐԵՐ

## Բրիտանական Թերթը Պնդում Է՝ Թուրքիան Աջակցել Է Քեսապի Գրոհին



Հայաբնակ Քեսապի ռմբակոծուածտուներէն մին

Բրիտանական «Թելեկրաֆ» թերթը գրում է, որ Թուրքիան աջակցել է իսլամիստ գրոհայիններին Սիրիայի հայկական Քեսապ բնակավայրի վրայ յարձակուելու ժամանակ՝ իր պնդումները հիմնաւորելով Սիրիայի ընդդիմութեան եւ ականատեսների վկայութիւններով:

Ըստ հրապարակման՝ Քեսապի գրոհը պլանաւորուել է ամիսների ընթացքում: Թուրքիայի իշխանութիւնները օժանդակել են ապստամբ խմբաւորումներին՝ թոյլատրելով նրանց հատել ուժեղ ռազմականացուած հսկողութեան տակ գտնուող թուրքական սահմանային անցակէտը, որի դիրքը ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունէր գրոհի յաջողութեան համար:

«Թուրքիան մեզ մեծ լաւութիւն արեց: Մենք կարիք ունենք ռեժիմին հարուածելու տարբեր ուղղութիւններով, եւ դա ծովափնեայ ուղղութեան միակ ճանապարհն էր, այնպէս որ դա մեծ օգնութիւն էր»,- գրոհայիններից մէկի այս խօսքերը մէջբերուած են Telegraph-ի Ապրիլի 14-ի հրապարակած յօդուածում:

Բրիտանական պարբերականը նշում է, որ Քեսապը Սիրիայի էթնիկ փոքրամասնութիւն կազմող հայերի հինաւուրց բնակավայր է, որը համեմատաբար հեռու է հակամարտութիւնից, բայց գրոհի օրը՝ Մարտի 21-ի առաւօտեան, Քեսապի բնակիչները ճչալով ու լաց լինելով փախչում էին իրենց տներից:

«Մենք փախչում էինք հրետակոծութեան ձայների տակ: Անգամ հագնուելու ժամանակ չկար»,- պատմել է 45-ամեայ մի տղամարդ, ով խնդրել է չբացայայտել իր իսկական անունը:

Բեդրոս անունով ներկայացած այդ մարդու պատմելով իր հարազատներից մէկը այդ գիշերը եղել է Թուրքիայի սահմանային անցակէտերից մէկում եւ տեսել է, որ սահմանին գրոհայինները կանգնած են թուրքական բանակի հետ ու քիչ անց այնտեղից սկսուել է հրետակոծութիւնը:

Երկու օր անց Քեսապը ամբողջովին գտնւում էր իսլամիստ խմբաւորումների վերահսկողութեան տակ, որոնց շարքերում է նաեւ Ալ-Ղաիդայի հետ կապ ունեցող Ալ-Նուսրա խմբաւորումը:

Թուրքիայի արտգործնախարարութիւնը հաղորդագրութիւն էր տարածել՝ պաշտօնապէս հերքելով Թուրքիայի օժանդակութիւնը գրոհայիններին: Այդ լուրերը Թուրքիայի արտգործնախարարութիւնը համարել է անհիմն եւ ստայօդ:

Սակայն Telegraph-ը նշում է, որ Human Rights Watch իրաւապաշտպան կազմակերպութեան փաստահաւաք ուսումնասիրութեան արդիւնքները հակառակն են ցոյց տալիս:

«Անհնարին է, որ այդ խմբաւորումները Սիրիա մտնէին ու թուրքերը չիմանային այդ մասին»,- բրիտանական պարբերականին ասել է Լիբանանում Human Rights Watch-ի ուսումնասիրող Լամա Ֆակիհը՝ նշելով, որ նրանց օգտագործած ճանապարհներից մէկը պաշտօնական սահմանն է, որտեղ, բնակիչների պատմելով՝ թուրքական ռազմական ներկայութիւն կայ:

Քեսապի գրոհը Օսմանեան Թուրքիայում հայերի ջարդերի՝ 1909-ի կոտորածների ու 1915-ի ցեղասպանութեան մռայլ յիշողութիւններ արթնացրեցին, գրում է Telegraph-ը, որի հետ զրոյցում Լիբանանում ապաստան գտած Բեդրոսն ասել է.- «Մենք միշտ մտածում էինք, որ թուրքերը մի օր կը յարձակուեն մեր վրայ, եւ յստակ է, որ Քեսապի գրոհին Թուրքիան օգնել է: Յարձակուողները եկել են Թուրքիայի տարածքից»,- պնդել է նա:

Բրիտանական պարբերականը գրում է, որ Քեսապն ասես Սիրիայի ռեժիմի «Աքիլլեսեան գարշապարը» լինի: Այն պաշտպանում էր ծովափնեայ Լաթաքիան, ուր շատ ալաւիթներ են ապրում: Կրօնական այս նոյն փոքրամասնութիւնից է նաեւ նախագահ Ասադը:

Ալ- Նուսրան եւ Իսլամական ճակատը խորացել են մի տարածքում, որը ճանապարհ է բացում դէպի ծովափնեայ շրջանը, ինչպէս նաեւ հնարաւորութիւն է տալիս կատաղի մարտերով գրաւել տարածքի ամենաբարձր կէտը՝ Observatory 45 կոչուող բարձունքը:

«Դուք կարող էք հասկանալ, թէ ինչու էր մեզ պէտք վերցուել Քեսապը»,- ասել է իսլամական ճակատի դիւանագիտական ներկայացուցիչ դոկտոր Մահմուդը.- «Դուք կարող էք տեսնել ինչ տեղի ունեցաւ: Հիմա ռեժիմը շատ վախեցած է»:

HayastanInfo.net

## Անջէյ Կասպշիկ.- «Շփման Գծում Իրավիճակը Լարուած Է

Իրավիճակը հայ-ադրբեջանական զինուած ուժերի շփման գծում լարուած է. կարծում է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէյ Կասպշիկը: Նա ադրբեջանական «Թրանտ» գործակալութեանն ասել է, որ այդ մասին վկայում են Ադրբեջանի եւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնների եւ ռազմական կառոյցների հաղորդագրութիւնները:



ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէյ Կասպշիկ

Նրա խօսքով՝ այդ տեղեկութիւններում հաղորդւում է փոխհրաձգութեան բազմաթիւ դէպքերի եւ աւելի լուրջ խախտումների մասին, որոնք հանգեցնում են կորուստների, որոնցից իւրաքանչիւրը ողբերգութիւն է այդ զոհերի ընտանիքների համար:

Անձնական ներկայացուցչի խօսքով՝ համապատասխան կառոյցների աջակցութեամբ հայ-ադրբեջանական սահմանի եւ շփման գծի երկայնքով մշտադիտարկումներ են անցկացւում: Այդ մշտադիտարկումների մասին զեկոյցները ներկայացւում են ԵԱՀԿ գործող նախագահին եւ Մինսկի խմբին:

«Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորումը երկրորդ պլան չի մղւում այլ երկրներում տեղի ունեցող իրադարձութիւնների ֆոնին»,-ասել է Կասպշիկը՝ պատասխանելով հարցին, թէ պէտք է բարձրացնել ուշադրութիւնը հակամարտութեան կարգաւորման հանդէպ՝ Ուկրաինայի յայտնի իրադարձութիւններից յետոյ:

«ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հետեւողական փորձում են հակամարտող կողմերին նոր գաղափարներ ներկայացնել՝ կարգաւորման գործընթացն առաջ տանելու համար: Անցեալ շաբաթ միջնորդները երկու հանդիպում ունեցան Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարների հետ, մէկ հանդիպում էլ նախագահների հետ՝ արտգործնախարարների մասնակցութեամբ»,-ասել է Կասպշիկը:

Նրա խօսքով՝ բոլոր ջանքերն ուղղուած են հակամարտութեան կարգաւորմանն ու լարուածութեան թուլացմանը: Նա նշել է, որ համաձայն գործող նախագահի մանդատի՝ ինքը պարբերաբար այցելում է տարածաշրջան: «Ես եւ իմ թիմը պարբերաբար այցելում ենք այն տարածքներ, որոնք տուժել են հակամարտութեան ընթացքում՝ ԵԱՀԿ գործող նախագահին եւ Մինսկի խմբի համանախագահներին նոր տեղեկութիւններ հաղորդելու նպատակով»,-ասել է նա:

## Անքարա Դժգոհ Ծերակոյտի Ընդունած՝ Ցեղասպանութեան Բանաձեւէն

Շարունակուածէջ 1-էն

ներս շրջանառութեան մէջ դրուած՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող օրինագիծերուն հետ:

«Իրավիճակի մասին ես զրուցեցի պարոն Քերրիի հետ. ան ըմբռնած է մեր մտահոգութիւնները», - թրքական լրատուամիջոցներուն յայտարարած է Դաւութօղլու, աւելցնելով թէ, չակնկալեր, որ ԱՄՆ-ի կամ Միացեալ Նահանգներու նախագահին ու անոր վարչակազմին կողմէ Թուրքիան անհանգստացնող քայլեր կը կատարուին:

«Թուրքիոյ կառավարութիւնը անհրաժեշտ միջոցներ կը ձեռնարկէ Թուրքիային անհանգստացնող նախաձեռնութիւններու դէմ: Մենք յոյս ունինք, որ անոնք չեն ընդունուիր», -ըսած է Դաւութօղլու:

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան մամուլի խօսնակ Ճէն Փսաքի ամենօրեայ իր իր ասուլիսի ժամանակ լրագրողներու խնդրանքով մեկնաբանելով Ծերակոյտի Յանձնաժողովի ընդունուած բանաձեւը յայտարարեց, որ իրենց դիրքորոշումը արդէն երկար ժամանակէ յայտնի է:

«Մենք յստակօրէն որպէս պատմական փաստ կը ճանչնանք եւ կը սգանք մէկուկէս միլիոն հայերու կորուստը, որոնք կոտորուած են կամ մահուան աքսորի քշուած՝ Օսմանեան կայսրութեան վերջին օրերուն: Այս սարսափազդու իրադարձութիւնները յանգեցուցած են 20-րդ դարու դաժանագոյն վայրագութիւններէն մէկուն: Միացեալ Նահանգները կ՛ընդունի, որ այդ իրադարձութիւնները կը շարունակեն հսկայական ցաւ պատճառել Հայաստանի ժողովուրդին եւ հայկական ծագում ունեցող մարդկանց, ինչպէս եւ մեզ բոլորիս, որոնք կը կիսեն համամարդկային արժէքները», - յայտարարեց Փսաքի:

Միեւնոյն ժամանակ, խօսնակը խուսափեցաւ յստակ պատասխանել այն հարցին՝ թէ արդեօք ամերիկեան կառավարութիւնը կը ճանչնա՞յ այդ իրադարձութիւնները որպէս ցեղասպանութիւն, ըսելով, թէ արդէն յայտարարած է՝ թէ ինչ է Միացեալ Նահանգներու դիրքորոշումը:

Լրագրողները հետաքրքրուեցան նաեւ հայ - թուրքական արձանագրութիւններու եւ հայ - թրքական յարաբերութիւններու բարելաւման գործընթացի մասին նորութիւններով: Ճէն Փսաքի յայտարարեց, որ իրենք կը շարունակեն կոչ ընել երկու կողմերուն միասին աշխատելու՝ հասնելու համար փաստերու լիակատար, անկեղծ եւ արդար ճանաչման:

«Հակառակ որ արձանագրութիւններու հարցով այժմ յառաջընթաց չկայ, մենք կը նկատենք, որ երկու կողմն ալ կը շարունակեն հաւատարիմ մնալ յարաբերութիւններու նորմալացման գործընթացին եւ կողմերէն որեւէ մէկը ետ չէ քաշուած», - յայտարարեց Ճէն Փսաքի:

# Հարցազրոյց Արթիւր Սաքունցի Հետ «Ապահովութեան Երաշխիքներ Իրենց Կատարած Յանցագործութեան Համար»

*Հելսինկեան քաղաքացիական ասամբլէայի Վանաձորի գրասենեակի ղեկավար, իրաւապաշտպան Արթուր Սաքունցի հետ զրուցել ենք Սահմանադրութեան փոփոխութիւնների նոր հայեցակարգի աշխատանքային տարբերակի մասին:*

-Պարոն Սաքունց, վարչապետի նշանակումից մի քանի օր առաջ մեր սեղանին է Սահմանադրութեան փոփոխութիւնների նոր հայեցակարգի աշխատանքային տարբերակը: Ինչո՞ւ այն հիմա դրուեց քննարկման: Շատերն այս օրերին երկրում տեղի ունեցածը բնորոշում են իշխանութեան սահուն անցում: Ըստ Ձեզ՝ ի՞նչ է տեղի ունենում:



իրաւապաշտպան Արթուր Սաքունց

*-Նախ յիշենք, որ Սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովի ստեղծման մասին Սերժ Սարգսեանի հրամանը եղել է 2013-ի Սեպտեմբերի 4-ին՝ Մոսկուայում Հայաստանի՝ ՄՄ-ին անդամագրուելու յայտարարութիւնից մէկ օր յետոյ: Չգիտեմ՝ պատահակա՞ն են այս երկու իրադարձութիւնները համընկնում, բայց յիշում եմ, որ մինչեւ Սեպտեմբերի 3-ն էլ խօսում էին սահմանադրական փոփոխութիւնների մասին: Փոփոխութիւնների այս հայեցակարգում երկու հիմնական նորութիւն կայ: Առաջին՝ ըստ հայեցակարգի՝ առաջարկւում է լիովին անցում կատարել խորհրդարանական կառավարման համակարգի, որի դէպքում վարչապետը պաշտօնը ստանձնում է խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում, այսինքն՝ նախագահը որեւէ մասնակցութիւն չի ունենում կառավարութեան ձեւաւորման մէջ: Պարզ է, որ քաղաքական մեծամասնութեան կողմից պէտք է վարչապետ ընտրուի եւ կառավարութիւն ձեւաւորուի, իսկ նախագահին տրւում է ընդհանրապէս հայեցողական դիրք:*

*Երկրորդ հարցը մարդու իրաւունքների կառավարմանն է վերաբերւում: Առաջարկւում է յստակօրէն սահմանել սոցիալական իրաւունքները, աւելի դեկլարատիւ բնոյթից, շատ աւելի կոնկրետ եւ հիմնարար իրաւունքներից առանձնացուի առանձին բլոկով: Այստեղ ինձ աւելի շատ հետաքրքրում է այն, որ շատ մեծ է անդրադարձը մարդու իրաւունքների սահմանափակումների յստակ սահմանմանը, այսինքն՝ խնդիրը դրուած է, թէ որոնք են մարդու իրաւունքների սահմանափակման սահմանները: Սա հետաքրքիր է, որովհետեւ ընդհանրապէս սահմանափակումների հարցը եւրոպական կոնվենցիայով էլ է ամրագրուած, որ ժողովրդավարական պետութեանը բնորոշ պայմաններում օրէնքով սահմանուած կարգով կարող է սահմանափակումներ լինեն որոշակի իրաւունքների, այդ թւում՝ հասարակական կարծիքի, խօսքի ազատութեան եւ այլնի հետ կապուած: Ժողովրդավարական երկրների պայմաններում դա անհրաժեշտ է հասարակական կարգի, պետական անվտանգութեան պահպանման համար, բայց Հայաստանի պայմաններում, երբ ունենք փաստացի մէկ ներկուսակցական քաղաքական համակարգ, խորհրդարանական կառավարմանն անցնելու պարագայում այդ մէկ կուսակցութիւնը, տուեալ դէպքում՝ ՀՀԿ-ն, որը տիրապետում է նիւթական, ֆինանսական եւ մարդկային ողջ ռեսուրսներին, իր իշխանութիւնն օրինական ձեւով նաեւ գործադիրի մասով կը կիրառի, որովհետեւ նախագահն արդէն չի ունենայ այդպիսի լիազօրութիւններ, ինչպէս այսօր, իսկ վարչապետն անընդհատ կ՛ընտրուի, քանի որ վարչապետի վրայ սահմանափակում չկայ: Եւ եթէ նախագահի դէպքում երկու անգամից աւելի չկար ընտրուելու հնարաւորութիւն, ապա վարչապետի հարցում նման սահմանփակումներ չեն կարող լինել: Ինքնին եթէ վերանայենք Հայաստանի քաղաքական իրողութիւնը, ապա քաղաքական կառավարումն իսկապէս գործադիրի նկատմամբ պառլամենտական վերահսկողութեան բարձր աստիճան է նշանակում: Բայց այսօրուայ մեր քաղաքական մշակոյթի առումով, փաստացի ուժերի յարաբերութեան առումով դա կը լինի ուղղակի միակուսակցական համակարգի ամրապնդում Սահմանադրութեան մակարդակով եւ երկարաժամկէտ, յաւերժ ապահովում:*

*Շատ կարեւոր են նաեւ դատական իշխանութեան հետ կապուած հարցերը, որ արդարադատութեան խորհուրդը դառնայ դատական իշխանութեան իրական ինքնակառավարման մարմին: Կարեւոր է, որ դատական իշխանութեան ձեւաւորման մէջ դատական իշխանութիւնը մասնակցի, ոչ թէ նախագահական կամ գործադիր իշխանութեան մարմինները: Այստեղ ինձ համար յստակ չէ, քանի որ այսօրուայ իրավիճակից դուրս գալու հիմնական երաշխիքն իրապէս անկախ դատական իշխանութեան ձեւաւորումն է, որը, ցաւօք սրտի, գոյութիւն չունի, բայց սահմանադրական փոփոխութեամբ էլ չեմ տեսնում՝ ինչպէս են դա իրականացնելու:*

*Սա առաւել թոյլ կողմերից մէկն է, բայց հայեցակարգում էլ բացակայում է այն, թէ վերազգային մարմինների հետ կապուած հարցերը ինչպէս են լուծուելու: Մասնաւորապէս, ի՞նչ պատասխան ենք մենք ունենալ ՄՄ անդամագրուելուց յետոյ ՄՄ վերազգային մարմինների կողմից ընդունուած որոշումների հետ կապուած, եւ այս տեսակէտից մտահոգութիւնս այն է, որ այսօրուայ սահմանադրութիւնը առնուազն յստակ ասում է, որ պէտք է ՄՄ կողմից առաջարկուող որոշումները լինեն ՍԴ քննութեան առարկայ, բայց կան որոշումներ, որոնք միջազգային պայմանագրի կարգավիճակ ունեն, որը իրապէս որոշ խնդիրներ է առաջացնում: Հիմա այս սահմանադրութիւնը փոփոխուելուց յետոյ ի՞նչ լուծումներ են տրուելու: Զուտ իրաւական կարգաւորման տեսակէտից յայտնի չէ, չնայած մեր ՍԴ պրակտիկան 2013-ին, 2008-ին եւ ընդհանրապէս միւս ընտրութիւններին եւ այլ գործերով ցոյց է տալիս, որ քաղաքական զգայուն թեմաների ժամանակ, ցաւօք, միանշանակ կանխատեսելի որոշումներ չի ընդունում եւ վարքագիծ չի դրսեւորում: Շատ հետաքրքիր է, թէ ինչպէս են կարգաւորուելու ՍԴ եւ գործադիր*

Շար.ը էջ 18



# ՔԵՍԱՊ, ՔԱՆԴ, ԳԱՂԹ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԽԱՂԱՔԱՐԹԵՐ

*ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ*

*«Լեռը մուկ մը ծնա՜ւ...»: Վստահաբար բոլորին ծանօթ է այս զաւեշտալի արտայայտութիւնը, որ թերեւս առաջին անգամ լսողին մօտ խնդուք կամ ծիծաղ կը յառաջացնէ, բայց լուրը այդպէս ալ ծիծաղելի չէ: Այո՛, լեռը մուկ մը ծնաւ..: Ուրեմն այսպէս, ժողովրդավա՜ր Թուրքիոյ խրոխտ վարչապետը, խափանելու համար հակառակորդներուն ընտրական նկրտումները եւ լռեցնելու համար ազատ խօսք ու մտածում, ուղղակիօրէն սարսափած վերջերս տեղի ունեցած եւ ապագայ ընտրական քարոզարշաւէ եւ արդիւնքներէն, Թուրքիոյ տարածքին անակնկալօրէն արգիլել տուաւ Twitter-ն ու Youtube-ը, մոռցնել տալով «Կէզի Այգի»-ին տակաւին կոտտացող տխուր յիշատակները:*

*Ներկայ դրութեամբ, ամբողջ աշխարհին ծանօթ է այն, որ Միջին Արեւելքը թատերաբեմ է պատերազմներու, ուր ամէն օր տասնեակ անմեղներ կը զոհուին եւ աշխարհի մեծամեծներ, ըլլան անոնք նախագահ, վարչապետ կամ դիւանագէտ, կը դիտեն Սուրիոյ մէջ մահ հնձող իրական դիպաշարները՝ մեծ անտարբերութեամբ, շարունակելով իրենց աւանդական ԱՌՈՒԾԱԽ-ԳԻՆԱՐԲՈՒՔԸ՝ փոքր ժողովուրդներու հաշւոյն, քմահաճօրէն:*

*Արաբական աշխարհը կիզող «գարուն»-ը եթէ երէկ խանձեց շատ մը արաբական երկիրներ, ուր հարիւր հազարներ մահացան ու աքսորուեցան, սակայն այսօր նոյն «գարնան քամի»-ին զոհը Սուրիոյ ժողովուրդն է, որ երեք տարիներու ծանր տառապանք ապրելէ ետք, արդէն ներկայիս թեւակոխած է չորրորդ տարին, եւ արիւնը կը հոսի ամենատխուր պայմաններու տակ, ամբողջ Սուրիոյ տարածքին, այրելով չորն ու թացը: Տիրող անորոշութեան մէջ, զարմանալիօրէն, տակաւին յառաջ կը քշեն «ժողովրդավարութեան» յոգնած լոզունգը եւ այս հովանոցի տակ որպէ՜ս թէ պաշտպանելու համար անիրաւուածներուն իրաւունքը..:*

*Հաւատա՞նք, բայց ինչպէ՞ս... հրդեհո՞վ, արիւնո՞վ, քանդումո՞վ, թէ իրապէս ժողովրդավար օրինաւորութեամբ..: Բաւական չէ՞ մինչեւ հիմա թափուած արիւնը արդեօք:*

*Մեզի՝ հայերուս համար, քաղաքական գործիչներու աժան ու բերնի ծամոց «շան քարոզներ»-ը այլեւս ըլլալով ծիծաղելի, զարմացնո՜ղ են նաեւ...: Որո՞ւ կ՚ուզեն խաբել արդեօք, մե՞զ, թէ իրենց ժողովուրդները, որոնց համար վերջին հո՜գ է Արեւելքը եւ անոր բնակչութիւնը:*

*Արեւմուտքի մէջ, ցաւ ի սիրտ, կը գտնուին մարդիկ, որոնք մինչեւ օրս չեն ալ գիտեր, թէ քարտէսի վրայ ո՞ւր է Լիբանանը, ո՞ւր է Սուրիան, ո՞ւր է Արցախը կամ Հայաստանը:*

*Քաղաքական կարգ մը գործիչներ համոզուած ենք, որ պարզապէս աժան փերեզակներ են... փողոցային «չէրչինէ՜ր», որոնք խօ՜սք կը ծախեն միայն, ժողովուրդներու եւ մարդկանց ուշադրութիւնները հեռացնելով հիմնական խնդիրներէն, սուտով ու կեղծիքով խաբելով զանոնք, միայն թէ հասնին իրենց «փեթրօտոլարներու» երազանքներուն ու զէնքի առք ու վաճառքին եւ կուտակեն լեցուիլ չգիտցող գրպանները..:*

*Գիտութեան ու տեղեկատուական միջոցներու առատութեան այս պահուն, ափսոս, որ մեծամեծ արկածախնդիրներ չեն նշմարեր «մարդու սիրտ ուտող» հերոսները, հեռատեսիլի յայտագիրներու եւ դիպաշարներու մէջ մարդու գլուխ ու վիզ կտրող կտրիճները, եկեղեցի եւ աղօթատեղի քանդող իբր թէ աստուածավա՜խ փրկիչները: Անոնք, երեւելի տիտաններ, այս բոլորը տեսնելով հանդերձ կը շարունակեն զինե՛լ նմանօրինակները, իւղ թափելով կրակին վրայ, որպէսզի աւելի ու աւելի բորբոքի կացութիւնը: Անոնք, եթէ իրապէս նախանձախնդիր են հաստատելու համար ժողովրդավարութիւն, ինչո՞ւ չեն մտածեր երկխօսութեան ճանապարհով լուծելու ամէն խնդիր, խնայելու համար հազարաւոր կեանքեր..:*

*Վերջին օրերուն, երբ տակաւին Հալէպի մէջ բարձրացող ցաւերը կը կոտտային, ահա՛ ամբողջ հայութեան համար ընդվզումի նոր ալիք մը բարձրացաւ, Քեսապի եւ քեսապահայութեան գոյութեան սպառնացող վտանգին պատճառով: Կասկած կ՚ուզէ՞... բազմազգեան ահաբեկիչներ, զինուած ամենաարդիական զէնքերով շրջան կը հասնին Թուրքիոյ սահմաններէն, բնականաբար եւ անպայմանօրէն քաջալերանքովը թրքական իշխանութիւններուն, ահաբեկելու համար խաղաղ հայ բնակչութիւնը:*

*Շրջան հասնող խմբակներուն մէջ են թրքալեզու բազմահազար*

# ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ (MISINFORMATION) ՔԵՍԱՊԻ ՅԱՐՑՈՎ

*ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ*

*Ապատեղեկատուութիւնը հինէն ի վեր եղած է ազդու զէնք պատերազմող կողմերու միջեւ, «չեղածը եղածի պէս» ծախելու համար աշխարհին:*

*Ճորճ Պուշեան Ամերիկայի եւ Սատտամ Հիւսէյնեան Իրաքի միջեւ դիտմամբ ստեղծուած պատերազմին ծնունդ տուող պատճառներէն ամենէն յիշատակելին է համատարած կործանումի զէնքերու (Weapons of Mass Destruction) գրպարտութեան կամ խաբկանքին կամ սուտին ապատեղեկատուութիւնը, որ Ամերիկայի այդ օրերու ղեկավարութեան կողմէ յղացուեցաւ եւ գործակից լրատուամիջոցներու կողմէ տարածայնուեցաւ: Մարդկային արդարութեան կողմէ տակաւին չամբաստանուած եւ չդատուած Պուշն ու գործակիցները այդ կործանարար պատերազմը մղեցին, պատճառելով միլիոնաւոր զոհեր եւ մսխելով միլիառաւոր տոլարներ, համատարած կործանումի զէնքերու ապատեղեկատուութեամբ աշխարհի աչքին փոշի ցանելով...:*

*Օրերս, Քեսապի հայութեան տեղահանումէն ետք, ապատեղեկատուութիւնը յանկարծ գործի լծուեցաւ գործածելու, շահագործելու եւ օգտագործելու համար հայ-թուրք սուր թշնամութեան իրավիճակը: Քանդուած եկեղեցիներու եւ հայ սպանեալներու նկարներ (արուեստական (animated) կամ ուրիշ տեղերէ նկարուած) ողողեցին եթերի վրայ դիտուած պաստառներն ու լրագրական միջոցները, որպէսզի քրիստոնեայ աշխարհին եւ հայութեան տային ահռելիօրէն ողբերգական դարձած վիճակի մը պատկերը: Սուրիոյ վարչակարգին ծառայող մարդիկ կոչուեցան գործի լծուելու, որպէսզի ընդդիմադրութեան հազցուէր հայութեան եւ քրիստոնէութեան դէմ գործելու դիմակը:*

*Այո՜, բոլորս ալ որպէս հայ մեր մէջ տեղ մը պահուած ոխ ու ատելութիւն ունինք թուրքին դէմ. այն թուրքին, որ տակաւին չ՚ամչնար իր արիւնուշտ եւ արիւնարբու անցեալէն եւ դեռ կը յանդգնի ուրանալ Հայկական Ցեղասպանութիւնը՝ գործած իր ոճիրը:*

*Բայց հայը որեւէ տեղ, ըլլա՛յ Սփիւռքի, Սուրիոյ մէջ թէ այլուր, իր արդար քրտինքով եւ աշխատանքով վաստկած է իր իրաւունքը նիւթապէս հանգիստ կեանք մը ունենալու, եւ ան երբեք հոս կամ հոն պետական պաշտօն ստանալով կամ պաշտօնի նշանակուելով չէ օգտուած եւ պարտաւոր չէ ծառայելու իշխանաւորի քմահաճոյքներուն եւ ցուցմունքներուն:*

*Ահա թէ ինչո՞ւ, առաջին օրերուն ապատեղեկատուութեան զոհ դառնալէ ետք, հայկական տարբեր հեռատեսիլի կայաններ եւ ազգային պատասխանատու մարմիններ անդրադարձան թէ վնասաբեր է ապատեղեկատուութեան զոհ դառնալը եւ կը փորձեն հիմա հանդարտեցնել կիրքերը: Ըստ Քեսապի քաղաքապետ Վազգէն Չափարեանի կողմէ տարածուած լուրին, ո՛չ եկեղեցի քանդուած է եւ ո՛չ ալ հայ սպաննուած է Քեսապի մէջ: Հայկական Ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին կանգնած ենք արդէն եւ թուրքը կը շարունակէ մեզ մեղադրել, թէ մենք չափազանցած ենք ատենօք մեզի պատահած ջարդերուն տալով «ցեղասպանութիւն» անուանումը: Թոյլ չտանք որ ուրիշին շահերը պաշտպանելով մենք մեզի վնասենք, չափազանցութիւն կիրարկելով Քեսապի մէջ պատահած դէպքերուն հանդէպ, եւ այդ ձեւով թուրքին «հացին իւղ քսելով»: Քեսապի հայութեան վիճակը արդէն գէշ է: Մենք մեր խօսքերով, գրութիւններով եւ արարքներով պէտք չէ աւելի վատացնենք անոնց գէշ վիճակը:*

*զինեալներ: Անոնք, յստակ է եւ հաստա՛տ, որ կը վայելեն թրքական պետականութեան զօրաւոր նեցուկը, մի քանի ցցուն ու աչք ծակող պատճառներով: Թուե՛նք.*

*Առաջին. Թուրքիան, հակառակ անոր, որ կը գտնուի ՆԱԹՕ-ի կազմի մէջ, բացայայտ է, որ կամաց-կամաց կը պատրաստուի ուշ կամ կանուխ դիմաւորելու «թրքական գարուն» մը, երբ իր հողատարածքին վրայ կը հաշուէ միլիոնաւոր անիրաւուած քիւրտեր, ալեւիներ, իսլամացուած, քրտացուած եւ ալեւիացուած հայեր ու ասորիներ, որոնք ոչ թէ տարիներէ, այլ դարերէ ի վեր կը տառապին թուրքի լուծին տակ եւ կարօտ են ԱԶԱՏՈՒԹԵԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ եւ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ, որոնք խլուած են իրենցմէ: Այս պարագային կը զարմանանք, թէ ինչո՞ւ կը լռեն Արեւմտեան բախտախնդիրները..:*

*Երկրորդ. Թուրքիոյ համար Քեսապի եւ շրջանի վրայ կատարուած յարձակումը կը հետապնդէ*

Շար.ը էջ 17



# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԵՓԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

*ԷԴՈՒԱՐԴ ԱՑՎԱԶԵԱՆ*

*Մարտի 26-ից սկսած վրացական մամուլում շրջանառւում է այն ապատեղեկատւութիւնը, որի համաձայն Թբիլիսիի ռուսաստանեան հիւպատոսարանում Ջաւախքահայերին մասսայական ռուսական անձնագիր են բաժանում: Ապատեղեկատւութեան հեղինակը Վրաստանի Նախկին Նախագահ Զվիադ Գամսախուրդիայի որդի Կոնստանտին Գամսախուրդիան էր, ով վրացական լրատուամիջոցներից մէկին յայտնեց, որ իբր, թէ «Թբիլիսիում Ռուսաստանի Նախկին դեսպանատան դիմաց, որն այժմ գործում է որպէս հիւպատոսութիւն, Ջաւախքում բնակուող էթնիկ հայերի հերթ է գոյացել: Նրանց շնորհւում են Ռուսաստանի Դաշնութեան անձնագրեր»:*

*Նա նաեւ նշել է, թէ Վրաստանի տարածքում ապրող էթնիկ հայերի մեծամասնութիւնն արդէն իսկ ռուսական անձնագրեր է ստացել:*

*Նման յայտարարութիւնը վրացական հասարակութեան մէջ կարծես ռումբի պայթիւն առաջացրեց եւ վրացական մամուլը հեղեղուեց հակահայկական գրառումներով: Տուեալ ապատեղեկատւութեան ջահակիրը դարձաւ apsny.ge կայքը, որի էջերում էլ առաջին անգամ զետեղուել էր Կոնստանտին Գամսախուրդիայի անհիմն յայտարարութիւնը, որ իբր, թէ Ջաւախքահայերին մասսայական շնորհւում են Ռուսաստանի Դաշնութեան անձնագրեր: Տուեալ լրատուամիջոցը ոգեւորուելով իր տարածած ապատեղեկատւութեան առաջացրած աժիոտաժից սկսեց մեկնաբանութիւններ հաւաքել Վրաստանի տարբեր քաղաքական գործիչներից եւ փորձագէտներից աւելի լարելու հասարակական կարծիքը ի վնաս Ջաւախքահայերի: Զուգահեռներ անցկացուեցին Աբխազիայի եւ Ղրիմի բնակիչներին Ռուսաստանի դաշնութեան անձնագրերի շնորհման հետ կապուած:*

*Տուեալ լրատուական կայքը այնքան բորբոքեց իրավիճակը իր էջերում գտած ապատեղեկատւութեան շուրջ, որ անգամ պաշտօնական անձինք մեկնաբանելով տուեալ սուտը ոչ հերքեցին, սակայն ոչ էլ հաստատեցին Ջաւախքահայերին ռուսական անձնագրերի մասսայական շնորհումը:*

*Աւելի ցաւալի էր տեսնել տուեալ ապատեղեկատւութեան ներքոյ ընթերցողների մեկնաբանութիւնները, որոնք բացարձակ հակահայ դրսեւորում ունէին եւ գիտակցաբար քարոզում էին հայատեացութիւն եւ ազգամիջեան թշնամանք:*

*Կարելի է մի փոքր հասկանալ վրաց հանրութեան որոշ մասի մտավախութիւնը Աբխազիայի եւ Օսեթիայի շուրջ տեղի ունեցածով, սակայն այստեղ եւս հարկ է նշել, որ 90-ական թուականներին երբ երկրում ամէն ինչ փլուզւում էր, չկային ուժային կառոյցներ ու անջատողական տրամադրութիւններ էին տիրում ամենուր, Ջաւախքահայերը չնայած բազմաթիւ խնդիրների կանգնեցին Վրաստանի պետականութեան կողքին: Ազգայնական ուժերը Թալանչի աւազակախմբերի գլխաւորութեամբ ամէն ինչ արեցին լարելու իրավիճակը Ջաւախքում, բայց այստեղ եւս սադրանքներին տրուեց արժանի պատասխան եւ իրավիճակը կամաց-կամաց խաղաղուեց:*

*Ջաւախքի հայ ազգաբնակչութիւնը իր հաւատարմութիւնը Վրաստանին ցուցաբերեց նաեւ 2008թ Օգոստոսին, երբ վրաց-ռուսական պատերազմի օրերին պետութիւնը ամբողջովին կաթուածահար եղաւ եւ ամէն ինչ մատնուեց բախտի քմահաճոյքին: Նոյն կերպ վարուեց նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը օգնելով այդ դժուարին օրերին եղբայր վրաց ժողովրդին:*

*Այս փաստերի անտեսումը եւ աւելին՝ հարազատ ու հաւատարիմ քաղաքացիների շարքում անջատողականութեան հետքեր փնտռելը, հանգեցնելու է Վրաստանում ազգամիջեան թշնամանքի, ինչը իր հերթին թուլացնելու է Վրացական պետականութիւնը եւ դուռ է բացելու նորանոր խնդիրների, ինչը չի բխում Վրաստանում բնակւող բոլոր ազգութիւնների շահերից:*

*Սամցխէ-Ջաւախքի հայ ազգաբնակչութիւնը միշտ էլ համակրել է համաեւրոպական արժէքներին եւ տուեալ արժէքների հիման վրայ մշտապէս պահանջել է երկրից իր իրաւունքների պաշտպանութիւնը ու եւրոպական օրէնքների կիրառումը հայերով սերտ բնակեցուած պատմական Ջաւախքում, ինչը մշտապէս աղաւաղուած է ներկայացուել երկրի հանրութեանը վրացական մամուլում եւ ծնունդ տուել նորանոր ստահոտ եւ վտանգաւոր երեւակայութիւնների:*

# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է

*ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ*

*Ատրպէյճանը ՝Ղրիմի դէպքերով պայմանաւորուած, կարծես նոր հիստերիայի նախաշեմին է: Որ Ղրիմում զարգացող իրադարձութիւնները կարող են անհանգստացնել ազերիներին, միանշանակ է, հաշուի առնելով, թէ վերջերս ինչ ինտենսիւութեամբ է բարձրաձայնւում ազգերի ինքնորոշման սկզբունքի գերակայութեան կարեւորութիւնը:*

*Ղրիմի խորհրդարանի ընդունած անկախութեան հռչակագիրը, հանրաքուէի անցկացումը, Ղրիմի իշխանութեան դիմումը ՌԴ նախագահ Պուտինին՝ Ղրիմին ինքնավար սուբիեկտի կարգավիճակով Ռուսաստանի կազմում ընդգրկելու խնդրանքով, ազերիների համար մղձաւանջի պատկերով է: Նրանք ղարաբաղեան հակամարտութեան ընթացքում արդէն առնչուել են այդ գործընթացներին, ինչը նրանց յիշողութեան մէջ տպաւորուել է պարտութեամբ, այնքան դառը, որ դառնութեան զգացումը մինչեւ հիմա էլ շարունակւում է:*

*Ատրպէյճանում իսկապէս էլ խուճապային վիճակ է: Ինքնորոշման իրաւունքի սկզբունքի հիման վրայ կարգաւորուող կոնֆլիկտների թուի աճը, փաստօրէն, էժանացնում է Պաքուի «յաղթական» խաղաքարտը՝ տարածքային ամբողջականութեան ցնորքը, ինչի հաշուին այսքան տարիներ ալիեւեան կլանը արդարացնում է իր արկածախնդիր քաղաքականութիւնը, միաժամանակ փորձելով մոլորեցնել նոյնիսկ սեփական ժողովրդին: Ղրիմում կատարուածն ու կատարուողը ոչ թէ ղարաբաղեան խնդրի լուծման համար նախադէպ է, այլ՝ ընդամենը նրա կրկնութիւնն ու շարունակութիւնը: Տարբերութիւնը ազերիների վայրենութիւնն է, որն անհնար է կրկնել:*

*Այս առումով պատահական չեն Պաքուի քաղաքական աճպարարութիւնները, արկածախնդրութիւնն ու աքլորային կեցուածքը: Կեղծիքն ու ռազմատենչութիւնը կարող են պահի մէջ ոգեւորել, սակայն դժուար է նրանց առաջնորդութեամբ ցանկալի արդիւնք-*

*Տար.ը էջ 19*



# ՔԵՍԱՊԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ՍԱՅԻԹ ՉԷԹԻՆՕՂԼՈՒԻ ՀԵՏ



Շաբաթ, Մարտ 29, 2014ին, Փարիզեան շրջանի, հայաշատ Ալֆորվիլ քաղաքի, Հայ Երիտասարդական Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը, Սայիթ Չէթինօղլուի հետ:

Սարօ Մարտիրեան, Հայ-Եւրոպական Խորհուրդի (ՀԵԽ)ի անունով բացումը կատարեց ձեռնարկին եւ բացատրեց, թէ «Մարդկային Իրաւունքները Թուրքիոյ Մէջ» խորագրին ընդմէջէն, լուսարձակի տակ առնելու բուն նպատակը Զօրակցութիւն Սեւան Նշանեանին էր, որ անարդարօրէն եւ անընդունելի դատապարտումով կը մնայ բանտարկուած Յունուար 2014էն ի վեր: Եւ թէ այս Փարիզեան հանդիպումը, մաս կը կազմէր, ՀԵԽի կազմակերպած, Սեւան Նշանեանի զօրակցութեան համար, Թուրքիայէն հրաւիրուած այլախոհ պատմաբան, Սայիթ Չէթինօղլուի եւրոպական հանդիպումներուն:



Առաջին խօսք առնողը եղաւ Տիկին Անժէլ Տիքմէ, որ թրքերէնով կարդաց Սեւան Նշանեանի վերջին նամակը: Զուգահեռ թարգմանութիւնը կը կատարէր Տիկին Այլին Կոպէլեան:

Ձեռնարկին գլխաւոր բանախօս, Սայիթ Չէթինօղլու, իր ելոյթին մէջ անդրադարձաւ Սեւան Նշանեանի բանտարկութեան իսկական պատճառներուն: Բացատրեց թէ «պաշտօնական» պատրուակը «ապօրինի» սենեակի մը շինութիւնն է, Սեւան Նշանեանի կողմէ, հողաշերտի մը վրայ զոր նուիրած է բարեսիրական միութեան մը: Ան շեշտեց, թէ Սեւան Նշանեանի բանտարկութիւնը, զգուշութեան հրաւէր մըն է կարծիքի ազատութեան ջատագովներուն եւ Հայոց Ցեղասպանութեան եղելութեան մասին արտայայտուողներուն: Ան աւելցուց, թէ գումարելով Սեւան Նշանեանի դէմ եղած ամբաստանութիւնները, ան կրնայ բանտարկուիլ մինչեւ 50 տարի եթէ Թուրքիոյ ժողովրդավարները, տարբեր մարդկային իրաւանց պաշտպանները եւ անպայման համայն հայութիւնը զօրավիգ չկանգնին իրեն: Այն պարագային, երբ Թուրքիոյ իշխանութիւնը զգայ որ Սեւան Նշանեան առանձին մնացած է, այն ատեն ան կը վերածուի 1,500,000+3ի, ինչպէս եղան Հրանդ Տինքի եւ Սեւակ Պալըքճիի պարագաները:

Թուրք պոնտացի պատմաբանը երկու տարբեր հարցումներու նախընտրեց չպատասխանել, թիւ 301 տխրահռչակ օրէնքին պայմաններով 2 տարիով բանտարկութեան չդատապարտուելու համար: Իսկ անոր երիտասարդ հրատարակիչը, «Փրոփականտա» հրատարակչատան պատասխանատու-տնօրէնը որ ներկայ էր ձեռնարկին եւ որ յանդգնութիւնն ու քաջութիւնը ունի հրատարակելու Սայիթ Չէթինօղլուի գործերը, վեր առաւ բանախօսին «խանգարիչ»-ի պիտակը քանի ան, իր գրութիւններով կը հակազդէր թրքական պաշտօնական կեցուածքին:

ՍԴՀԿի Ֆրանսայի շրջանի ատենապետ՝ Գէորգ Սաչլեան, իր փակման խօսքին մէջ շեշտեց անհրաժեշտութիւնը շարունակելու երկխօսութիւնը թրքական ընկերութեան այն խաւին հետ, որ կը հետեւի Սայիթ Չէթինօղլուներու, Րակիբ Զարագօղլուներու, Էրօլ Օզգօրայներու եւ անոնց նմաններուն ուղիին:

Ան կրկնեց, թէ Թուրքիոյ կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը չի կրնար պարտադրուիլ օտար երկրի մը կողմէ, ըլլայ ան Ֆրանսան կամ Ամերիկայի Մի-

Շար.ը էջ 18

## ԿԻՊՐԱՀԱՅ ԿԵԱՆՔ

# ՔԵՍԱՊԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Կազմակերպութեամբ հայ քաղաքական կուսակցութեանց Կիպրոսի միաւորներուն, Չորեքշաբթի 9 Ապրիլի երեկոյեան, Նիկոսիոյ Նարեկ վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Քեսապի իրադարձութեանց նուիրուած քաղաքական ձեռնարկ: Հանդիպման ներկայ էին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Յակոբ Տիգրանեան, կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Կիպրոսի Թեմի Նախկին կաթողիկոսական փոխանորդ Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան, Կիպրոսի Թեմի Ազգային Իշխանութեան թեմական եւ վարչական ժողովներու ատենապետներ ու անդամներ, քահանայ հայրեր, Ս.Դ.Հ.Կ. Կիպրոսի Վարիչ Մարմնի անդամներ եւ հայ քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչներ, կիպրահայ ազգայիններ ու հայորդիներ:

Ձեռնարկին բացման խօսքը կատարեց Հ.Յ.Դ.ի պաշտօնաթերթ «Արձագանգ» ամսաթերթի խմբագիր Արթօ Դաւիթեան, որ անդրադառնալով Քեսապի դէմ կատարուած վայրագ ոտնձգութեան, անոր մէջ թրքական մեղսակցութեան եւ համահայկական անդրադարձին, կեդրոնացաւ կիպրահայ համայնքին բուռն հակազդեցութեան կատարուած դատապարտելի երեւոյթին նկատմամբ, ինչպէս՝ հրապարակային յայտարարութեան կուսակցութեանց նախաձեռնութեամբ, Ազգային Իշխանութեան նիւթական յատկացումին, պետական ներկայացուցիչին բողոք-դիմումներուն պատկան մարմիններու մօտ, եւրոպական ատեաններու մէջ հարցին հնարաւորինս հայանպաստ արծարծումին, ընդվզումի եւ զայրոյթի ընդհանուր մթնոլորտին:

Ապա Քեսապի աշխարհագրութեան, պատմական անցեալին, ազգային հարստութեանց եւ մշակութային ու եկեղեցական ժառանգութեան անդրադարձաւ Ս.Դ.Հ.Կ. Կիպրոսի Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Աւետիս Փոչօղլեան: Ան մտահոգիչ համարելով միջազգային աղմուկը Քեսապի շուրջ, ըսաւ. «Միջազգային լրատուական գործակալութիւններ, վարձկան լրագրողներ եւ զարմանազան գործակալներ, ինչ-ինչ հաշիւներէ մեկնած, առաւել կը հրահրեն մթնոլորտը, կը շիկացնեն զգացումները եւ կը բորբոքեն կիրքերը»: Ան շեշտեց թէ տագնապը պէտք է դիտել սուրիական քաղաքացիական պատերազմի ծիրին մէջ եւ հաստատեց՝ «Հայկական զգուշաւորութիւնը, զսպուածութիւնը այսօր հրամայական պահանջք է՝ խնայելու նոր զոհերու եւ նոր կորուստներու հաւանականութիւնը: Որեւէ գրգռիչ արարք՝ կրնայ ունենալ ծանր հետեւանքներ»: Ան ընդգծելով որ այսօր ամբողջական զօրակցութիւն է պէտք քեսապահայութեան, իր խօսքը եզրափակեց ըսելով՝ «Մերժելով սուրիական քաղաքացիական պատերազմին ներքաշուելու արկածախնդրութիւնը, ոչ թէ գիջած կ՚ըլլանք պոռոտախօս ազգասիրութենէ, այլ՝ կանխած նոր սպառնալիքներ եւ մանաւանդ սադրիչ լեգէոններ: Վերջապէս Քեսապը է՛ ու պիտի մնա՛յ հայկական»:

Ապա Կիպրոսի Հայ Դատի յանձնախումբին անունով խօսք առաւ Յակոբ Մանուկեան, որ

Շար.ը էջ 18



# Massis Weekly

Volume 34, No. 14 Saturday, April 19, 2014

## Hovik Abrahamian Appointed New Armenian PM



YEREVAN (RFE/RL) — President Serzh Sarkisian announced on Sunday his decision to appoint the influential parliament speaker Hovik Abrahamian as Armenia's new prime minister. He acknowledged that he had serious misgivings about Abrahamian's candidacy.

Sarkisian made the announcement at an extraordinary meeting of the governing body of his Republican Party of Armenia (HHK), the third such encounter held since the unexpected resignation on April 3 of Prime Minister Tigran Sarkisian.

Under the Armenian constitution, Abrahamian has three weeks to form his cabinet and seek a vote of confidence from the National Assembly controlled by the HHK.

Addressing senior members of the ruling party, Sarkisian spoke of widespread "skepticisms" about Abrahamian's candidacy. He said he has discussed it with the speaker "at length" in the last few days. Those misgivings, he explained, revolve around "relations with other political forces" and Abrahamian's "perceptions by various social strata."

"We spoke about all issues frankly and openly, and I received clear assurances from Mr. Abrahamian," Sarkisian said in televised remarks publicized by his press office. "Mr. Abrahamian promised to very quickly dispel possible concerns within our ranks with his active steps, clear political messages … and, most importantly, tangible results of his work."

"I am confident that everyone will very soon realize that the Republic of Armenia has a really effective prime minister," he added.

The president appeared to allude to Abrahamian's reputed ties to the Prosperous Armenia Party (BHK), the second largest parliamentary force increasingly challenging Sarkisian. The HHK-affiliated speaker is thought to have a close personal rapport with the BHK's millionaire leader Gagik Tsarukian not least because of the fact that his son is married to one of the tycoon's daughters. Observers have suggested that Sarkisian hopes Abrahamian's appointment will put the brakes on the BHK's growing coop-

Continued on page 2

## Syrian-Armenian Serviceman killed in Aleppo

An ethnic Armenian serviceman of the Syrian army was killed in Aleppo's Ramusse district on Wednesday.

A correspondent of the Yerevan-based Yerkir Media TV channel reported from the city that that the man, Gogo Ashnagilyan, had not yet turned twenty.

His funeral will take place later today from the Holy Trinity Armenian church of Nor Kyugh (an Armenian neighborhood of Aleppo).

On Tuesday, some 60 college students and teachers were wounded when the Armenian Catholic Paros College in Damascus was bombed by armed groups. Six students and three teachers of Armenian descent were wounded, according to information released by the Armenia's Ministry of Foreign Affairs.

Prior to the bombing, the Bishops' Synod of the Armenian Church had already transferred $100,000 from the Church social funds to the account of Catholicos of the Great House of Cilicia as a sign of support for Kesab Armenians, as reported by the Mother See of Holy Echmiadzin.

The Syrian civil war, ongoing since 2011, has seen more than 140,000 deaths and the displacement of about 2.5 million. Among those affected has been the Armenian population of Syria. More than 70 Armenians have been killed in the war and about 11,000 Syrian-Armenians have relocated to Armenia as a result of the conflict.

## Senate Foreign Relations Committee Adopts Armenian Genocide Resolution

WASHINGTON, DC — the Senate Foreign Relations Committee approved on Thursday S.Res. 410, affirming the U.S. Record on the Armenian Genocide. In addition to the Armenian Genocide resolution, a bill commemorating the 20th anniversary of the Rwandan Genocide was also adopted.

The resolution approved by a vote of 12 to 5 says the World War One-era extermination of some 1.5 million Armenians and forcible displacement of 500,000 others resulted in "the elimination of the over 2,500-year presence of Armenians in their historic homeland."

It also says that President Obama should ensure that U.S. foreign policy "reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, crimes against humanity, ethnic cleansing, and genocide documented in the United States record relating to the Armenian Genocide."

S. Res. 410, the Armenian Genocide resolution, was introduced by



Sen. Robert Menendez

Committee Chairman Robert Menendez (D-NJ), a long-time champion of Armenian issues and powerful voice for justice, along with Senator Mark Kirk (R-IL), who previously served as Co-Chair of the Armenian Caucus during his tenure in the House of Representatives. In addition to Menendez and Kirk, the resolution was cosponsored

Continued on page 4

## Turkey Slams US Congress Over Armenian Genocide Resolution

ANKARA — The Turkish Foreign Ministry has condemned an Armenian Genocide resolution, which passed at the U.S. Senate's Foreign Relations Committee on April 10 by bipartisan vote.

The Turkish Foreign Ministry said the committee had acted beyond its position, competence and responsibility by adopting a "hastily and ineptly prepared" draft resolution. The ministry warned the U.S. Congress not to "harm bilateral ties" between the two countries through further carrying the resolution to the legislative agenda, the Hurriyet Daily News reports.

"It's important that the U.S. Congress does not carry this resolution or similar ones in the legislative agenda, but rather make efforts to reinforce our historical alliance and partnership that have importance more than ever in the current conjuncture, instead of harming bilateral relations with non-constructive initiatives," the ministry said in a written statement on April 11.

The U.S. Senate Foreign Relations Committee Thursday passed a senate resolution commemorating the Armenian Genocide, clearing the way for the resolution to be voted for in the Senate.

"We condemn the pioneers of this initiative, which is biased and lacking in legal basis," the ministry said, adding it refutes this "effort of political misuse that warps history and law."

The U.S. Senate's Foreign Relations Committee "exceeded its authority and responsibility" by passing an "unserious resolution prepared hastily and unskillfully," read the statement.

The ministry cited Turkey's proposal to establish a joint history committee in order to research the 1915 incidents.

**U.S. State Department spokesperson**

The United States continues to urge Armenia and Turkey "to work together to achieve a full, frank and just acknowledgement of the facts", said U.S. Department of State spokesperson Jen Psaki during a daily press briefing in Washington, DC, on Thursday.

Psaki made the statement in answering a question from a reporter asking for an updated on the 2009 Turkish-Armenian protocols and on how the normalization process between the two estranged neighboring nations is going on.

"We believe that by working together to address their shared history, Armenia and Turkey can promote stability and prosperity in the entire Caucasus region, so we continue to work with them on that," the U.S. Department of State representative said. "While the protocols may not be moving forward at this time, we note that both sides remain committed to the process of normalizing relations and neither side has withdrawn. Our greatest interest on this issue is to see Armenia and Turkey heal the wounds of the past and move forward together in a shared future of security and prosperity in the region, and our policy is, of course, naturally guided by that goal."

## Sarkisian Rules Out Another Presidential Term

YEREVAN — President Serzh Sarkisian said last Thursday that he will not seek another reelection but stopped short of categorically ruling out the possibility of becoming prime minister after completing his second presidential term in 2018.

"I, Serzh Sarkisian, officially declare that I will never again run for the post of president of the Republic of Armenia," Sarkisian told a presidential commission of top state officials tasked with proposing amendments to the Armenian constitution.

"If as a result of final discussions [on constitutional reform] a path not corresponding to my wish is chosen — I mean the parliamentary model of governance — then I will also not aspire to the post of prime minister," he said. "I believe that one person must not aspire to the reins of power in Armenia for more than twice in a lifetime."

Sarkisian did not specify whether he will be willing to stay in power as prime minister if the commission does not ultimately advocate Armenia's transformation into a parliamentary republic.

He spoke as the ad hoc body headed by Gagik Harutiunian, chairman of the Constitutional Court, submitted and publicized what it called a preliminary version of the "concept" of constitutional reform. The 45-page document does not seem to give preference to a radical change of the existing government system that vests sweeping powers in the presidency. Those include the right to appoint key government ministers, top military and law-enforcement officials, provincial governors as well as virtually all judges.

The proposed reform framework does call, though, for curtailing the presidential authority and increasing the role of Armenia's government and the parliament. The president, it says, should have "largely counterbalancing and restraining powers," especially in cases where he or she does not have a loyal majority in the National Assembly.

The reform concept also floats a more far-reaching "possible alternative" whereby Armenia would officially become a parliamentary republic with a powerful prime minister and a largely ceremonial head of state. In that case, the president would be elected by the parliament for a seven-year term and would not be allowed to run for reelection.

The existing constitution, enacted in 1995 and amended in 2005, bars incumbent presidents from seeking a third five-year tenure. The commission did not propose that this restriction be scrapped.

## Azerbaijan Frees Armenian Captive Civilian

YEREVAN — A citizen of Armenia who was taken prisoner by Azerbaijani forces on the volatile northeastern border between the two countries more than a month ago has been repatriated today.

Arsen Khojoyan, 23, was repatriated with the help of the International Committee of the Red Cross (ICRC). He was immediately transported to a hospital in Yerevan for a medical examination.

The young man crossed the heavily militarized Armenian-Azerbaijani border on March 7 just three days after the Azerbaijani authorities freed another resident of his Verin Karmiraghbyur village following a more than month-long captivity. The 77-year-old Mamikon Khojoyan is Arsen's distant relative.

The ICRC said its delegates had visited the civilian prior to his repatriation in order to assess the conditions in which he was being held and the treatment he received. Representatives of the organization had also been in contact with his family in Armenia.

"They just tried to figure out whether or not I'm a serviceman. I said that I'm not," Khojoyan told reporters at Yerevan's Surp Grigor Lusavorich Medical Center. "I got lost and crossed into their territory because of heavy fog," he said.

Khojoyan also insisted that he was not ill-treated in Azerbaijani custody. He described as "normal" conditions in a Baku prison where he was incarcerated. Nevertheless, he said, he ate very little there for fear of being poisoned or drugged.

Gagik Manukian, the hospital's deputy director, confirmed that doctors found no traces of violence on the man's body. Manukian said he will be discharged from the hospital after additional tests on Friday.

By contrast, Mamikon Khojoyan had numerous injuries and required lengthy hospitalization after his release, leading the Armenian government to accuse Baku of torturing the elderly villager. The Azerbaijani Defense Ministry denied the accusations.

## Young Armenian Killed in Eastern Ukraine

A young man of Armenian origin was killed in the Ukrainian city of Slavyansk on Sunday.

According to preliminary reports, Ruben Avanesyan died of a gunshot wound, Father Husik Nurijanyan told Armenian News-NEWS.am.

He said the reports suggest that 29-year-old Ruben Avanesyan was driving a car when unknown people tried to stop him. Ruben did not stop, and the gunmen opened fire.

"This is one of the versions of his death. The law enforcers are investigating the case, and forensic examination will reveal the reasons for his death," he explained.

Ruben Hovhannisyana citizen of Ukraine, lived in Donetsk. His relatives have no idea why he was heading to Slavyansk.

"His relatives said Ruben had no interest in politics and did not represent any of the opposing sides in Slavyansk," Father Nurijanyan added.

## Victory for Armenian-Americans in Hollywood Neighborhood Council Elections





HOLLYWOOD, CA – The Armenian Council of America is proud to announce the victory of Jirair Tossounian and Maria Yepremian in the Hollywood Studio District Neighborhood Council (HSDNC) election.

"Through the hard work, determination and support from the Armenian-American community, Jirair and Maria have been elected to serve on the HSDNC where they will have the opportunity to address the needs and concerns of the district, which encompasses a large Armenian-American constituency," said ACA Chairman Sevak Khatchadorian. "I'd like to take this moment to congratulate these two astounding citizens who will serve as shining examples of civic participation for Armenian-American youth who have an interest in leadership and community organizing. I am confidence that they serve their terms with due diligence and extreme professionalism making the Armenian-American community proud to be represented by them."

Tossounian, who will be serving the HSDNC on the Property Owner Governors seat is a Hollywood native and has been actively involved within the neighborhood, through the Melrose Hill Neighborhood Association as well as the HSDNC, where he Chaired the Bylaws and Elections Committee.

He has been an active member of the Armenian Church Youth Organization at St. John Armenian Church in Hollywood, and currently serves on the Board of the Armenian Council of America. In addition chairing the Bylaws and Elections Committee, he has served on the Planning Land Use Management Committee, the Outreach Committee, and the Public Safety Committee for the HSDNC.

Yepremian will be serving on the same Neighborhood Council as a Youth Governor. She has been a part of HSDNC and East Hollywood Neighborhood Council (EHNC) respectively. She has also been an active participant in being different stakeholders within the community closer together through the once a year Hollywood Relay for Life event, which brings government officials and residents together to fight against cancer. She currently attends the University of Southern California and is studying Mechanical Engineering.

## Rep. Ed Royce to Participate in Armenian Genocide Commemoration Events in Yerevan

The Chairman of the United States House of Representatives Committee on Foreign Affairs Rep. Ed Royce will lead a small delegation of members to some of the most unstable regions of Ukraine, as well as to Armenia and Azerbaijan, the Orange County Register reports.

In Armenia, the delegation will participate in the Remembrance Day Event, a national commemoration of the 1.5 million Armenians killed during the genocide by the Ottoman Empire in modern-day Turkey, that began April 24, 1915.

Rep. Ed Royce long has championed the recognition of the Armenian Genocide, believing its denial by Turkey impedes reconciliation between the two neighboring countries.



"This was the first genocide of the past century and must be remembered," the Congressman said.

"Armenia is a country struggling to build democracy and prosperity in a rough neighborhood," he added.

## Hovik Abrahamian Appointed New Armenian PM

**Continued from page 1**

eration with Armenia's three main established opposition parties.

Tigran Sarkisian stepped down two days after the BHK and those parties agreed to stage three-day joint rallies later this month in support of their joint vote of no confidence in the government, which was due to be put forward in the parliament.

The four main political parties challenging Armenia's leadership said on Wednesday that they will continue their joint activities after the unexpected resignation of Prime Minister Tigran Sarkisian and the upcoming formation of a new government.

# Rep. Adam Schiff Delivers Open Letter to Turkish People on House Floor

WASHINGTON, DC – Last week, Rep. Adam Schiff (D-CA), the lead sponsor of the Armenian Genocide resolution, went to the House of Representatives floor to deliver an open letter to the Turkish people on the Armenian Genocide:

The full text of the speech is below:




An Open Letter to the Turkish People:

Today, I write to you on a topic of great importance to both of our nations. It is on a subject that many of you, especially the younger generation, may know little about because it concerns a chapter of world history that your government has expended enormous efforts to conceal.

Turkey has been at the center of human civilization from Neolithic times to the present, and your arts, culture and science have enriched the world.

But interwoven with all of Turkey's remarkable achievements is a dark chapter that too many of today's Turks know little or nothing about.

Were you aware that your grandparents and great-grandparents had many Armenian neighbors and friends – that twenty percent of the population of today's Istanbul was Armenian? Did you know that the Armenians were well integrated into Turkish society as celebrated intellects, artists, craftsmen and community leaders? Have you ever wondered, what happened to the Armenians? Have you ever asked your parents and grandparents how such a large, industrious and prosperous people largely vanished from your midst? Do you know why your government goes to such lengths to conceal this part of your history?

Let me tell you a part of their story. The rest you must find out for yourselves.

Ninety-nine years ago this month, in the dying years of the Ottoman Empire, the Young Turk government launched a campaign of deportation, expropriation, starvation and murder against the empire's Armenian citizens. Much of the Armenian population was forcibly removed to Syria, where many succumbed during brutal forced marches through the desert heat. Hundreds of thousands were massacred by Ottoman gendarmes, soldiers and even ordinary citizens.

By the time the slaughter ended in 1923, one and a half million Armenians had been killed in what is now universally acknowledged as the first genocide of the Twentieth Century. The survivors scattered throughout the Middle East and the wider world with some making their way to the United States, and to Los Angeles.

It is their grandchildren and great grandchildren whom I represent as a Member of the United States Congress. Theirs is a vibrant community, many tens of thousands strong, with schools, churches and businesses providing a daily link to their ancestral homeland. And it is on their behalf that I urge you to begin anew a national conversation in Turkey about the events of 1915-23.

As a young man or woman in Turkey, you might ask: What has this to do with me? Am I to blame for a crime committed long before I was born. And I would say this: Yours is the moral responsibility to acknowledge the truth and seek a reconciliation with the Armenian people that your parents and their parents could or would not. It is an obligation you have inherited and one from which you must not shrink. For though we cannot choose our own history, we decide what to do about it -- and you will be the ones to shape Turkey's future.

At the end of World War II, Germany was a shattered nation – defeated in battle and exposed as history's greatest war criminal. But, in the decades since the end of the war, Germany engaged in a prolonged effort to reconcile with the Jewish people, who were nearly exterminated by the Nazis during the Holocaust. The German government has prosecuted war criminals, returned expropriated property, allied itself with Israel, and made countless apologies to the victims and to the world. Most important, Germany has worked to expunge the cancer of dehumanizing bigotry and hatred that gave rise to the Holocaust.

This path, of reflection, reconciliation and repentance must be Turkey's path as well. It will not be easy, the questions will be painful, the answers difficult, sometimes unknowable. One question stands out:

How could a nation that peaceably ruled over a diverse, multicultural empire for centuries have turned on one of its peoples with such ruthlessness that an entirely new word had to be invented to describe what took place? Genocide.

As in Judaism and Christianity, the concept of repentance or tawba is central to Islam. Next year will mark a century since the beginning of the genocide and Armenians around the world will mourn their dead, contemplate the enormity of their loss, and ask, why? Answer them, please, with words of repentance.

Sincerely,
Adam Schiff
Member of Congress

www.massisweekly.com

# An International Conference "Honoring Those Who Helped Rescue a Generation Of Armenian Survivors 1915-1930"




**By Hasmik Piliposyan**

MISSION HILLS, CA — On March 22nd, 2014 at the Ararat Home of Los Angeles in Mission Hills, where our surviving elders still reside, the Ararat-Eskijian Museum hosted an all-day International Conference, "Honoring Those Who Helped Rescue a Generation of Armenian Survivors 1915 -1930". The event was well attended by the community. Dr. Carla Garapedian, director of 'Screamers,' was mistress of ceremonies for the day. The conference opened with prerecorded speeches addressed to the Armenian community by United States Representatives Adam Schiff and Mike Gato Assembly member 43rd district.

The purpose of the conference was to pay tribute to all those countries, individuals, and organizations that had sacrificed so much to aid a perishing nation. Diplomatic representatives were invited from twenty countries, including New Zealand, China, Japan, Philippine, South Korea, Switzerland, Sweden, France, Britain, Lebanon, Syria, Palestine, Czech Republic, Germany, Royal Danish consulate, Canada, and South Africa, with three diplomatic deputies attending, importantly those of Greece, Norway and Australia.

AraratEskijian1Martin Eskijian, representing the Eskijian family, whose father, Luther Eskijian founded the Museum, spoke about his father and the legacy of his grandparents. Rev. Hovhannes Eskijian and his wife, Gulenia, who labored to save Armenians during 1915 and 1916 in the city of Aleppo. Rev. Eskijian perished at the age of 34 of typhus a day before he was to be hanged publicly for saving the lives of thousands of orphans from death.

Leading scholars from around the world discussed the manner in which the international community, including the American Red Cross, American Near East Relief, and the League of Nations, participated in making the first major humanitarian effort of the twentieth century.

Missak Kelleshian described the Near East Relief (NER) humanitarian organization, in which the "world united in selfless service to humanity." Through trauma relief, education, empowerment, self-reliance, parenthood by proxy, education, and nutrition, the NER assisted an entire generation of Armenian orphans to maintain their heritage and reintegrate into society. "Quite literally," Kelleshian emphasized "Near East Relief kept and entire nation alive".

Shant Mardirossian has been a member of the Board of Directors of the Near East Foundation since 2002 and its Chair since 2007, in turn, discussed the continuation of the Near East Relief's work in many areas in the Middle East and Armenia today. "Ninety-nine years later the NER is still prominent throughout the world." The Near East Relief has kept alive its principle of honoring the past and continuing our national legacy with many humanitarian projects. Prof. Vahram Shemmassian (director of the Armenian Studies Program at California State University, Northridge) described the work of the American Red Cross in rescuing and rehabilitating survivors in the Arab Near East, in nations such as Syria and Lebanon, and author Dr. Rubina Peroomian spoke of the various missionaries that served in the Armenian provinces in the Ottoman Empire and became witnesses to the mass atrocities against the Christian



Armenian population. Missionaries from Sweden, Germany, United States, and other nations sent letters, telegrams and other communications to their governments warning of the humanitarian crisis in the Ottoman Empire, and were also instrumental in saving thousands of Armenian children from a tragic fate.

Guests of the conference were moved with emotion at the "Orphan dress from Hadjin," a patchwork of a deported child's sole garment, and an unfinished rug created by the orphans, which Mennonite Missionary Sister Dorinda Bowman brought with her on her return to the United States from Turkey in 1914. The items are on loan from Bethel College in Indiana to the

Continued on page 4

## Armenian Genocide Day of Remembrance Commemorated by County of Los Angeles



LOS ANGELES, CA – The Armenian Council of America and over 40 members of various Armenian organizations and institutions, including Abp. Vatche Hovsepian representing the Western Diocese, Sergey Sarkisov; Consul General of the Republic of Armenia in Los Angeles, the Armenian Chamber of Commerce and the Armenian Caucus for Local SEIU 721 participated in the annual Armenian Genocide recognition ceremony on April 15 at the Los Angeles County Board of Supervisors meeting where Supervisor Michael Antonovich presented a resolution in recognition of the passage of his motion proclaiming April 24, 2012 as "Day of Remembrance for the Armenian Genocide of 1915-1923? throughout the County.

Supervisor Antonovich delivered an impassioned speech recounting the events of the Genocide and the positive impact of the Armenian-American community on the County of Los Angeles. His Holiness Archbishop Vatche Hovsepian conducted the opening prayer and the Honorable Consul General Sergey Sarkisov spoke of the importance of recognizing the Armenian Genocide.

ACA Board Member Krikor Moloyan thanked the Board of Supervisors for their continued efforts in recognizing the Armenian Genocide. He also shared his grandparent's eyewitness accounts of the Genocide and the gruesome atrocities committed by the Ottoman Turks. "As an Armenian-American I feel that it is my duty to educate and inform the world of the great tragedies from our past in order to prevent any from occurring in the future," said Moloyan.



**ACA Board Member Mr. Krikor Moloyan thanking the Board of Supervisors for their continued efforts in recognizing the Armenian Genocide.**

## Armenian Genocide Hokehankist at the Memorial Monument of Ararat Armenian Cemetery

FRESNO - In observance of the Armenian Genocide of 1915 a Requiem Service, Hokehankist, will be recited on Wednesday, April 23, 2014, at 5:30 p.m. at the Memorial Monument of Ararat Cemetery, 1925 West Belmont Avenue, Fresno, California.

The Armenian Clergy of the San Joaquin Valley will participate in the Hokehankist Service where remains of an Unknown Genocide Victim is interred at the foot of the Memorial Monument, brought from the Desert of Der Zor, Syria by the late Rev. Dr. Manaseh G, Papazian in 1930.

The students of the Charlie Keyan Armenian Community School and the Homenetmen Scouts will serve as honor guard at the commemoration.

The Armenian Community of the San Joaquin Valley is invited to attend and participate in this commemorative event. Come and lay a flower at the Memorial Monument. Ararat and Masis Cemeteries are open daily from dawn to dusk.

## Armenian Genocide Resolution

**Continued from page 1**

by Senate Majority Leader Harry Reid (D-NV) and Senators Barbara Boxer (D-CA), Diane Feinstein (D-CA), Edward Markey (D-MA), Jack Reed (D-RI), Sheldon Whitehouse (D-RI), and Richard Durbin (D-IL).

Senators voting in favor of the resolution were Chairman Robert Menendez (D-NJ), Barbara Boxer (D-CA), Benjamin Cardin (D-MD), Marco Rubio (R-FL), Jeanne Shaheen (D-NH), Christopher Coons (D-DE), Richard Durbin (D-IL), John McCain (R-AZ), Tom Udall (D-NM), Chris Murphy (D-CT), Tim Kaine (D-VA), and Edward Markey (D-MA). Senators voting against were Ranking Member Bob Corker (R-TN), James Risch (R-ID), Ron Johnson (R-WI), Jeff Flake (R-AZ), and John Barrasso (R-WY). Senator Rand Paul (R-KY) was not present.

## Genocide Commemoration at the Pasadena City Hall




PASADENA — The 99th Commemoration of the Armenian Genocide will take place on Thursday April 24, 2014 at 10:00 a.m., at the Pasadena City Hall (100 N. Garfield Ave.)

The annual event is organized by the Armenian Community Coalition of Pasadena, in conjunction with the City of Pasadena, and the participation of Community Armenian organizations, churches and local private and public schools student.

The program will start with the presentation of Colors by AGBU scouts followed by the rendition of the anthems of the United States and the Republic of Armenia. The boy scouts of the Armenian General Benevolent Union's Pasadena-Glendale Chapter will stand guard.

Like every year, many local, state, and national elected officials and dignitaries will be in attendance and some will participate in the ceremonies.

The keynote speakers will be Dr. Hampig Sarafian, in English, and Very Rev. Fr. Andon Atamian, in Armenian.

Congresswoman, Judy Chu, will be delivering a message on the Armenian Genocide and the current tragedy in Syria.

Marshall Fundamental School Orchestra will be performing. in a cultural program, to duly mark this somber occasion.

Thursday, April 24, 2014 10:00 a.m. Pasadena City Hall 100 N Garfield Ave, Pasadena, CA 91101

R.S.V.P. to paccoalition@gmail.com.

## An International Conference

**Continued from page 3**

Ararat-Eskijian Museum for two years. Also on loan for the day of the conference from a San Francisco patron was a jewelry box made by the orphans of Sivas.

Dr. Hayk Demoyan, the director of the Armenian Genocide Museum-Institute in Yerevan, spoke about Aurora Mardiganian—"Why was America's Heroine was Condemned to Oblivion?" Demoyan presented newly revealed and unknown materials related to Aurora Mardiganian and movie Ravished Armenia". Aurora was a girl from Chmshkatsag in the Ottoman province of Kharpert (Harput/Mamuret ul-Aziz), the daughter of a wealthy family who was kidnapped during a death march and sold into the slave markets of Turkey. She eventually escaped, and with the help of the Near East Relief made it safely to New York. Aurora authored Ravished Armenia, the story of her survival, which led to the creation of the silent film, Auction of Souls. This was the first movie about the Armenian Genocide. Aurora played the leading role herself.

Bared Maronian, the award winning director of the documentary of "Orphans of the Genocide" screened a brief portion of his documentary. He showed an emotional visual journey through never-before-seen archival footage and recently-discovered memoirs of orphans who lived through the last century's first, fully documented, and least recognized genocide.

Dr. Vatche Mankerian gave a powerful performance on the piano of the works of Father Gomidas. Before his performance he gave tribute to his family members, the Mankerians from Hadjin. Over three hundred family members perished and only handful survivors.

Finally, Dr. Robert Fisk, a British writer and Middle East correspondent for the UK newspaper, The Independent, flew in from Damascus to participate in the conference. A century ago, Ottoman Armenians were marched to their deaths in the Syrian Desert. Now, with the recurring accounts of massacres in the Syrian conflict, including the killings of Armenians on Syrian soil, Dr. Fisk explored the comparisons between the 1915 Genocide and the current Syrian catastrophe.

Former Governor of California George Deukmejian presented the participants and European and Australian diplomats that were present with awards replica of " Mother Armenia" for their unprecedented humanitarian assistance to the Armenian Orphans from 1915-1930. Dr. Fisk also received several resolutions, and a gold medal of "Franz Werfel" from Dr. Demoyan, the director of the Genocide Museum in Armenia, for Dr. Fisk's selfless contributions to the Armenian cause, as Franz Werfel did with his pen when he wrote "The Forty Days of Musa Dagh"

# ԼԻԲԱՆԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՒ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

## (Յիշելով 13 Ապրիլ 1975-ը)

*ՍԱԳՕ ԱՐԵԱՆ*

13 Ապրիլ 1975-ը կը համարուի Լիբանանի քաղաքացիական պատերազմին սկիզբը: Այդ օրը լիբանանեան քրիստոնեայ «Փաղանգաւոր» կուսակցութեան զինեալներ հակազդելով պաղեստինեան ջոկատի մը կողմէ իրենց երկու կուսակիցներու սպանութեան «Այն Ալ Ռըմմանէ» շրջանին մէջ կրակ բացին պաղեստինցի զինեալներ փոխադրող օթօպիւսի մը վրայ եւ սպաննեցին 27 հոգի: Պատերազմի սկզբնակէտ համարուող այդ թուականը խորքին մէջ խորհրդանշական էր, որովհետեւ մինչեւ այդ դէպքը քրիստոնեայ լիբանանցիներուն եւ գրաւեալ Պաղեստինէն Լիբանան հաստատուած նոյն պաղեստինցիներուն միջեւ տեղի ունեցած էին բախումներ: Պաղեստինցի գաղթականները իրենց նեցուկը կը յայտնէին երկրի իսլամական հատուածներուն, գրգռելով զանոնք որ տարիներէ ի վեր առկայ քրիստոնէական վարչակարգը անարդար էր եւ պէտքը կար նորէն ձեւաւորելու երկրին ընդհանուր քաղաքական իշխանութիւնները, յատկապէս ընկերային արդարութիւն հաստատելու համար: Պաղեստինցիները ըլլալով սիւննի, տարածուած էին Լիբանանի հարաւը եւ Պէյրութի արեւմտեան շրջաններուն մէջ:



«Այն Ալ Ռըմմանէ»ի օթօպիւսը

Տարիներու ընթացքին արաբական նեցուկ ստանալով (զինամթերք եւ դրամ) նոյն պաղեստինցիները յաջողած էին զինեալ խմբաւորումներ կազմել եւ Իսրայէլի դէմ զինեալ գործողութիւններ կատարելու պատրուակը դրօշակի վերածելով յաջողած էին «պետութեան մէջ պետութիւն» հիմնել: Խորքին մէջ այս քայլին մէջ կար նաեւ արաբական այն կարծիքը ըստ որուն Լիբանանը պիտի դառնար պաղեստինցիներուն համար փոխընտրանք հայրենիք մը:

Լիբանանեան պատերազմի բռնկումին հիմնական պատճառներէն էր նաեւ 1943 թուականին հիմնուած հանրապետութեան վարչակարգը եւ քրիստոնեայ մեծ իրաւասութիւններով նախագահի մը առկայութիւնը հաշտ աչքով չէր դիտուեր երկրի իսլամներուն կողմէ: Լիբանանցի քաղաքական գործիչ Նատիմ Ապտըլ Սամատ խօսելով լիբանանեան պատերազմի բռնկման իրական պատճառներուն մասին կ՚ըսէ. «Պաղեստինեան ազդակը հիմնական ազդակ մը չէր պատերազմի սկիզբին այլ միայն օժանդակող հանգամանք մը»: Անոր կարծիքով պատերազմի հիմնական պատճառը ներքին անհանդուրժողականութիւնն էր եւ համայնքներուն միջեւ սրած ատելութիւնը:

Լիբանանեան պատերազմի ամենածանր տարիներուն (1975-1990) զոհուեցան 100.000 քաղաքացիներ: Հազարաւորներ վիրաւորուելով անդամալուծուեցան:

Զմոռնամ նաեւ յիշատակել այն մեծաթիւ առեւանգեալները, որոնցմէ շատերուն ճակատագիրը առ այսօր կը մնայ անյայտ:

Գրանցուեցան Միջին Արեւելքի արդի պատմութեան ամենէն սարսափազդու տեսարանները եւ տեղի ունեցան հաւաքական սպանդներ: Անոնցմէ պէտք է յիշել Սաֆրայի, Ըհտէնի, Սապրա-Շաթիլայի սպանդները, ինչպէս նաեւ «Սեւ Շաբաթ»ը, «Սեւ Սեպտեմբեր»ը եւ «Թալ ալ զահթար»ի սպանդները:

Պատերազմը ձեւափոխուեցաւ ու եղան հանգրուաններ, երբ նոյն ճակատէն կրակող եւ նոյն թիրախը ունեցող խմբաւորումներ իրարու դէմ զէնք վերցուցին:

Հերթաբար իրարու դէմ կռուեցան ե՛ւ քրիստոնեայ ե՛ւ իսլամ հատուածներ: Պատերազմի թէժանալուն մէջ մեծ դեր ունեցան Իսրայէլն ու Սուրիան: Մինչ Իսրայէլ բացայայտ կերպով ներխուժումներ կը կատարէր, անդին Սուրիա հաշտատարի իր դերակատարութեամբ կը հրահրէր տարբեր շրջաններու մէջ խմբաւորումներու միջեւ զտումներ ( յատկապէս Թրիփոլի): Իսրայէլեան զօրքերը, որոնք բաւական երկար ժամանակ գրաւուած պահեցին լիբանանեան հարաւային շրջաններու կարեւոր մէկ մասը, 2000 թուականին վերջնականապէս հեռացան երկրէն:

Այսօրուան դրութեամբ ՄԱԿ-ի թիւ 1701 որոշումով հաստատուած «Կապոյտ գիծ»ին շնորհիւ Իսրայէլ-Լիբանան սահմանը ունի կայուն վիճակ մը, սակայն Իսրայէլ ցարդ գրաւման տակ կը պահէ «Մազարէհ Շըպհա» շրջանը: Սուրիական կողմէն Սուրիոյ նախկին Նախագահ Հաֆէզ Ասատ, որ քրիստոնեաներու փափաքին ընդառաջելով իր ուժերը արաբական ընդհանուր պարունակով մը Լիբանան ուղարկեց, մեծ սխալներ թոյլ տուաւ ու պատճառ դարձաւ որ լիբանանեան շատ մը շրջաններ պահանջեն այդ ուժերուն հեռացումը (գործուած այդ սխալներուն մասին խօսած է նոյնինքն Պաշշար Ասատ): Սուրիական ուժերուն Լիբանանէն հեռացումը տեղի ունեցաւ Լիբանանի շինարար վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութիւնէն անմիջապէս ետք, 2005 թուականի Ապրիլին:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի վերջին փուլը կը համարուին 1988-ին ծայր առած զինուորական գործողութիւնները, երբ լիբանանեան բանակի այդ օրերու հրամանատար Զօր. Մի շէլ Աուն սուրիական ուժերուն դէմ յայտարարեց «Ազատագրումի պատերազմ»ը: Այդ հանգրուանին էր նաեւ որ Աուն նախագահ Ժըմայէլէն ստանձնելով երկրի ժամանակաւոր կառավարութեան ղեկը փորձեց տիրապետել քրիստոնէական շրջաններուն, այս անգամ ծանր մարտեր մղելով «Լիբանանեան Ուժեր» խմբաւորումին դէմ:

Քրիստոնէական շրջանները ծանր կորուստներ կրեցին եւ պատերազմի այս փուլը աւարտեցաւ սուրիական զինուորական միջամտութեամբ, որուն կանաչ լոյսը տրուեցաւ Սէուտական Արաբիոյ, ԱՄՆ-ի եւ շրջանային այլ ուժերու ամբողջական հովանիով իրականացուած Թաէֆեան վեհաժողովին: Աուն բռնեց աքսորի ճամբան: Նախ ապաստանեցաւ Ֆրանսական դեսպանատուն, ապա հեռացաւ ու 15 տարի ապրեցաւ Փարիզի մէջ:

Քրիստոնեայ միւս առաջնորդը՝ Սամիր Ժաաժա («Լիբանանեան Ուժեր») տարբեր մեղադրանքներով 11 տարիներ բանտարկուած մնաց երկրի պաշտպանութեան նախարարութեան նկուղներուն մէջ:

Լիբանանեան քաղաքացիական պատերազմի հանգրուանը կը պատկանի պատմութեան: Այնուամենայնիւ այդ պատերազմին տուն տուող մի քանի երեւելի պատճառներ չեն վերացած: Համայնքային դրութեամբ ղեկավարուող Լիբանանին համար այսօր մեծագոյն պատուհաս եւ մնայուն վտանգ կը համարուի անօրինական եւ ապօրինի զէնքը: Պաղեստինեան խմբաւորումներ ցայսօր կը շարունակեն տիրապետել այդ զէնքին, որ պետութեան ու պետականութեան գաղափարին գլխաւոր սպառնալիքը կը հանդիսանայ: Գաղթակայաններուն վերացումը կը կարօտի միջազգային որոշումի եւ նեցուկի: Պաղեստինեան զէնքէն բացի լուրջ վտանգ է նաեւ Իրանի կամակատարի դերը ստանձնած «Հըզպալլա»ն, որուն սուրիական պատերազմին մասնակցութիւնը ծանր քննադատութեան արժանացաւ լիբանանեան տարբեր շերտերուն կողմէ: «Հըզպալլա» եթէ պայքարեցաւ իսրայէլեան ներխուժումին դէմ եւ ձեւով մը ազատագրեց Լիբանանի հարաւը, աւելի ուշ փոխեց իր դիրքերը եւ իր հրացանը դէպի ներս ուղղելով կորսնցուց արաբական աշխարհի կարեւոր նեցուկը:

Այսօր թէեւ միջազգային որոշում մը կայ (գէթ մինչեւ հիմա) հեռու պահելու Լիբանանը պատերազմական իրավիճակներէ, բայց դէպքերուն իրատեսօրէն հետեւողի մը համար յստակօրէն երեւելի է, թէ Լիբանան լարուած եւ պայթելու պատրաստ վառօդի տակառ մըն է:

Դիրքերը եւ դերակատարները կը փոխուին, բայց պատերազմի վտանգը միշտ առկայ է: Սուրիացի մէկ միլիոնի հասնող գաղթականները (մեծամասնութեամբ սիւննի) եւ միւս կողմէ շիիթ համայնքի «Հըզպալլա»ն կրնան այդ պատերազմի նոր կողմերը ըլլալ, մանաւանդ որ երկրին մէջ ամէն օր սրող ատելութիւնը կը խօսի սիւննի-շիիթ հակամարտութեան մը մեծ հաւանականութեան մասին:

Յայտնի է նաեւ, որ քրիստոնեաները այսօր գետնի վրայ հիմնա-

*Շար.ը էջ 18*



# ԲԱՐՈՒ ԵՒ ՍԻՐՈՅ ՅԱՂԹԱՆԱԿԸ

*Ռ. ԿՈՐԻՒՆ*

*Փոթորկայոյզ դարերում մեր եկեղեցին մնացել է կանգուն բոլորելով 1713 տարիներ իր աւանդական սովորութիւններով, ծիսակատարութիւններով եւ կանոնադրութով: Հայոց եկեղեցին անբաժան է մեր ժողովրդի կեանքից՝ ազգային եւ ժողովրդական իր նուիրապետական աթոռներով: Սակայն մեր ներկայ ժամանակները տարբեր են, ինչպէս նախկինում՝ հիմա նոյնպէս, իր առաքելութիւնը մեծ է շարունակելու իր Աստուածանուէր, ժողովրդանուէր, ազգանուէր, հայրենանուէր ծառայութիւնները առաւել մտածուած եւ բարեփոխուած մեր ժամանակների ոգուն յարիր նպատակասլացութեամբ:*

*Մեր ժողովրդի սէրն ու յարգանքը հանդէպ հոգեւորականութեան աւանդական է, նկատի առնելով նրանց ազգանուէր ծառայութիւնները, սակայն ժամանակները պահանջում են մեր սփիւռքեան կեանքում առաւել եռանդ ցուցաբերել հայապահպանման եւ հայահաւաքման ի մայր հայրենիք:*

*Մեր եկեղեցւոյ հոգեւորականները կրօնական քարոզներին առընթեր կարիք է նաեւ հասարակական հարցեր արծածեն, ինչպէս՝ ընտանեկան, երեխաների հայեցի դաստիարակութեան եւ հայրենիքին ու մեր դատին առնչւող խնդիրներ՝ արտագաղթ եւ սոցիալական դժուարութիւններ:*

*Մեր հայոց եկեղեցին հիմնուած է Քրիստոսի վարդապետութեան տիեզերական ժողովների ընդունած՝ «Հաւատոյ Հանգանակ»-ի սկզբունքների վրայ: Որպէսզի անխախտ մնայ ժողովրդի հաւատքը քրիստոնէական կրօնի նկատմամբ տարուայ ընթացքում պատարագներով եւ արարողութիւններով յիշատակւում են Քրիստոսի կեանքին վերաբերող Տէրունի Տօները, որոնցից մէկն է Յիսուսի Յարութիւնը, որուն մենք՝ հայերս Զատիկ ենք կոչում, որը նշանակում է՝ ազատում, անցում, փրկութիւն...: Զատիկը 35 օրերի շարժողական դրոյթով է տօնւում: Քրիստոնեայ աշխարհը մեծ ուրախութեամբ է տօնում Յիսուսի Յարութիւնը, մեր հայութիւնը՝ նոյնպէս:*

*Ինչպէս մեր Քրիստոնեաների հաւատոյ սրբազան Աւետարանն է յիշատակում՝ Յիսուսի Յարութիւնը կեանքի յաղթութիւնն է մահուան դէմ: Առաքեալները հրաշափառ Յարութեան աւետիսով գօտեպնդուած իրենց հաւատքի մէջ Յիսուսի Համբարձումից յետոյ Պենտեկոստէին (հոգեգալուստ) խոստացուած Սուրբ Հոգու զօրութեամբ լցուած ու ոգեպնդուած՝ համարձակ ու անվեհեր տարածեցին Յիսուսի խօսքերն ու պատուիրանները:*

*Ժողովուրդներ առաքեալներից լսելով կեանքի ճշմարիտ ճամբան՝ սիրոյ, եղբայրութեան, արդարութեան, կեանքի խաղաղութեան, հաւասարութեան, բարութեան եւ հանդերձեալ կեանքի գոյութեամբ ուսմունքը դարձի էին գալիս, ընդունում էին Յիսուսի մարգարէութիւնը եւ կոչւում էին քրիստոնեաներ: Քրիստոնէութիւնը այն ժամանակների յեղափոխական շարժում էր եւ ամէն յեղափոխութիւն իր նահատակներն ու զոհերը, հալածանքներն ու խոշտանգումները, սարսափներն ու վախերն ունի, նոյնպէս քրիստոնէութեան տարածումը անմասն չմնաց մարտիրոս հաւատացեալների բիւր նահատակութիւններով, ակնառու օրինակը հայ ժողովրդի անցեալի գողգոթայական պատմութիւնը: Քսան մէկերորդ հրաշագործ գիտութեան դարասկզբում դեռ Թուրքերը քրիստոնեայ Հայաստանին խեթ աչքով են նայում, ուր մնաց անցեալ դարերին կապւող:*

*Զատիկը մեր կրօնական մեծ տօներից է, գարնան եղանակին զուգընթաց, երբ ձմեռը հալւող ձիւների պէս քաշւում է դէպի բարձր սարերի սպիտակափառ փայլատակող գագաթները գարունն է գալիս, նոր կեանք, ընձիւղուած բնութիւն՝ կանաչութեամբ ծաղկածիծաղ զգեստով:*

*Զատիկը ժողովրդականացուած եւ սիրուած տօներից է՝ խրախճանքներով եւ իւրայատուկ սովորութիւններով, ինչպէս ձու ներկելը, ձուախաղը. նորանշանուածներին եւ նորապսակներին այցելութիւնները եւ տարբեր գաւառներ իրենց յատուկ աւանդութիւններով:*

*Զատկուան տօնի օրը մեր եկեղեցիները յորդում է ժողովրդով, առաջնորդանիստ եկեղեցում եպիսկոպոսական շուքով Սբ. Պատարագ է մատուցւում երգչախմբի զմայլելի երգեցողութեամբ օրուան պատշաճ քարոզով: Միտս է գալիս մեր Թեհրանի եկեղեցիները, իւրաքանչիւր քաղաքամաս, լեցւում էր մեծ ու պզտիկ հայրենակիցներով՝ ձու էին խաղում, իրար շնորհաւորում եւ ուրախանում էին մէկը միւսին՝ ազգականին, ընկերոջ, բարեկամին տեսնելով: Այսպէս օրն անցնում էր շնորհաւորանքներով եւ զուարճութիւններով:*

*Այս տարի Զատիկը զուգադիպում է Ցեղասպանութեան ոգեկոչման տարելիցին մի քանի օրերի տարբերութեամբ: Իննսուն ինը տարիներ են անցնում այն ազգակործան Թուականից, որ մի ամբողջ անմեղ ժողովուրդ իր իսկ բնօրրանում սրի ու հրի քաշուեց եւ երկիրը բռնագրաւուեց: Ցեղասպանութեան յիսուն ամեակից ի վեր առաւել կազմակերպուած մեր աւանդական կուսակցութիւնները յետոյ Հայաստանը միացած աշխատանք է տարւում, որ Թուրքիան իր ժխտողական քաղաքականութիւնից ձերբազատուի եւ հաշտուի իր պատմութեան հետ, ընդունի ցեղասպանութիւնը եւ հատուցում տայ: Արդար պահանջատիրութիւնը անժամանցելի է, հայ ժողովուրդը անտեղիտալիօրէն շարունակելու է իր պայքարը:*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ՏՊԱԳԻ՞Ր, ԹԷ՞ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳԻՐՔ-ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՅԹ

*ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Ի նպաստ ընթերցանութեան, գրքի մշակոյթի զարգացման, 2002թ.-ից ամէն Ապրիլին Հայաստանում անց է կացւում ազգային գրադարային շաբաթ միջոցառումը, ամէն տարի տարբեր նշանաբանով: Հայկական գրադարանային ասոցիացիայի վարչութեան որոշման համաձայն, ԱԳՇ 2014-ը անցաւ Ապրիլի 14-21-ը:*

*Գրադարային շաբաթի կարգախօսի ընտրութիւնը կարեւորւում է այնքանով, որ առանձնացնում- ընդգծում է գրադարանային գործի զարգացման ուղղութիւններից որեւէ մէկը, ինչպէս՝ «Գրադարան՝ քաղաքակրթութիւնների խաչմերուկ», «Խոնարհուիր գրքին, որպէսզի բարձրանաս նրանով», «Գրատպութիւն՝ գիտելիքի յաւերժական ներկայութիւն», «Գրադարան՝այժմ նաեւ թուային» եւ այլն:*



*Մեր քաղաքում մէկ թէ երկու տարի առաջ խոշոր, գունազդու գովազդային վահանակների կողքին երբ յայտնուեց ինտելեկտուալ ապրանք գովազդող դրանցից անհամեմատ համեստ մէկը, սկզբից տարօրինակ թուաց քարոզչական արշաւի «Կարդալը նորաձեւ է» կարգախօսը, որն աւելի շուտ ոչ թէ ապրանքը, այլ երեւոյթն էր գովազդում: Երիտասարդ գրողների գովազդային լուսանկարները լրացնում կամ մեղ-*



*մում էին կարգախօսի տպաւորութիւնը: «Ի՞նչ է նշանակում՝ գիրք կարդալը նորաձեւ է. ինձ համար դա խորթ է, կարդալը ձեւի կամ կեցուածքի հարց չէ, որ նորաձեւ լինի»,- ասել է տաղանդաւոր երիտասարդ արձակագիրը, որի լուսանկարը բաւական տպաւորիչ է դարձնում պաստառներից մէկը: Կայ նաեւ այսպիսի կարծիք. «Ձեմ ուզում քննարկել, արդեօք յաջող գաղափար է, թէ՝ ոչ: Բայց տեսէք, որ մտապահել ենք: Բոլորս էլ յիշում ենք այն»:*

*Չնայած գրքի, ընթերցանութեան նման քարոզարշաւներին ու տարբեր միջոցառումներին՝ «Շնորհանդէսներ, գրքախաղեր, Յովհ. Թումանեանի ծննդեան օրը գիրք նուիրելու օր հռչակել եւ այլն» այն կարծիքն է տիրապետում, թէ հայերը կարդացող ժողովուրդ չեն. թէ՝ «ռուսները մի հարիւր անգամ մեզանից շատ են կարդում, իսկ հարեւան վրացիները՝ մօտ 19 անգամ: «Մենք աւելի գրող ունենք, քան կարդացող», մի քիչ տխուր, մի քիչ հեգնանքով ասում էր մեր բանաստեղծներից մէկը:*

*Ոչ վաղ անցեալի համեմատութեամբ ընթերցողական լսարանը, իհարկէ, նուազել է, յատկապէս դպրոցահասակների եւ ուսանողների շրջանակում, նոյնիսկ գրականութեան ֆակուլտետներում դա այդպէս է, եւ դասախօսներն են ասում այս մասին: Քաղաքի գրախանութները փակւում են՝ տեղը զիջելով զանազան սուպերմարկետների կամ բարերի, իսկ շատ հազուադէպ նորերի բացուելը զարմանք է հարուցում, քանի որ շահաւէտ չէ գրավաճառութիւնը, եւ դրանցում աւելի գրենական պիտոյքներ եւ գրասենեակային իրեր են վաճառքի դրուած, քան գրքեր: Չնայած հրատարակչութիւնների բազմաքանակութեանը եւ գրքերի տպագրութեան բազմազանութեանը, գրավաճառ ցանցը, կարելի է ասել, անտարբերութեան է մատնուած:*

*Նուազել է գեղարուեստական (յատկապէս դասական) գրականութեան հանդէպ հետաքրքրութիւնը, դասական վէպի ծաւալները ժամանակակից ընթերցողի համար ընդունելի չեն, նկարագրական արձակը վաղուց սպառել է իրեն, հոգեբանական իրավիճակներ՝ պատկերային սուր արտայայտչաձեւերով, կտրուկ անցումներով, արագ, դինամիկ զարգացումներով սիւժեններն են գրաւում այսօրուայ երիտասարդ ընթերցողին: Կեանքի ռիթմը, ժամանա՞կն է պատճառը նման մտածողութեան, թէ՞ վիդեօ խաղերի ինդուստրիան՝ իր առաւելութիւններով ու թերութիւններով, այդքան էլ պարզ չէ. թերեւս թէ մէկը, թէ միւսը:*

*Գուցէ այս հանգամանքով էր պայմանաւորուած նաեւ դասական վէպի սեղմագրային հրատարակութիւնները՝ հասցէագրուած դպրոցական պարտադիր գրականութեան ծրագրերին, որպէսզի գոնէ այս տարբերակով աշակերտները տեղեակ լինեն անցեալի գրական արժէք-*

*Շար.ը էջ 19*

# ԼԵՐԱՆ ՈԳԻՆ
## Հեղինակ՝ ՕՆՆԻԿ ԳԱԼՖԱՅԵԱՆ

*Ներկայացնող՝ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ*

*Այս ոգին պէտք է ունենայ ամէն հայ, ո՛ւր որ ալ գտնուի:*

*Ներկայացնենք, երկինքէն չէ իջած բայց դարձած է խուզարկուն երկինքներու, միզամածութիւններու, բնութեան ու մարդկային հոգիին, ու իր հոգին մերկացուցած բոլոր ընթերցողներու, բոլոր մարդոց առջեւ:*

*Այո՛, մեր կողմերու ծնունդ է:*

*Կ'ապրի ցաւերովը արաբ ժողովուրդին, ցաւերովը անոր, հայը: Գերազանցապէս հայ, բայց կը շնչէ չինացիին հետ, ճափոնցիին հետ, հնդիկին ու թիպէթցիին հետ: Բոլոր մարդոց հետ:*

*Հայ մարդ մը, մարդ մը վերջապէս, որ գիտէ թէ ինք բնութեան ծնունդ, մասնիկը այդ բնութեան, մասնիկը տիեզերքին պէտք է շնչէ, կը շնչէ արդէն իր նմաններուն հետ:*

*Եւ որպէսզի մեր վերի ըսածները պղպջակի պէս անմիջապէս չկորսուին, բերենք օրինակներ իր այս 63 էջանի գիրքէն, զոր հեղինակը լոյս ընծայած է հայոց զոյգ լեզուով, մէկ կողմը արեւմտահայերէնով, միւս կողմը ՝ արեւելահայերէնով, նոյնքան էջերով:*

*Ու նախքան մեր կատարելիք մէջբերումները անմիջապէս յայտնենք, որ հեղինակը ճանչցուած գեղանկարիչ է նաեւ իր ապրած երկրին մէջ, բայց ո՞ր երկրին մէջ չէ գտնուած որ, շրջած է աշխարհը ու այժմ կ'ապրի երկրի մը մէջ, որ աշխարհը կլլել կ'ուզէ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ:*

*Ծանօթացէք խնդրեմ այս արտակարգ, բայց կարգին հեղինակին-ինքն է ինքզինք ներկայացնողը-*

*«Ոգեփոխանցային*
*Քառեակի՝*
*Չորս հազարամեայ*
*Բնաշրջումը՝*
*Արարատի Փէշերէն*
*Մինչեւ Պարաքա,*
*Միացեալ Նահանգներ*

*Վերի տողերով հեղինակը ձեզ մտածումի չ'առաջնորդե՞ր:*

*«Իմացէք նաեւ, որ,Դաւիթ Սուլթանեան, հօրենական մեծ մօրս եղբայրը, 1915ին՝ 19 տարեկանին, Ամերիկայէն Արեւմտեան Հայաստան գացած է՝ որպէս ֆետայի ազատագրական պայքարին միանալու համար: Հազար ինը հարիւր քսանութին , երբ Դաւիթ մահուան անկողնին մէջ էր, Պէյրութ, իր մօտ կանչած է 18-ամեայ հայրս եւ անոր փոխանցած ազատագրական ոգին շարունակելու պատասխանատուութիւնը: Հայրս, իր կարգին, երբ մահամերձ էր, 1970ին, այդ ոգին փոխանցեց ինծի»:*

*Հիմա, կարծեմ քիչ մը ճանչցաք այս հեղինակը: Անշուշտ քիչ մը ճանչնալը իրապէս քիչ է:*

*Ոգի, հայկական ոգի, մարդկային ոգի ունեցող մարդը շնորհիւ այս փոքրածաւալ գիրքին, որ ոգիի խորհուրդը կը պանծացնէ պիտի ճանչնաք առաւել իր գրիչովն ու վրձինովը, որոնք՝ ոգիի խտացեալ արտայայտութիւններ են:*

*Ու հիմա Ծոզըֆ Քեմպըլէն Թուիչքաձեւ խօսք մը որպէս բնաբան՝ «Սրտիս տրոփիւնը զուգորդել տիեզերքի տրոփիւնին» եւ մուտք մը հեղինակի պարտէզին մէջ,-«Այս հրատարակութիւնը նուէր մըն է մօրմէս՝ Սիրվարդ Մուշայեանէն եւ երկու հայրերէս՝ Եղիա Գալֆայեանէն եւ իմ որդեգրած հայր՝ Սամ Շաուէն, որ տարիներ առաջ ինծի նուիրեց հողամաս մը հիւսիսային Նիւ Եորքի մէջ, տարածուն կալուած մը որ այսօր ծանօթ է Պարաքա անունով: Ծնողքս ու Սամը մէջս սնանեցին բնութեան առատութիւնը բաժնելու եւ յաջորդ սերունդին ոգեկան փոխանցման սատարելու պատասխանատուութիւնը»:*

*Հեղինակը այս ոգեշնչումով կը մեկնի շրջագայութեան դէպի Ամերիկա, որպէսզի լաւապէս ճանչնայ այս ընդարձակ երկրին բնիկները:*

*Ու հոս, հեղինակին ոգին ամուսնացած է բնիկներուն հետ:*

*Բայց չեմ կարծեր որ զարմանաք, Ամերիկայի բնիկներն ալ մարդեր չե՞ն: Որոնք հրէշայնօրէն ջարդի ենթարկուեցան Եւրոպայէն Ամերիկա ապաստանած մարդասպաններու ձեռքով:*

*Կը շարունակուի կեանքը: Հեղինակը ամուսնացած է: Կինը արդէն յղի է: Ծնելիք երեխան կ'որոշեն Վօքի կոչել: Գիտեն որ ճամբայ ելածը մանչ մըն է: Այդ գաղտնիքը իրենք գիտեն: Ու երբ Վօքին կ'ըլլայ 13 տարեկան, Լոս Անճելըսի Ալեք Փիլիպոս վարժարանի աշակերտ, ուսուցիչները անթարթ կը յանդիմանեն զինք անուղղագիր անուան համար.- «Վէվ օ քէ կ'ըլլայ մը, տղաս, անունդ ո գիրով պիտի գրես, այդ է ճիշդ ձեւը»: Վօքին կը պոռթկայ ըսելով.-«Որ իմ անունը քրիստոնէութեան հասկցած ոգին չէ, որպէս ոչ տեղէ յայտնուող վաղանցիկ աննիւթ երկնային բան մը, այլ կը նշանակէ երկու էակներու միացումը, էացումը»:*

*Իրապէս իր հօրը տղան է Վօքին:*

*Այնուհետեւ հեղինակը կու տայ իր բնորոշումները ոգի եզրին մասին.-«Ոգին իրողական դրսեւորումն է ոգեկան փոխանցման մը, ներգործումը երկու էութիւններու, անոնց նուիրագործումը»:*

*Նաեւ.-«Ոգին այն ոյժն է որ կը գոյէ առանց պատկերի: Բիւրեղացումն է այն պահուն, երբ երկու էութիւններ կ'էանան»: Տակաւին.-«Ոգին իրողական էութիւն է, պէտք չունի մտաւորականօրէն հնարուած աստուածային գիտակցութեան մը յետմահու կեանքի միթախոստումին»:*

*Ապա.-«Ոգին, ոգիի գաղափարը, յափշտակուեցաւ հրէ-քրիստոնէացած հայերէ, որոնք անոր տուին գաղտնագիտական իմաստ մը - արդարացումը մահուան վախին, տրուած ըլլալով յետմահու յաւիտենականութեան մը դաւանանքը, եւ, գլխաւորաբար, եկեղեցւոյ ենթադրեալ ոյժը՝ յաւիտենական կեանքի բնոյթի տնօրինման մէջ, ըստ անհատի գործած կամ չգործած մեղքերու գումարին: Հանդարտեցուցիչ մը, խոստում մը, որ Հայաստանի նորագոյն անկախութենէն ասդին մօտ 300 եկեղեցիներու կառուցումը ֆինանսաւորեց, ի մշտնջենական փառս նուիրատուներու հոգիներուն»:*

*Ճշմարտութիւնը կը վիրաւորէ՞, գուցէ: Հիմա, արդէն աւելի լաւ ճանչցաք Գալֆայեանը: Տակաւին.-Հեղինակը չորս տարեկան եղած ժամանակ կ'արտասանէր Քաջ Վարդանին նուիրուած հնգատողը եւ կ'արժանանար ափփերիմի:*

*Անի՝ դարպաս մշակութային բնաշրջման.- « 10րդ դարի արշալոյսին մոնկոլները Ճէնկիզ Խանի գլխաւորութեամբ աւեր սփռեցին, բայց նաեւ իրենց հետ բերին նուէրը արեւելեան փիլիսոփայութեան, գիտութեան, արուեստի եւ ոգեկանութեան»: (Այս մասին ոչ ոք խօսած էր մեզի մեր մանկութեան ու պատանեկութեան շրջանին Թ.Թ.):*

*Աֆղանիստանէն Ռումի հռչակաւոր բանաստեղծ-գիտնականը կը փախչի եւ ընտանեօք կ'ապաստանի Գոնիա: Իսկ հեղինակին ընտանիքը՝ Անիէն Կեսարիա:*

*Սելճուքները գաղթականներուն արտօնած են հաստատուիլ մեծ քաղաքներու մէջ: (Այս մասին եւս մեր ուսուցիչները ոչինչ ըսած են մեզի Թ.Թ.):*

*Անիէն եկողներուն տեղ տրուած է Արգէոս լերան շուրջ. այդ գաղթականները իրենց բնակավայրը կոչած են Էվերէկ-այսինքն՝ աւերակներէ եկող: Կը տեսնէ՞ք, նոր բառեր եւս կը սորվինք:*

*Կը ծնի Օննիկը:*

*Ջահլէ կը բնակէին.- «Ջահլէի մեր համայնքը կազմուած էր պաղեստինցիներէ, քիւրտերէ, տիւրզիներէ, շիա պարսիկներէ, սիւննի արաբներէ, մարոնիներէ, հրեաներէ եւ մեզմէ՝ «հայերէս»:*

*Այս բոլորը ո՛վ թոյլ կու տար, որ համերաշխ ապրէին:*

*Գալֆայեաններու ընտանիքը 300 անդամ ունեցած է, բայց Օննիկին հայրը ոչ Գալֆայեանի մը կեցութեան վայրը ցոյց տալով ըսաւ.-«Տղաս, երբ դժուարութեան մատնուիս, այս մարդուն կը դիմես»: Երեխան 11 տարեկան է, կը զարմանայ, կեանքը իրեն պիտի ցոյց տայ, որ օտարին օգնութեան պիտի արժանանայ:*

*Գալֆայեան կ'անդրադառնայ 1958ի եղբայրասպան ճակատումներուն.-«Քաղաքացիական պատերազմը ... պիտի ջնջէր բարեկրթութեան ու հանդուրժողութեան վերջին հետքերը, խլելով համայնքի լաւագոյն երիտասարդներէն մօտ 300ի կեանքը»: Բայց.-«Հիմա որ հայ եւ թուրք արուեստագէտներ երկխօսութեան սկսած են եւ նոյնիսկ կը գործակցին, թերեւս պէտք է յուսալ որ երկխօսութիւն կարելի է ստեղծել հայ կուսակցութիւններուն միջեւ ալ»:*

*Փախուստներ, Դիմաւորումներ*

*-«Փախուստ մոնկոլական արշաւանքներէն: Դիմաւորում սելճուքներէն: Փախուստ թուրքական կոտորածէն: Դիմաւորում՝ լիբանանցիներէն: Փախուստ եղբայրասպանութենէն: Դիմաւորոմ՝ Ամերիկայի մէջ: Օր ըստ օրէ խեղդուելով Լիբանանի մէջ մեր իսկ ձեռքով տնկուած մտաւորական եւ տառացի կեթոյի ճիրաններուն մէջ, վճռեցի Նոր Աշխարհ անցնիլ»:*

*Ու հոն իր կեանքը նուազ դժուարին չէ եղած, որ սակայն յենելով իր ժառանգած ոգիին, դարձած է անսասան վերելք, շնորհիւ իր պրպտող ոգիին, շնորհիւ իր անաչառութեան ու մանաւանդ գագաթներու հասնող տարապայման անկեղծութեան:*

*Գրող է, գեղանկարիչ, հրապարակախօս: Կը զբաղի լեզուներու հնչականութեան հարցերով, կը շահի բարեկամութիւնը թէ հայերու, որոնք երբեմն իր հենքէն են եւ օտարներու: Ստեղծագործ միտք է, նոյնիսկ պատանիներու համար կը հիմնէ կազմակերպութիւն:*

*Մէկ խօսքով արեւի լոյսին պէս կը լուսաւորէ իր շուրջ բոլորը այրիլ գիտնալով:*

*Ամէն տեղ է, կ'երգէ եկեղեցիներու, քարայրներու, փարթամ քաղաքներու մէջ, կը բարեկամանայ նաեւ սեւամորթներու լուսանկարչութեան նուիրուած Արթուր Զոլաքեանի հետ: Նաեւ ծնունդով հայ մօրմէ ծնած ի Կիւմրի, հայրը յոյն, Կիւրճիէֆի հետ, իր գաղափարները մօտիկ գտնելով անոր տեսակէտներուն:*

*-«Ես բազմիցս առիթը ունեցած եմ երգելու սրբազան կառոյցներու մէջ-քրիստոնէական քարայր-*

*Շար.ը էջ 19*

# ՍՏԱՑԱՆՔ
## ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳԻՐՔԵՐ ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆԷՆ

*Շնորհակալութեամբ ստացած ենք անուանի լրագրող, մտաւորական, ՌԱԿ կազմակերպութեան գործիչներէն Արա Ահարոնեանի վերջերս լոյս տեսած երկու աշխատութիւնները՝ «Հայաստանի Հանրապետութեան Մարտահրաւէրները» եւ «Երախտաւորներու Ուղին», առաջինը 64, իսկ միւսը 192 էջերէ բաղկացած:*







*«Հայաստանի Հանրապետութեան Մարտահրաւէրներ» գիրքին մէջ տեղադրուած են ներկայ Հայաստանի, Արցախի եւ պատմական Հայաստանի քարտէզները, ինչպէս նաեւ շարք մը հայկական վանքերու եւ կոթողներու պատկերներ, որոնք աւելի հետաքրքրական կը դարձնեն հատորի ընթերցումը եւ պատմական արժէք կու տան գիրքին:*

*«Երախտաւորներու Ուղին» նուիրուած է իր պատկանած կուսակցութեան վերջին 50-60 տարիներու պատմութիւնը կուսակցական գործիչներուն եւ քաղաքական անց ու դարձերուն: Երկար տարիներու տքնաջան աշխատանքի արդիւնք են վերոյիշեալ հատորներու գրառումը որոնք պատիւ կը բերեն վաստակաշատ մտաւորականին եւ քաղաքական գործիչին: «Մասիս կը շնորհաւորէ հեղինակը եւ կը մաղթէ նորանոր յաջողութիւններ, որպէսզի ան հնարաւորութիւն ունենայ ի մի հաւաքել նման պատմական երեւոյթներ:*

# ՆԵՐԲՈՂ ԱՐՄԻՆ-ԱՐՄԷՆ ՑԵՂԻ ՈՒ ԱՐՄԻՆԱ ԵՐԿՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՎԱՅՐ՝ ԲԱԳԱՀԱՍՏԱՆԱ ԿԻՐՃՈՒՄ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԱՐԵՀ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆԸ

Հայութիւնը մութ դարերից եկող մեծ խորհուրդ է, որին պէտք է մօտենալ վախով, սիրով, հաւատաւոր սրտով եւ մոլեռանդ յանդգնութիւնով

Կոստան Զարեան

*ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Բագահաստանա՝ «Աստուածների Բնակավայր», աղաւաղուած հնչիւնափոխութեամբ Բիհիստուն-Բեհիստուն կոչուած: «Աստուածների Բնակավայր»-ը գտնւում է Իրանի Քրմանշահ քաղաքից 36 կմ արեւելք, Բեհիստուն գիւղից 4 կմ հիւսիսի կիրճում, Արտագու գաւառից հարաւ (Աւարայրի Դաշտ): 152.5 մեթր բարձրութեամբ մարմար ժայռի երեսն է սրբատաշուած, որի ընդհանուր մակերեսը՝ (7.8*22.0 մեթր) կազմում է 172 քառակուսի մեթր: Նրա երեսին եռալեզու արձանագրութիւն է փորագրուած: Դարերի հողմերի, արեւի կրակ լոյսի դէմ անսասան կանգնած այդ կիրճի ժայռը... յուշարձան է: Այն իր հետ տանում է: Պարսկաստան երկրի հզօր արքայ՝ Դարեհ I-ի նուաճումների, տիրակալած երկրների հետ մղած քաջ գործերի փառաբանման հրաւառութիւնը:*

*Արեւն էր իջել կիրճի մարմարեայ երեսը շոյելու, այնտեղ փորագրուած նշանագրերը վառում իր ծիածանի կարմիր լոյսերով, լոյսի անուշ ցոլքեր ցօղում ժայռի առաջ խմբուած բազում մարդկանց զուարթ դէմքերին: Այնտեղ էին նաեւ մօտակայ Թադէի վանքի տօնակատարութեանը եկած բազում ուխտաւորներ, կարծես ուխտի եկել նաեւ այդ մարմարէ յուշարձանին: Ապշահար նայում էին նրա սրբատաշ երեսի երեք սիւնակների հազար երկու հարիւր տողերի արձանագրութեան գեղեցիկ ու հրաշագեղ շարքերին: Արձանագրութիւնը դրուագուած է պատկերաքանդակներով, կեդրոնում քանդակուած մարտերում պարտուած երկրների առաջնորդների ատեանի տեսարանը: Ուխտաւորները՝ դէմքերը վեհապանծ ժայռի երեսին յարած, զանցկալի դիտում նրա վրայ փորագրուած նշանները՝ բեւեռագրերը: Անձկութեան յոյզի լոյս էր հոսում նրանց աչքերից, անհամբեր իմանալու ժայռի երեսին գամուած նշանների իմաստի բովանդակութիւնը: Հին աշխարհի՝ Եգիպտոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Արմինա-Ուրարտու երկրի Արամ-Արամէի տոհմից ԱրաԱրայեան Թագաւորների ստեղծած արձանագրութիւններից ամենածաւալունն ու ամենայ երկարն է այն: Օտար այցելուների խմբի մի մարդ, ուխտաւորների համար անհասկանալի լեզուով, ժայռի վրայ գամուած արձանագրութեան բովանդակութեան ու նրա պատուիրատուի մասին հակիրճ տեղեկութիւններ էր հաղորդում: Ուխտաւոր Արմին-հայերը, ակներից ժայթքած լուսոտ ժպիտով, խորին ակնածանքով ունկնդրում էին, իրենց խմբի տարեց աւագի Դարեհ Թագաւորի արձանագրութեան մասին պատումը: Հաւանաբար նա տեղեակ էր արձանագրութեան բովանդակութեան մասին եղած հրապարակումներին: Բոլորը-բոլորը ակնապարար նայում ժայռի երեսին, ուշադիր լսում աւագի կողմից Դարեհի արձանագրութեանը նուիրուած հրաշունչ ՆԵՐԲՈՂԻ նման խօսք:*

*Ժամանակին կարծել էին, որ ժայռի երեսին գամուած բեւեռագրերը մեհենական նշաններ էին: Տեղացի մարդկանց ու ճանապարհորդներին ծանօթ էր այն: Մինչեւ տասնիններորդ դարը նրա բովանդակութեանը տեղեակ չէին եղել: Յոյն հին հեղինակներ, հաւատալով հնամենի զրոյցներին, արձանագրութիւնը առասպելական Շամիրամին էին վերագրել: Այդ նենգ ու վավաշոտ կնոջն էին նաեւ վերագրել Արմինա-Հայաստան արարչական երկրի Արայ Արայեան տոհմի արքաներ՝ Մենուայի եւ նրա նախնիների ու յաջորդների արարած ջրանցքների ու ոստանի արարումը, որ երկրի չէներին ու դաշտերին Նար Ծովինար աստուածուհու արարած ջրերը հոսէին: Շամիրամի ցանկասիրութեան պատերազմ Արմինա երկրում, Արամ Նահապետի որդի՝ Արա Գեղեցիկ Թագաւորին տիրելու եւ նրան իր երկրի գահին բազմեցնելու համար: Մարտում ընկնում է Արան, նրա դին թողնում են անթաղ, որ Յարալէզ աստուածները նրա վէրքերը լիզելով կենդանացնէին: Կեանքի յարութեան հնագոյն հաւատք, որը հազար-հազար տարիներ յետոյ հեռու հարաւի երկրում աւանդուած պատումի համաձայն պիտի իրականանար, թէ˜, անգիտակ մարդկանց իրենց նոր հաւատքի ճշմարտացիութեանը համոզելու համար էր այն աւանդուել: Նոր հաւատքի հիմքն էր այն, առանց որի ու երկրորդ կեանքի աւետման . . . առասպել կլինէր այն:*

*Մարմարէ ժայռի երեսին փորագրուած նշանակագրերը ընդօրինակել ու վերծանել է՝ Իրանում ռազմական խորհրդատու՝ բրիտանական սպայ Հենրի Կրեսուիկ Ռոուլինսոնը: Նրա վերծանումը նպաստել է նաեւ արեւելքի միւս երկրների սեպագիր արձանագրութիւնները գաղտնազերծելու աշխատանքներին:*

*Մարմարէ այդ ժայռի սեպագիր արձանագրութիւնը պատուիրել է կատարելու Պարսկաստանի Աքեմենեան գահատոհմի 9-րդ գահակալ Դարեհ Ա. Թագաւորը (մ.թ.ա. 522-486), որի բովանդակութիւնը իր վարած պատերազմների յաղթանակների եւ իր քաջ գործերի մասին էր: Այդ եռալեզու արձանագրութեան բնագիրը Պարսկերէն է: Նրա էլամական ու Աքքատական լեզուներով բովանդակութեան շարադրումները՝ Պարսկերէն լեզուից ուղղակի թարգմանութիւններ են: Պարսկերէն բնագրում գրուած Արմինա (Արմէնի) անուան տեղ նրա աքքատական թարգմանութեան մէջ գրուած է՝ Ուրաշտու, այսինքն՝ Ուրարտու (ր>շ տարբերութեամբ), Ուրաշտու (Ուրարտու) անունը հոմանիշ եզր համարելով Արմինա (Արմէնի) երկրանուան: Իսկ էլամերէն թարգմանութեան մէջ գրուած է՝ Հարմինա, Արմինա անուան «հ» տառի հնչիւնի տարբերութեամբ: Դեռ հիմա էլ տարբեր անուանումներով պետութիւններ կան, որոնք հոմանիշ անուններով նոյն պետութիւններն են, ինչպէս նաեւ Արմինայի դէպքում:*

*Ինչո՞ւ են պատմաբանները յամառօրէն «պինդ» բռնել Ուրաշտու-Ուրարտու-ի «պոչից», այն համարում առանձին երկիր ու նրա բնակիչներին էլ «Ուրարտացիներ»: Եթէ Արմինան իսկապէս Ուրարտու-Ուրաշտու էր, Դարեհը ինչո՞ւ Արմինա պիտի գրէր: Բաբելոնի ու Ասորեստանի բազում արձանագրութիւններում յիշատակուած Ուրարտու-Ուրաշտուն երկրի անունը չէ: Իրենց պատերազմած երկրի լեռների գագաթների երախներից ժայթքած «կրակ» իմաստի թարգմանութեամբ երկրին տրուած «Կրակի երկիր» յօրջորջուած անունն է: Պատմաբանները անգիտանում են, որ Դարեհի արձանագրութիւնում Աքքատերէն «Ուրարտու-Ուրաշտուն» թարգմանութիւնն է Արմինա «կրակ» երկրի եւ նրա բնակիչներն էլ «Արմիններ»: Այդ նպատակադրուած է Արմէն-Հայերին համարելու եկւորներ եւ ոչ թէ այդ լեռնաշխարհի արարչական մարդիկ: Զարմանալի է, Հայերէնը համարում են Հնդեւրոպական մայր լեզուի առանձին լեզուախումբ, նրանց բնակած լեռնաշխարհ-բարձրաւանդակը Հնդեւրոպական ժողովուրդների բնօրրան, իսկ նրա տեղի բնակիչներին եկւորներ: Աշխարհում շահն է առաջնային, յետոյ ճշմարտութիւնը: Արմին ցեղի մարդիկ զգացմունքային ու բարեպաշտ են, իրենց պատմութեան ընթացքում բազում անգամներ անգիտացել այն... տանուլ տուել էին իրենց կռիւը: Յոյն իմաստուններ իրենց երկերում երբեք Ուրաշտու-Ուրարտու անունով երկիր չեն յիշատակել, իրենց ցեղակից Ար-արեւ աստուծոյ որդիներ Արմիններին՝ Արմէն, երկիրն է Արմէնիա անուանել:*

*Աքեմենեանների Դարեհ Ա.-ի տիրակալութեան ատեն, նրա դէմ ապստամբել ու անկախացել են Արմինա-Հայաստան, Մարաստան, Պարսք, Ասորեստան, Բաբելոն, Էլամ, Պարթեւաստան, Եգիպտոս երկրները: Դարեհը, իր մղած 19 ճակատամարտերում, ընկճել է նրանց դիմադրութիւնը: Նրա պատժիչ զօրքերին համառօրէն դիմադրել է Արմինա-Հայաստանը, որտեղ ռազմական գործողութիւնները վարել են Հայազգի Դադարշիշ եւ պարսիկ Վահումիսա զօրավարները:*

*Դարեհի արձանագրութիւնը պատմում է, որ իր երկրի իշխանութիւնը չճանաչող Արմինայի դէմ հինգ ճակատամարտեր է մղել, որոնցից երեքը իր բանակի հրամանատար՝ Հայազգի Դադարշիշի, իսկ երկուսը պարսիկ զօրավար Վահումիսայի զօրքերի հետ: Ըստ արձանագրութեան պատումի, պատերազմը տեղի է ունեցել Արմինա երկրի Զագգա վայրում: Այդ կռուից քիչ ժամանակ անց, Արմինան երկրորդ ու երրորդ անգամներ ճակատամարտել է նոյն զօրավարի դէմ, այն էլ՝ Արմինայի ու Ասորեստանի սահմանին շատ մօտիկ վայրերում: Այդ հաստատում է, որ Արմին-Արմէնները համախումբ յաղթական մարտեր են մղել պարսկական բանակի դէմ, նրանց հալածելով ու աստիճանաբար երկրից դուրս վանելով մինչեւ Ասորեստանի տարածքներ: Եւ, Արմին-արմէնները Պարսկաստանի դէմ իրենց չորրորդ ճակատամարտը արդէն մղել էին Արմինայի սահմաններից դուրս՝ Ասորեստանի տարածքի վրայ, Դադարշիշին փոխարինած Վաումիսայի գլխաւորած բանակի դէմ: Ըստ արձանագրութեան յիշատակութեան, զօրավար Վաումիսայի գլխաւորած բանակը նորէն Արմինա երկիր է ներխուժել եւ միայն հինգերորդ ճակատամարտում, կայսրութեան հսկայական միջոցներով կարողացել է ճնշել արմինների ապստամբութիւնը:*

*Դարեհի դէմ ապստամբած երկիրը «Արմինա» չէր կոչուելու, եթէ այն իսկապէս «Արմինա» (Հարմինա)-(Արմանի) անունով երկիր եղած չլինէր: Առիթն է յիշատակել Մովսէս Խորենացու խիստ ճշմարիտ ու պատմական կարեւորագոյն արժէք ներկայացնող հետեւեալ վկայութիւնը՝*

*«Ամենայն ազգ զաշխարհս մեր անուանեն որպէս Յոյնք՝ Արմէն եւ Պարսիկք ու Ասորիք Արմնիք»*

*Դարեհի գրագիրը հաւանաբար Արամէագէտ եղած պիտի լինէր, կամ էլ Արամէացի, որոնք իրենց գրութիւններում բառամիջի ձայնաւորները չէին գրել: Արձանագրութիւնում մի քանի անգամ յիշատակուած «Արմնի» անուան «մ» եւ «ն» տառերի միջեւ չկայ «ա» տառը: Այն պէտք է կարդալ՝ «Արմանի»: Պարսիկները մինչեւ այժմ էլ թէեւ գրում են «Արմնի», սակայն այն հնչում ու գրում են «Արմանի»: Արմին-արմէնների երկիրն էր այն, մինչեւ մեր օրերին էլ շատ տարածուած է «Արման» անունը, իրենք էլ «Արմա» արորդիներ կոչել իրենց:*

*Արձանագրութիւնը յիշատակում է նաեւ, որ իր դէմ ապստամբել է նաեւ Արախա անունով մի Արմին (Արմէն-Արման)՝ Խալդիտայի որդին, Թագաւորը Բաբելոնի, այսպէս՝ «Երբ ես Պարսկաստանում ու Մարաստանում էի, Բաբելացիները երկրորդ անգամ ապստամբեցին իմ դէմ, մի մարդ, Արախա անունով մի Արմին, Խալդիտայի որդին, ապստամբեց Բաբելոնում: Դուբալա կոչուած մի վայրում նա ստեց ժողովուրդին (ասելով)՝ «Ես Նաբուգոդոնոսորն եմ՝ Նաբոնիտոսի որդին»: Ապա, բաբելական ժողովուրդը ապստամբեց իր դէմ եւ Արախայի կողմը բռնեց: Նա գրաւեց Բաբելոնը եւ դարձաւ Թագաւոր Բաբելոնում»:*

*Ըստ արձանագրութեան վկայութեան, այդ ՝Մի Արմին»-ը Խալ-*

*Շար.ը էջ 20*



# AUTISM-Ի ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՆՈՐ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՆԵՐ

Ամերիկեան Centers for Disease Control and Prevention կազմակերպութեան համաձայն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ վերջին երկու տարիներու ընթացքին Autism-ի պարագաներուն թիւը 30 առ հարիւր համեմատութեամբ բարձրացում արձանագրած է:

Ըստ հետազօտներուն, ներկայիս 68 փոքրերէն մէկը կը տառապի Austism-է: 2012 թուականին, 88 փոքրերէն մէկը կ՚ախտաճանաչուէր այս անհանգստութեամբ: Ներկայիս Autism-ը տղոց մօտ հինգ անգամ աւելի հաւանական է քան աղջիկներու մօտ: Տղոց պարագային, 42-էն մէկը կրնայ ախտաճանաչուիլ Autism-ով:

Այս անհանգստութիւնը մինչեւ օրս հիմնական նիւթ կը նկատուի հոգեբանութեան ծիրին մէջ փոքրերու անհանգստութիւններու գծով ուսումնասիրութիւններ կատարող մասնագէտներուն մօտ: Ճիշդ է, որ ներկայիս անհանգստութիւնը ախտաճանաչելու եւ որոշ չափով ախտանշանները մեղմացնելու կարելիութիւններ ստեղծուած են, սակայն Autism-ը կը մնայ գաղտնիքներով լեցուն անհանգստութիւն մը:

Ներկայիս, հոգեբաններ նոյնիսկ երկու տարեկան հասակին կրնան փոքրիկ մը ախտաճանաչել Autism-ով: Autism-ի գծով կատարուած նոր ուսումնասիրութեան մը արդիւնքները ցոյց կու տան թէ անհանգստութիւնը կրնայ ծայր առնել յղութեան ընթացքին: Autism-ի ծագումը տակաւին յայտնաբերուած չէ գիտնականներուն կողմէ, որոնցմէ մաս մը կ՚ենթադրէ թէ autism-ը կրնայ ի ծնէ ըլլալ:

Գիտնականներ յստակացուցած են թէ ծիները որոշ չափով կրնան գուշակել Autism-ի հաւանականութիւնը: Plos Computational Biology ամսաթերթը, ուր հրատարակուած է նոր հետազօտութեան մասին յօդուած մը, կը նշէ թէ ուսումնասիրութիւնը նաեւ ցոյց տուած է թէ սեռական օրկաններու ի ծնէ թերութեան պարագաներու 1 առ հարիւր բարձրացումին հետ 300 առ հարիւր համեմատութեամբ կը բարձրանայ նաեւ Autism-ի հաւանականութիւնը:

# ԳԼԽԱՑԱՒԵՐՈՒ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌ ՄԸ

Գլխացաւերը բնական են յատկապէս, երբ մարդիկ յոգնած, անհանգիստ կամ ճնշուած զգան: Սակայն կարգ մը գլխացաւեր կրնան մշտական կամ chronic ըլլալ: Այլ խօսքով՝ այս գլխացաւերը կը պատահին յաճախ եւ զանոնք կարելի չէ ամբողջովին բուժել: Մշտական ցաւերու պարագային, ներկայ տուեալներով լաւագոյն բուժումն է ցաւազերծիչ դեղերու միջոցով ցաւերու մեղմացումը: Ամէնէն ուժեղ գլխացաւերը կը պատահին միկրէնի պարագային: Միացեալ Նահանգներու վերջին յայտարարութիւններով, ամերիկացիներու 10 առ հարիւր համեմատութիւնը կը տառապի միկրէնի գլխացաւերէ:

Նախապէս կատարուած հետազօտութիւններու համաձայն, յատկապէս միկրէնի պարագային, գլխացաւերու նպաստող հիմնական գործօնն է՝ ճնշուածութիւնը կամ stress-ը: Ճնշուածութեան հետեւանքով, կրնան բարձրանալ արեան ճնշումը եւ արագանալ սրտին զարկերը: Ճնշուածութեան ժամանակ նաեւ կրնան լայննալ երակները, որպէսզի արիւնը դիւրութեամբ շրջագայի մարմնին մէջ: Ընդհանրապէս, երակներու լայնացումը կրնայ գլխացաւ պատճառել միկրէնէ տառապող անձերուն մօտ:

Հետաքրքրական է, որ Մոնթէֆիորի գլխացաւերու կեդրոնի եւ Ալպէր Այնըշթայնի անուան Եշիվայի բժշկական համալսարանի գիտնականներու կողմէ կատարուած նոր ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ ճնշուածութեան կողքին, հանգստութիւնը եւս կրնայ յառաջացնել գլխացաւեր:

Ուսումնասիրութեան հեղինակները կը համաձայնին թէ ճնշուածութիւնը մեծ դեր ունի գլխացաւերու յառաջացման մէջ, սակայն անոնք կը շեշտեն թէ գոյութիւն ունի ճնշուածութենէն ուժեղ այլ գործօն մը: Ըստ հետազօտութեան արդիւնքներուն՝ ճնշուածութեան արագ նուազեցումը կամ վերացումը կրնայ անմիջապէս պատճառ դառնալ միկրէնի ուժեղ գլխացաւերու:

Այս ուսումնասիութեան շնորհիւ գիտնականներ յայտնաբերեցին թէ ճնշուածութենէ ետք հանգստութիւնը աւելի ուժեղ դրդապատճառ կրնայ ըլլալ քան ճնշուածութիւնը: Այս ուսումնասիրութեան մասին անդրադարձած է Neurology ամսաթերթը:

# ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՕՆՆԵՐ՝ ԴՐԱԿԱՆ ԵՒ ԺԽՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դրական տեսակէտ եւ մտածելակերպը ամէնէն շատ օգտակար են կեանքի ցաւալի եւ ժխտական դէպքերուն պարագային:

Սակայն նման կացութիւններու մէջ բաւական դժուար է դրական ըլլալ կամ կեդրոնանալ հարցերու դրական կէտերուն վրայ:

Միչիկընի Պետական Համալսարանի դասախօսներէն մէկը յայտնաբերած է թէ ուղեղին մէջ գտնուող քիմիական նիւթերը մեծ դեր ունին անձի մը մտածելակերպին մէջ:

Նոր հետազօտութիւն մը, որուն մասին գրուած է Journal of Abnormal Psychology ամսաթերթին մէջ, կը ներկայացնէ առաջին գիտական փաստերը, որոնք ցոյց կու տան թէ իսկապէս գոյութիւն ունին դրական եւ ժխտական մարդիկ: Ճէյսոն Մոսէր, որ հետազօտութեան պատասխանատուն է, կ՚ըսէ թէ իր հետազօտական խումբը առաջին անգամն ըլլալով յայտնաբերած է ուղեղային գործօն մը, որ կրնայ պատասխանատու ըլլալ մարդոց դրական կամ ժխտական մտածելակերպին:

71 կիներու մասնակցութեամբ կատարուած հետազօտութեան արդիւնքներուն հիման վրայ, Մոսէր կը յստակացնէ թէ չենք կրնանք անձի մը խրատել որ ան դրական ձեւով մտածէ տուեալ հարցի մը վերաբերեալ: Ան կ՚աւելցնէ, որ պէտք է օգնենք որ անձը իր մօտեցումը բոլորովին փոփոխութեան ենթարկէ, եւ այս մէկը կը կարօտի ժամանակի եւ ջանքերու:

# ՔԵՍԱՊ, ՔԱՆԴ, ԳԱՂԹ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԽԱՂԱՔԱՐԹԵՐ

Շարունակուած էջ 6-էն

բացորոշ մէկ նպատակ: Թուրքիոյ պատասխանատու ղեկավարներ, վախնալով Թուրքիոյ համար մօտիկ ապագային պատահելիք հաւանական իրարանցումէն ու ճաթռտուքէն, այժմէն կը պատրաստուին պատուար դնել ու փակել Սուրիոյ եւ Թուրքիոյ աւեւիներուն միջեւ գտնուող ամէն անցք, առաջքը առնելու համար հետագայ հաշիւներու...: «Գող, սիրտը՝ դո՜ղ» կ՚ըսէր մեծ հայրս...:

Երրորդ. Երբ Թուրքիա կը պատրաստուէր նոր ընտրութիւններու, Թուրքիոյ վարչապետը կը փափաքէր ցոյց տալ իր բազուկներուն ուժը: Արդարեւ, Լաթաքիոյ վրայ թրքական պատերազմական օդանաւերուն կողմէ վար առնուած սուրիական զինուորական «Միկ» օդանաւին դէպքը, վերստին «սիրամարգի փետուր» հագնելու ոսկի առիթ եւ հպարտութիւն տուաւ վարչապետ էֆէնտիին, որ գինովցած ձեռք բերուած զինուորական յաջողութենէն, կը պատրաստուի նման առիթներ օգտագործել, ցոյց տալու համար իր ժողովրդականութիւնը՝ ոչ թէ տեղական ինքնակառավարման մարմիններու պարագային միայն, այլ մօտալուտ նախագահական ընտրութեանց ժամանակ:

Չորրորդ. Ինչ կը վերաբերի վերջերս ահաբեկող փաղանգներուն Քեսապ ներխուժման, այլեւս մտածելու կարիք կա՞յ...: Թրքական իշխանութիւններ կ՚ուզեն «ձուկ որսալ պղտոր ջուրի մէջ» ուղղակիօրէն քաջալերելով յարձակող խմբակները, որպէսզի տեղահանեն ու աքսորեն տեղի հայ բնակչութիւնը, քանդե՜ն անոնց բնակարանները, այսօրինակ քայլերով հայ զանգուածները հեռացնելու համար ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏ ՀՈՂԱՍԱՐԱԾՔՆԵՐԷՆ, միշտ վախնալով ապագային պատահելիք անակնկալներէն, որ խոշոր ու մնայո՛ւն գլխուցաւ է Թուրքիոյ իշխանութիւններուն համար:

Այս բոլորը՝ ծրագրաւորուած ու հաշուըրուած անշուշտ: Պատմութիւնը կը կրկնէ ինքզինք:

Մեր դարաւոր ոսոխը կը յարձակի, կ՚այրէ, կը քանդէ, կը յափշտակէ, կը գողնայ, կը սպաննէ... իսկ հայը, առանց յուսահատելու կը դարմանէ իր վէրքերը, կը բուժէ զանոնք, կը նորոգէ իր աւերուած տունն ու տեղը եւ որպէս ՓԻՒՆԻԿ, վերստին կը կառչի կեանքին, կը վառէ իր օճախը, կը շէնցնէ իր տունը՝ մերժելով յանձնուիլ ու տկարանալ, առանց խեղճանալու, միշտ հաւատացած իր կամքի ուժին:

Իսկ քաղաքակիրթ Արեւմո՞ւտքը... կը դիտէ այս բոլորը՝ պահուըտած իր մատին ետին, հագած սեւ ու մութ ակնոցներ՝ ըստ իր բարի՜ սովորութեան:

Հինգերորդ. Քեսապի նկատմամբ Թուրքիոյ սրած ախորժակը, պատահականութեան արդիւնք չէ արդարեւ...: Խրիմի թերակղզիին Ռուսաստանի միացումէն ետք, Քեսապը եւ նմանօրինակ տարածքներ արդէն խաղաքարթ են Արեւմուտքի ափին մէջ, երբ տաք շագանակը կրակի վրայէն առնել կու տայ խամաճիկ-գործակալներու: Բացաստի, այլեւս բացայայտ է, որ սուրիական ափերուն գոյութիւն ունին քարիւղի կամ կազի պաշարներ, որոնց հոտը արդէն վաղո՜ւց հասած է Արեւմտեան պատասխանատուներու ռունգերուն...: Ինչո՞ւ անոնք պիտի զրկուին այս պատրաստ կերակուրի համէն ու բաժինէն:

Եզրակացնենք: Քեսապի ներխուժումէն ետք, համոզուեցանք ազգովին, թէ Ցեղասպանութեան 100-ամեակը ոչ թէ մօտեցաւ, այլ կրնանք ըսել, որ այժմէ՛ն սկսաւ՝ Քեսապի վրայ կատարուած թրքական նոր սադայէլական ծրագիրի արդիւնքով: Մենք, տեսնելով այս բոլորը, համոզուած ենք, որ միայն միասնական կամքով կրնանք յաղթահարել ամէն սպառնալիք ու մարտահրաւէր: Հայուն առջեւ հիմա բաց են քաղաքական բոլոր ճանապարհները: Թուրքիոյ իշխանութիւնները կը խաղան իրենց վերջին խաղաքարթերը, իսկ մեզի համար այլեւս լռելը՝ մահացու մեղք է, պէտք է մերկացնե՛լ «երէկուայ հիւանդ մարդուն» քմահաճ արարքները եւ ցոյց տալ զէթ անգամ մը, որ թուրք «արքայ»-ն իրապէ՛ս մերկ է, ան պարզապէս հագած է Արեւմուտքի պատրաստած փայլուն ու կեղծ փետուրնե՜րը... որոնք վստահ ենք, որ երկար պիտի չդիմանան վաղուայ փչելիք զարնան քամիներուն դիմաց...: Կար ժամանակ, երբ կը խորհէինք, թէ «համբերութիւնը կեանք է»: Իսկ հիմա՞... մեր համբերութեան բաժակը փշրուեցաւ, զարնուելով Քեսապի լեռներուն: Հարկ է շտապել դէպի քաղաքական դաշտ, Ցեղասպանութեան նախօրեակին բոլոր ոստաններու մէջ հնչեցնելու համար քնացած զանգերը...: Տեղեկատուական դաշտը բաց «Աւարայր» է, իսկ ոսոխը՝ միշտ նոյնը, որ միայն սպանութեամբ, թալանով ու արտաքսումով կը տիրէ հայու ինչքին: Ուստի, մեզի կը մնայ մեր ունեցած կիրթ զէնքերը գործածել ճիշդ ուղղութեամբ՝ առանց ժամանակ կորսնցնելու: Շարժի՛նք հայեր:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
ՍԱՀԱԿԵԱՆ Լ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ԳՈԼԷՃԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐԱ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՒԱՔ
ՍԱՀԱԿԵԱՆ ԳՈԼԷՃԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ
«ԵԿԷՔ ՎԵՐԱՊՐԻՆՔ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՕՐԵՐԸ»

ՄԱՅԻՍ 16, 2014, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8:00-ին

«ՍՈՂԱՆԱԼԵԱՆ» ՍՐԱՀ
1060 N. ALLEN AVE. PASADENA, CAL.91104

ՃՈԽ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 5-էն*

*իշխանութեան մարմինների յարաբերութիւնները: Իհարկէ, դատական ատեանների քանակի կրճատում է տեղի ունենալու, եռաստիճանից դառնալու է երկաստիճան: Դա էլ է հետաքրքիր: Այս ռեֆորմը լուրջ ծախսեր է ենթադրում. առաջին ատեանի դատարաններում պէտք է դատաւորների թիւն աւելացուի, շէնքային պայմանները բարելաւուեն, որը շատ լուրջ, մեծածաւալ ներդրումներ է ենթադրում, որը մեր պարագայում այս պահին անգամ հարցերը լուծուած չեն եւ դժուարութիւններ կան դրանք լուծելու համար:*

- Որո՞նք են այն կարեւոր խնդիրները, մտահոգութիւնները, որոնք տեսնում էք հայեցակարգում:

*- Ես հիմնականում երկու խնդիր եմ տեսնում. առաջին՝ դա կարող է օրինականացնել մէկ կուսակցութեան իշխանութիւնը, այսինքն՝ ՀՀԿ-ին եւ նրա արբանեակ կուսակցութիւններին, որոնք այս պահին են փորձում տեղաւորուել ՀՀԿ-ի ստուերում կամ կողքին, որ գոյատեւեն: Եւ երկրորդ՝ ցաւօք սրտի, սահմանադրական փոփոխութիւնները որեւէ իրական պատասխանի հնարաւորութիւն չունեն այն մարտահրաւէրներին, որոնք այսօր գոյութիւն ունեն, իսկ իմ նշած քաղաքական կուսակցութեան պարագայում այն մարտահրաւէրները, որոնց առջեւ ենք, նոյնիսկ սահմանադրական այս փոփոխութիւնները չեն օգնի պատասխաններ գտնելու եւ լուծելու: Այսինքն՝ այս փոփոխութիւնները, որոնք նախաձեռնուեցին Սեպտեմբերի 4-ին Սերժ Սարգսեանի հրամանով, աւելի շատ տեսնում եմ հանրային դժգոհութեան, պրոբլեմների լուծման իմիտացիայի փորձ, որը բովանդակութեան տեսանկիւնից որեւէ խնդիր չի լուծելու:*

- Մինչեւ երէկ բոլորն ասում էին, որ այս սահմանադրական փոփոխութիւնները պէտք են Սերժ Սարգսեանին իր իշխանութիւնը երկարաձգելու համար, որ նա գա վարչապետ, սակայն նա յայտարարեց, որ այլեւս երբեք չի առաջադրուելու նախագահի եւ վարչապետ: Ինչպէ՞ս հասկանալ:

*- Թէեւ նա ասում է, որ չի պատրաստւում առաջադրուել, բայց եթէ հանրութիւնը պահանջի, շատ խնդրի (մեզ մօտ մոդայիկ է դարձել), որ այս մարդը վերադառնայ եւ երկրի պատասխանատուութիւնն իր ձեռքը վերցնի, ապա նման մի սցենարով կարող է ասի, որ ճիշդ է՝ ես ասել եմ, որ չեմ պատրաստւում, բայց կուսակցութիւնը, մարդիկ խնդրել են, որ ես առաջադրուեմ: Մեր քաղաքական անկանխատեսելի, բազարային մշակոյթի պարագայում նման հաւաստիացումներին լուրջ չեմ մօտենում, եւ դրա համար տեսնում եմ, որ հանրութեան ուշադրութիւնը շատ աւելի կարեւոր խնդիրներից ոչ միայն շեղելու, այլեւ զբաղեցնելու խաղալիք են գտել, որովհետեւ ՍԴ-ն այսօր էլ մեծ լիազօրութիւններ ունի, եթէ միայն կարողանայ լուրջ որոշումներ կայացնել: Ցաւօք, որեւէ ցանկութիւն չկայ ոչ փոփոխութիւն կատարողների խօսքերի եւ գործերի միջեւ, ոչ էլ իրենց կողմից կատարուելիք գործերի արդիւնաւէտութեան տեսակէտից: Այդ տեսակէտից որեւէ էական փոփոխութիւն սպասելն անիմաստ է, քանի որ խորը հիասթափութիւն կայ այսօրուայ իշխանութեան, այսօրուայ քաղաքական ինստիտուտների վարքագծի, դիրքորոշումների եւ խօսքի ու գործի նկատմամբ:*

*ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ*
*«ԼՐԱԳԻՐ»*

## ՔԵՍԱՊԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

*Շարունակուած էջ 8-էն*

*ացեալ Նահանգները: Այդ ճանաչումը կրնայ իրականանալ մի միայն երբ Թուրքիա դէմ յանդիման գտնուի իր մտաւորականութեան հետ, եւ որ իրմէ պահանջէ ճանաչում:*

*Երեկոյթը վերջ գտաւ ընդունելութեամբ մը, ուր ներկաները զօրակցական եւ քաջալերական երկտողեր յղեցին Սեւան Նշանեանին, այդ առթիւ պատրաստուած բացիկներով:*

## ՔԵՍԱՊԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

*Շարունակուած էջ 8-էն*

*համապարփակ կերպով ներկայացուց Քեսապի իրադարձութիւնները՝ միջազգային, շրջանային եւ սուրիական զարգացումներուն լոյսին տակ՝ կեդրոնանալով յատկապէս Թրքական քաղաքականութեան վրայ. ան լուսարձակի տակ առաւ «Արաբական Գարնան» յետին նպատակները, ԱՄՆ-Ռուսաստան յարաբերութեանց մագլցումը, Եւրոպայի դերակատարութիւնը, Խրիմի տագնապն ու անոր թաթար բնակչութեան հանդէպ Անգարայի յաւակնութիւնները: Քեսապի հարցով ուշադրութեան հրաւիրեց ընդդիմադիրներուն յաջորդական կորուստներուն փոխ հատուցման պարագան, Թրքական բացայայտ միջամտութեան, Իսկէնտերունի հարցին, Թրքօ-սուրիական սահմաններու կացութեան եւ Տաւուտօղլուի «զերօ հարց հարեւաններու հետ» կարգախօսին խայտառակ ձախողութեան: Ան Միջին Արեւելքի մէջ հայաթափման երեւոյթը համարելով մտահոգիչ, ընդգծեց սուրիահայութեան դիմագրաւած դժուարութիւնները՝ որպէս համազգային օրախնդիր:*

*Որմէ ետք ցուցադրուեցաւ տեսերիզ Քեսապի վերջին զարգացումները բացատրող, ինչպէս նաեւ միջազգային արձագանգները այս առնչութեամբ: Իսկ Ասատուր Տէլէթեան անդրադարձաւ սուրիահայ գաղութի կարեւորութեան, հայաստանամերձ գաղութներուն անհրաժեշտութեան, մարդուժի պատրաստութեան եւ ազգային կառոյցներու պահպանման հրամայականին:*

*Միջ-կուսակցական համագործակցութեամբ պատրաստուած քաղաքական այս ձեռնարկը իր լրումին հասաւ Տէր Մաշտոց քահանայ Աշգարեանի եզրափակիչ խօսքով եւ Պահպանիչով:*

*ԹՂԹԱԿԻՑ*

## ԼԻԲԱՆԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

*Շարունակուած էջ 13-էն*

*կան խաղացողներ չեն (զինուորական առումով) ու անոնց մեծագոյն յոյսն ու ապահովութեան ապաւէնը կը մնայ լիբանանեան բանակը, որուն դէմ ամէն օր սադրանքներ եւ դաւեր կը նիւթուին:*

*Այս բոլորէն անդին կարեւոր է դրուատել լիբանանեան պատերազմի ամբողջ տեւողութեան հայկական համայնքին որդեգրած «Դրական չէզոքութեան» կեցուածքը, որուն շնորհիւ լիբանանահայ գաղութը նուազագոյն զոհերով դուրս ելաւ պատերազմէն եւ յաջողեցաւ բոլոր կողմերուն յարգանքին եւ պատկառանքին արժանանալ:*

*Յուսալի է որ հայութեան որդեգրած այդ խելամիտ քաղաքականութիւնը կը շարունակուի այսօր եւս, մանաւանդ որ շատ մը կողմեր հայութիւնը Սուրիոյ պատերազմի որոգայթին մէջ նետելու փորձեր կը կատարեն:*

*Լիբանանի քաղաքացիական պատերազմին հիմքը նախ եւ առաջ միջազգային գերպետութիւններու «օրհնութեամբ» տեղի ունեցաւ: Կը մնայ յուսալ որ լիբանանցիները քաղած ըլլան այդ պատերազմին դասերը եւ ամէն գնով երկիրը հեռու պահեն պատերազմի վտանգներէն:*

*Պատերազմը ոչ մէկ դրական երես ունի:*

*Այդ կը վկայեն Լիբանանի քաղաքացիական պատերազմին սեւ էջերը:*

*Չմոռնանք:*

## ՏՊԱԳԻ՞Ր, ԹԷ՞ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳԻՐՔ

*Շարունակուած էջ 14-էն*

*ներին, ինչը մեր գրական միջավայրում ընդունուեց ոչ միանշանակօրէն:*

*Ժամանակը թելադրում է իր պայմաններն ու պահանջները, եւ ինտերնետային ընթերցումը շատերի համար դառնում է անհրաժեշտութիւն: Թուային գրադարանները դիւրացրել են շատ հարցեր՝ ժամանակի, տեխնիկական, ֆինանսական եւ այլն: Բացի ebook-երից, մի ամբողջ գրադարան կարելի է ունենալ book reader կոչուած սարքի ափաչափ տարածքում:*

*«Book reader»-ը բազմաթիւ առաւելութիւններ ունի, կարող ես ցանկացած գիրք ունենալ առանց ժամանակի կորստի եւ ընթերցելու համար շատ յարմար է՝ փոքր է, ծաւալ չի զբաղեցնում: Ամէն ինչ մտածուած է յօգուտ ընթերցողի յարմարաւէտութեան՝ միաժամանակ կարելի է լուծել տպագիր գրքի մի շարք խնդիրներ, ինչպէս օրինակ՝տառատեսակի փոփոխութիւնը, ուզածդ չափսը կարող ես ընտրել: Բացի դա, էկրանը լոյս չի արձակում, թղթի նոյն էֆեկտն ունի:*

*Մեր գրախանութներում ընտրութեան հնարաւորութիւնը մեծ չէ, յաճախ չես գտնի միջազգային ճանաչման գրողների՝անգամ բեսթսելլեր համարուող գրքեր, ինչպէս Սթիվեն Քինգի «Սեւ Աշտարակը», այդպէս էլի շատ գրքեր, այս առումով book reader-ը սահմանափակումներ չունի:*

*Սակայն, ինչպէս ասում են, ոչինչ չի համեմատուի նոր տպագրուած գրքի բուրմունքի հետ, որովհետեւ ոչ էլեկտրոնային գիրքը, ոչ book reader-ը չեն կարող փոխարինել տպագիր գրքի մշակոյթին, այն հաճոյքին, որ ստանում ես գիրքը թերթատելուց՝թղթի ձայնի, հոտի զգացութիւններից, նրա հետ կապուելու մտքից: Գիրքը ֆիզիքական միաւոր չէ պարզապէս, այն բովանդակութիւն է, գաղափար՝ քեզ հետ մտերմացած, հարազատացած էութիւն, այսինքն հոգեկան ապրումների, զգացողութիւնների աղբիւր՝ յատկութիւններ, առաւելութիւններ, որ չունի եւ չի փոխանցի էլեկտրոնային որեւէ գիրք կամ book reader, որն ընդամէնը անդէմ փայլ է »,-այսպէս է մտածում երիտասարդ մի ընթերցողուհի:*

*Բայց եւ այնպէս...*

*Տարիներ առաջ Երեւանի կենտրոնական փողոցներից մէկում, ծառի բնի մօտ կուտակուած տասնեակից աւելի գրքեր կային. տանտէրը, դրանք այլեւս անպէտք համարելով, դուրս էր նետել, ինչպէս հին իրերն են սովորաբար անում: Բարեկամս, որ բաւական հարուստ գրադարան ունէր, տունը վերանորոգելիս գրքերը արկղներով տեղափոխեց ամառանոց, որոնք այդպէս էլ լոյսի երես չտեսան, մնացին նկուղում: Տարիներ շարունակ հայ եւ ռուս դասականների գրքեր էին վաճառւում մետրոյի գետնանցում՝ չնչին կոպեկներով, ընդամէնը 200 դրամով, եւ գնող չկար...*

*Վերնիսաժում նոյնիսկ հանրագիտարանի հատորները վաճառքի էին դրուած շատ ցածր գներով, եւ գնող չկար: Պէյրութում տպագրուող գրական մի ամսագրում այդպիսի մի անդրադարձի հանդիպեցի, թէ ինչպէս հայկական դպրոցի գրադարանից դուրս են նետուել բազմաթիւ գրքեր, եւ դրանց տեղը ոչ աւել ոչ պակաս մօտակայ աղբանոցն է յարմար նկատուել:*

*Այդպէս հազարաւոր գրքեր Խորհրդային շրջանում տպագրուած, յատկապէս՝ գաղափարախօսական-պրոպագանդիստական, խոշոր-մեծածաւալ հատորներ՝ որպէս վառելիք, վառարանները նետուեցին, այրուեցին 90-ականների մութ ու ցուրտ տարիներին:*

*Մտածում ես՝որքան փայտ է ծախսւում թղթի արտադրութեան համար, եւ որքան զուր աշխատանք վատնւում, որքան անտառ է կտրւում, որքան ծառ ընկնում... որ մէկ անուն գիրք ստեղծուի, ու երբ դա՝ այդ գիրքը/ տասնեակ հազարաւոր տպաքանակներով մանաւանդ/, շատ կարճ ժամանակ յետոյ կորցնում է արդիականութիւնը, բացայայտում բովանդակային , գաղափարական կամ գեղարուեստական սնանկութիւնը, ափսոսանք ու մտահոգութիւն է միայն ծնւում: Մէկ էլ մտքովդ անցնում են հին իմաստունների ձեռագիր մատեաններն ու հնատիպ գրքերը, որոնք ժամանակի մէջ աւելի են արժեւորւում ու գնահատւում ու համեմատութեան եզրեր չես գտնում...*

*Գրահրատարակչական ծրագրուած քաղաքականութիւն՝ մանաւանդ ազատ շուկայական յարաբերութիւնների պայմաններում, պարզւում է հնարաւոր չէ իրականացնել, պետպատուերային քաղաքականութիւնն աւելի անմխիթար է՝ հեղինակների ընտրութեան կամայականութիւնների եւ այլնի առումներով, նոյնը եւ մեկենասութեան դէպքում: Ուրեմն թղթի կորուստ դեռ շատ կը լինի, եւ շատ ծառեր անտեղի կը զոհուեն: Եթէ այսպէս խնդրին մօտենանք՝ ի նպաստ անտառների ու ծախսուող մարդկային աշխատուժի, խնայողութեան համար փաստօրէն ուղղակի գտնուած ու շահեկան են ընթերցանութեան նոր, ժամանակակից էլեկտրոնային մեթոդները, իսկ հինը թէ որքան կը դիմակայի, ժամանակի հարց է:*

*Մինչ այդ տպագիր գրքի մշակոյթը շարունակում է զարգանալ, եւ գիրքը մնում է մեր հոգեւոր մշակոյթի հարստութիւններից մէկը: Նոր տեխնոլոգիաները տպագրական աւելի բարձր որակ ու հետաքրքիր ձեւեր են ներմուծում, գեղագիտական արժէք ու ճաշակ զարգացնում:*

## ՄԱՀԱԶԴ



*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԷՔՍԱԼԵԱՆ*
*(Ծնեալ 1929 Ֆրանսա)*

*Խոր ցաւով կը գուժենք մեր հօր եւ եղբօր՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԷՔՍԱԼԵԱՆի մահը որ պատահեցաւ Շաբաթ, Ապրիլ 12, 2014, յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Թաղման Տան Կարգը (Տեսակցութիւն) տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 15 Ապրիլ, 2014, երեկոյեան ժամը 7:00ին,* Hollywood Forest Lawn Church of the Hills *եկեղեցւոյ մէջ (Ճերմակ Եկեղեցին):*

*Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 16 Ապրիլ, 2014, կ.ե. ժամը 3:00ին* Hollywood Forest Lawn Church of the Hills *եկեղեցւոյ մէջ (Ճերմակ եկեղեցի):*

*Սգակիրներն են՝*
*Զաւակները՝ Հռիփսիմէ եւ Վանիկ Տէրմէնճեան եւ զաւակներ*
*Նուարդ եւ Սարգիս Մկրտչեան եւ զաւակներ*
*Կարօ եւ Անի Նէքսալեան եւ զաւակներ*
*Քոյրերը՝ Մարի Նիկողոսեան*
*Սրբուհի եւ Տիգրան եւ զաւակներ (Երեւան)*
*Եղբայրը՝ Յովսէփ եւ Էլմիրա Նէքսալեան եւ զաւակներ*
*Եղբօր կինը՝ Արաքսի Նէքսալեան եւ զաւակներ*
*Եւ համայն Նէքսալեան, Կիւրճեան, Տէրմէնճեան, Մկրտչեան, Տատայեան, Ալաճաճեան, Թաւլեան, Աղուանեան, Ջափարեան, Շահպանտարեան եւ Յովակիմեան ընտանիքներ:*

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*ներ ակնկալել եւ առաւել դժուար է ճշմարտութեան եւ արդարութեան միջօրեականներում կողմնորոշուելը: Վերջին օրերին Ղրիմում բնակուող ատրպէյճանցիները զանգուածաբար լքում են ինքնավարութեան տարածքը: Ղրիմի ատրպէյճանցիների միութեան նախագահ Ռահիմ Գումբատովը յայտարարել է, որ ներկայում Ղրիմում լարուածութիւնը բաւական բարձր է, եւ ցանկացած պահի զինուած հակամարտութիւն կարող է սկսուել, ինչը վտանգաւոր է իրենց հայրենակիցների համար, թէեւ անհասկանալի է, թէ ինչ վտանգներ են երեւում ազերիների աչքին: Եթէ խօսքը թաթարների եւ ռուսամէտ ուժերի հակասութիւններն են, ապա Ղրիմի նորանշանակ իշխանութիւնները համագործակցութեան առաջարկներ են ներկայացրել տեղի թաթարներին:*

*27%- ով նուազել է նաեւ ատրպէյճանցի ներգաղթեալների թիւը Ռուսաստանում, տեղեկացնում է* Haqqin.az*-ը: Անառարկելի է, ազերիների համար ինչպէս դրսում, այնպէս էլ երկրի ներսում ինչ-որ բան այնպէս չէ, ինչպէս կ՚ուզենային կամ պատկերացնում են, որ պիտի լինէր: Ալիեւի տոտալիտար ռեժիմը ճաքեր է տալիս: Ինչպէս նշում է «Կանանց ճգնաժամային կենտրոնի» հոգեբան Ազադ Իսազադէն. «Ատրպէյճանական հասարակութիւնում ագրեսիայի աճ է նկատւում: Մենք չենք կարողանում միմեանց հետ հանգիստ խօսել թէ՛ տանը, թէ՛ դրսում: Բոլորս ներդային վիճակում ենք: Այն մարդիկ, ովքեր թոյլ են եւ ընդունակ չեն պայքարելու, այդ ագրեսիան ուղղում են դէպի իրենց, ինչն էլ ինքնասպանութեան պատճառ է դառնում»: Նրա կարծիքով այս տարուայ Յունուարից համարեա՛ ամէն օր Ատրպէյճանում ինքնասպանութիւն է կատարուել:*

*Եւ սա դեռ սկիզբն է, քանի որ ռազմատենչութեան եւ այլատեացութեան հռետորաբանութիւնը բումերանգի պէս հակադարձ ուժով է օժտուած: Բայց Ալիեւի համար կարծես ներքին խնդիրներն այնքան էլ կարեւոր չեն: Ինչպէս միշտ, երբ միջազգային հանրութեան ուշադրութիւնը սեւեռւում է այս կամ այն իրադարձութեան վրայ, Ադրբեջանը փորձում է ակտիւանալ, սրել իրավիճակն ու սահմանային սադրանքներ հրահրել: Սակայն ուկրաինական դէպքերը կարծես առաւել դժուարամարս են եւ դժուար է նրանց նախկին կաղապարների մէջ տեղաւորել: Միաժամանակ անհանգստացնողը ժողովրդավարութեան ուրուականի գոյութիւնն է, ում ներկայութիւնը վերջերս առաւել յաճախակի կարելի է զգալ Ատրպէյճանում:*

*Մտահոգութեան նոր առիթ է նաեւ Յանուկովիչի ճակատագիրը: Ըստ ԱՄՆ պետդեպարտամենտի ամենամեայ զեկոյցի, Ատրպէյճանի պետական ամբողջ ապարատը կոռումպացուած է: Պայծառատես պէտք չէ լինել, հասկանալու, որ ամենագլխաւոր կոռումպատորը Ալիեւն է եւ որ ժողովրդավարութեան ուրուականը հաւանաբար նրան էլ հետապնդում է:*

**www.massispost.com**

## ԱՒՍՏՐԱԼԻԱ
## ՄԱՀ ԳՐԻԳՈՐ ՍՎԱՁԼԵԱՆԻ



*Վերջերս Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ իր մահկանացուն կնքած է տեղւոյն ծանօթ ազգայիններէն եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Սիտնիի մասնաճիւղի հիմնադիր Գրիգոր Սվազլեան:*

*Գրիգոր Սվազլեան ծնած է Պէյրութ 1942 Մայիսի 30ին: Աւարտած է տեղւոյն Ազգային Սահակ-Մեսրոպեան վարժարանը: 16 տարեկանին անդամակցած է ՍԴՀԿ-ի «Տխրունի» Ուսանողական Երիտասարդական Միութեան, յետագային դառնալով այդ կազմակերպութեան ղեկավարներէն մին: Այնուհետեւ մտած է Հնչակեան Կուսակցութեան շարքերը, դառնալով անոր հաւատարիմ եւ ժրաջան ուխտեալներէն մին:*

*1977ին կը գաղթէ Աւստրալիա եւ խումբ մը գաղափարանուէր ընկերներով կը հիմնէ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Սիտնի քաղաքի մասնաճիւղը եւ կը դառնայ նորահաստատ վարչութեան առաջին ատենապետը: Գրիգոր Սվազլեան կուսակցական մասնաճիւղին առընթեր կը հիմնէ նաեւ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնն ու «Նոր Սերունդ» պարբերաթերթը, որ կը դառնայ աւստրալահայ գաղութի փնտռուած հրատարակութիւններէն մին: Այնուհետեւ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կ՚օժտուի իր սեփական ակումբով, որ կը դառնայ հայ գաղութի կարեւոր հաստատութիւններէն մին: Շուտով կը ստեղծուին ակումբին հովանիին տակ գործող ենթակառոյցներ՝ Երիտասարդական, Տիկնանց, պարախումբ, ռատիօ ժամ, համացանցային թերթը եւայլն:*

*Հանգուցեալը միշտ ջատագովն եղած է հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդումին եւ տեղական մակարդակով՝ ազգային բոլոր կազմակերպութիւններու միջեւ համախոհութեան եւ միասնական աշխատանքի ռահվիրաններէն: Այս բոլորի ցայտուն ապացոյցներէն մին էր Արամ Խաչատուրեանի ծննդեան 100-ամեակի միացեալ ձեռնարկը, որուն ներկայ եղած է 5000 հոգի եւ որուն յաջողութեան մէջ մեծ բաժին ունեցած են Գրիգոր Սվազլեանն ու իր հիմնած Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը:*

*Գրիգոր Սվազլեանի մահով իր ընտանիքը կորսնցուց սիրեցեալ հարազատ մը, իսկ Ս.Դ.Հ. Կուսակցութիւնն ու Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը համեստ, գործունեայ եւ նախաձեռնութեան ոգի ունեցող գաղափարապաշտ, հայրենասէր ու նուիրեալ գործիչ մը, այլ խօսքով օրինակելի ընկեր մը:*

*Մեր խորազգաց ցաւակցութիւնները հանգուցեալի բոլոր հարազատներուն, համակիրներուն եւ մասնաւորաբար Սիտնի քաղաքի Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան, Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ «Նոր Սերունդի Ձայն»ի պատասխանատու ընկեր-ընկերուհիներուն:*

*Գ. ՄՈԼՈՅԵԱՆ*

## ԼԵՐԱՆ ՈԳԻՆ

*Շարունակուած էջ 15-էն*

*ներու մէջ՝ Անատոլու, եկեղեցիներու մէջ՝ Հայաստանի ու Թուրքիոյ տարածքին, փոքր մատուռներու մէջ՝ Ֆրանսա, Գերմանիա եւ Անգլիա: Ամէնէն առինքնող հնչականութիւնը գտած եմ Գեղարդավանքի (Հայաստան) լեռնափոր հատուածներէն՝ երկու մատուռներէ կազմուած կառոյցի մը մէջ»: Կարծեմ հիմա աւելի ճանչցաք Օննիկ Գալֆայեանը: Ան երգած է Փարիզի Նօթր Տամ եկեղեցիին, Նիւ Եորքի Սէյնթ Ճոն Տը Տիվայն եկեղեցիին եւ նոյնիսկ Շուշիի (Արցախ) լքուած մզկիթներուն մէջ: Ահա՛ մարդը, հա՛յ մարդը որ կ՚ըսէ.«Քրիստոնէական ճարտարապետութիւնը դէպի վեր կ՚ուղղուի՝ արարողութիւններու ձայնալիքները վեր՝ գմբէթը տանելով, որպէսզի ձայնը ունկընդրողին վերադառնայ, իբրեւ երկնային արտահօսում: Իսլամական ճարտարապետութեան մէջ, մզկիթը խոկման եւ երկխօսութեան վայր է -քարոզիչը կ՚ելլէ ու կը խօսի եւ իր խօսքը կը լսուի կառոյցի բոլոր անկիւններէն»:*

*Քննած է ան աշխարհի գլխաւոր այբուբենները եւ գտած որ անոնք անբաւարար են պարունակելու խօսուած բոլոր այդ լեզուներու հնչիւնները:*

*Տուեալ հնչիւններով Կիւրճիէֆը փորձած է համամարդկային լեզու մը ստեղծել՝ բայց ապարդիւն: Արչիլ Կորքին շրջեց եւրոպական արուեստի պատմութիւնը եւ փոխարէնը ցանեց տիեզերականութեան հունտեր: Օննիկ Գալֆայեանը համամիտ է Անդոյեան Արչիլի եւ իր գեղանկարչութիւնն ալ այդպիսին է՝ պայծառ ու չողուն:*

*Դեկտ. 2008՝ Կազայի աւերման դիմաց-ահա ճմլուող սիրտը հեղինակին.-իսրայէլեան ուժերուն կողմէ Կազայի կործանումը- նորագոյն փաստը տարածքի մարդկային ողբերգութեան:*

*Անցեալ 60 տարիներուն, ամերիկեան հանրութիւնը լոլոզուած ու մոլորեցուած է որպէսզի առէ եւ ի վերջոյ ապամարդկայնացնէ միջին արեւելքցիները, երբ «Այսօր Ամերիկայի բնակչութեան հարստագոյն 1 տոկոսին ձեռքն է երկրի հարստութեան 37.1 տոկոսը, յաջորդ հարստագոյն խաւին՝ 19 տոկոսին ձեռքն է երկրի հարստութեան 50.6 տոկոսը...»:*

*Այս է Ամերիկան, այսօր կքած պարտքերու տակ: Վստահ եմ, որ ահա՛, լաւապէս ճանչցաք հեղինակը:*

## ՆԵՐԲՈՂ ԱՐՄԻՆ-ԱՐՄԷՆ ՑԵՂԻ

*Շարունակուած էջ 16-էն*

*դիտայի որդին էր: Խալդի-տա անունը կազմուած է Արմինա-Ուրարտու-ի ազգային գերագոյն աստուած՝ Խալդի-ի անունից: Արձանագրութիւնում Արախա-ն յիշատակւում է մ.թ.ա. 520 թուականին, Ուրարտու անուանուած Արմինա պետութեան անկումից (590-585) 65-70 տարի յետոյ, եւ հաւանաբար Արախայի հայրը ապրած պիտի լինէր նաեւ նրա անկման օրերին: Եւ այդ Արմին-ը իր որդուն անուանել է Արմինա-Ուրարտու-ի գերագոյն աստուած Խալդիի անունով: Եթէ այդ Արմինը, Արմինա-Ուրարտուի հարազատ զաւակը չլինէր, կամ էլ Արմինա-Ուրարտուն կործանած մեդացիների հետ եկած թշնամի ու օտար ցեղի մարդ եղած լինէր, արդե՞օք Արախայի հայրը իր որդուն կ'անուանէր իրենց թշնամիների ազգային գերագոյն աստուած Խալդիի անունով՝ Խալդի-տա: Անշուշտ, Խալդի-տան ու Արախան Արմինա-Ուրարտուի Արմին-հայեր էին: Արմինա-Ուրարտացիները Խալդիին պաշտած Արմին-հայեր էին: Խալդին Հայկն էր՝ իրեն աստուած համարած ասուրաբաբելացիների տիրակալի դէմ պատերազմած հայը: Այդ Արմին-Հայը իր որդուն անուանել է Խալդի-տա, ինչպէս հայերը իրենց որդիներին մինչեւ հիմա էլ անուանում են նաեւ Հայկ-ակ՝ Հայկ:*

*Ինչպէս արձանագրութիւնը վկայում է, որ Արմինայի Արմինները եւ ոչ թէ Ուրարտու-Ուրաշտուն էր ազատագրական պայքար մղում Դարեհի պարսկական իշխանութեան դէմ: Եթէ այդ արմինները մարերի օգնութեամբ իշխանութեան եկածներ ու աքեմենեանների հովանաւորութեան տակ եղած ժողովուրդի մնացորդներ լինէին, ինչո՞ւ պիտի ապստամբէին եւ «թշնամի ուրարտացիների առկայութեամբ» վտանգէին իրենց նպաստաւոր դրութիւնը: Արմինա երկրի այդ Արմին-հայերը մարերի կողմից նուաճուած «Ուրարտացի» կոչուածներն էին: Նրանք ապստամբել էին՝ վերականգնելու իրենց Արմինա-Ուրարտու երկրի երբեմնի անկախութիւնը: Մարերը, եւ յետոյ էլ աքեմենեանները, իրենց նուաճած Ուրարտուն չէին անուանի Արմինա, եթէ այն արմէն-արմինների երկիրը եղած չլինէր: Հնագէտները, Ուրարտական անուանուած մշակոյթի շերտի վրայ նոր նստուածք չեն գտել, այն շարունակուել է նոյնութեամբ: Արմինայի «Արա Արայեան» գահատոհմի անկումից պատմականօրէն կարճ ժամանակ անց Նաիրեանների նոր գահատոհմի՝ Երուանդունիների, իշխանութեան գալով, կրօնա-մշակոյթային փոփոխութիւն տեղի չի ունեցել, պարզապէս Նաիրեանների իշխանական մի նոր տոհմի փոփոխութիւնն էր այն:*

*Պարսկաստանի մայրաքաղաք՝ Պերսեպոլիսում, Քսերքսեսի պալատի քանդակներում պատկերուած Արմին-հայերի տարազները նման էին Նինուէի Աշշուրբանիպալի պալատի որմի քանդակին պատկերուած «Ուրարտու»-ի պատուիրակների տարազներին: Հնարաւո՞ր էր արդեօք, մանաւանդ այդ ատեն, տարբեր ժողովուրդներ նոյն տարազները կրած լինէին:*

*Արմէն-Հայերի թագաւորները յուղարկաւորուել էին Եկեղեաց գաւառում: Արմինա-Ուրարտու հիմնադիր՝ Նաիրեանների զարմից Արամէի Արա Արայեան տոհմի արքաները, այդ գաւառում յուղարկաւորուելու աւանդոյթ դարձած սովորութիւնը շարունակուել է նաեւ Արմինա-Ուրարտական թագաւորական տոհմի յաջորդների կողմից էլ: Թագաւորական տարբեր հարստութիւնների նոյն մշակոյթը կրողների ուղղակի շարունակութեան ճշմարտութեան ապացոյցն է այդ: Արմինա-Ուրարտական տիրակալութեան ժամանակների տեղանունները նոյնն էին մնացել, ինչպէս՝ Ալզինի-Աղձնիքը, Ծուպանի-Ծոփքը, Էրեբունի-Երեւանը, Ախուրիանի-Ախուրեանը, Ծուինա-Սեւանը, Բիանա-Վանը, Կումմախա-Կամախը, Ուրարտու-Արարատը եւ այլ բազում տեղանուններ:*

*Արմինա-Ուրարտական հարստութեան անկումից (590-585մ.թ.ա.) մինչեւ Երուանդունիների Երուանդ Ա. թագաւորի իշխանութեան գալը (570 մ.թ.ա.) բնակչութեան կազմի փոփոխութիւն չէր եղել, նրա լեզուն փոխելու ընդունակ օտար եկուորների հոսք չի եղեղ: Եթէ այն փոխուած լինէր, ապա այն պիտի լինէր նոր իշխողներ՝ մեդացիների կամ պարսիկների լեզուն, իսկ Արմինա երկրի արմինների Հայերէնը նրանց լեզուն չէ: Այնտեղ պահպանուել է բնիկ իշխողների՝ Նաիրեանների, լեզուն: Արմինա-Ուրարտու երկրի պաշտօնական գրութիւնների, եւ ոչ թէ ժողովրդական գրութիւնների, համար օգտագործուել է խուրրիական մի բարբառ, որի պատճառով որոշ գիտնականներ ժխտում են այնտեղ իշխող Նաիրեանների հնդեւրոպախօս լինելը: Նաիրեանների Միտաննի պետութիւնում, խուրրիերէնը եղել է պաշտօնական ու ժողովրդական գրագրութիւնների հիմնական լեզու, եւ նաեւ երկրի երկրորդ լեզու: Սակայն, գիտնականները չեն մերժում այնտեղ իշխողների «հնդեւրոպական» ցեղին պատկանած լինելը:*

*Եթէ Արմինա-Ուրարտու թագաւորական հարստութիւնը հիմնադրած Նաիրեանները խուրրիախօս եղած լինէին, ապա նրանք Երուանդունիների ու Արտաշէսեանների ժամանակ էլ խուրրիախօս կը լինէին, սակայն այն այդպէս չի եղել, քանզի ժողովուրդների փոփոխութիւն տեղի չի ունեցել: Այդ ատեն Արմէն-Հայերը օգտագործել են նաեւ Արամերէն, Պարսկերէն, Յունարէն սակայն նրանք չեն համարուել Արամէացի, Պարսիկ կամ Յոյն: Մ.թ.ա. II եւ I հազարամեակներին, Ասորեստանի եւ Արմինա-Ուրարտուի արքաների յիշատակած Նաիրեան ցեղերի Բիաինները, Հայաստանի Արշակունիների գահակալութեան ատեն հանդէս են եկել որպէս առանձին նախարարութիւններ, ինչպէս՝* Daiaeni՝ *Տայք,* Abiliani՝*Աբեղեան,* Arsuniuini՝ *Արծրունի,* Abuni՝*Հաւնունի,* Eriahi՝*Շիրակ,* Abaeni՝*Ապահունի,* Alzinini՝*Աղձնիք,* Supani՝ *Ծոփք ու շատեր: Այդ Հայ նախարարութիւնները Արմինա-Ուրարտուի Նաիրեան ցեղերի ժառանգորդներն էին: Նրանք, նախնիների նման ունէին իրենց ինքնուրոյն տարածքները եւ առանձին խօսակցական բարբառները, որոնց հնչիւնային ու բառային պաշարը գրաբարի համեմատութեամբ այնպիսի տարբերութիւններ ունէին, որ հնարաւոր չէր նրանց համարել գրաբարի կրողների յետագայ սերունդներ:*

*Հայ լեզուի բարբառների միջեւ տարբերութիւնները մեծ են, ինչպէս նաեւ հնդեւրոպական միջճիւղային լեզուների տարբերութիւնները: Որոշ հայ բարբառներ անհասկանալի են մէկը միւսին, այնտեղ կան բառեր ու քերականական տարրեր, որոնք յատուկ չեն գրաբարին: Բարբառներից շատերի մի մայր լեզուից բաժանումը տեղի պիտի ունեցած լինէր շատ վաղ անցեալում: Պրոֆեսոր Ռ, Իշխանեանը ասել է՝ «Հայ բարբառները լիովին հնարաւոր կը լինի անուանել հնդեւրոպական ընտանիքի հայկական լեզուախումբ»: Հնդեւրոպական նախալեզուն ուսումնասիրելու համար Եւրոպական զանազան երկրների լեզուաբաններ Հայաստան են գալիս՝ հայկական բարբառներում հնդեւրոպական նախալեզուի հետքեր փնտռելու: Հայոց ոսկեղնիկ Հայերէնում են ամենաշատ պահպանուել հնդեւրոպական նախալեզուի առանձնայատկութիւնները: Հայերէն լեզուի բարբառների տարբերութիւնների կրողները պահպանել էին այդ ինքնուրոյնութիւնները որպէս մի առանձին ցեղային միաւոր, մի առանձին տարածաշրջանում: Հայկական նախարարութիւնները որպէս ժառանգները Հայկական Լեռնաշխարհի Նաիրեան ցեղերի, նրանց լեզուները պատկանում են հնդերւորպական նախալեզուի հայկական բնիկ լեզուախումբին, ինչպէս գերմանացի լեզուաբան Հիւբշմանը պիտի եզրակացնէր՝ «Հայերէնը հնդեւրոպական մայր լեզուի առանձին լեզուախումբ է եւ ոչ թէ պարսկերէն լեզուի մի ճիւղ»: Արմինա-Ուրարտական առաջին եւ երկու հարիւր տարիների յետոյ վերջին արձանագրութիւնների լեզուների միջեւ նշանակալի փոփոխութիւններ չեն նկատուել, այն խօսակցական լեզու չի եղել, այլապէս փոփոխուած կը լինէր:*

*Ասուրա-բաբելոնեան թշնամու դէմ մղուած ճակատամարտում իր աղեղով նրանց առաջնորդ Բէլին խոցած Հայկը՝ (հայերի նախահայր աստուածը) Խալդին է, ուրարտական արձանագրութիւնը վկայում է՝*

*«Խալդին դուրս եկաւ (արշաւի) իր զէնքով, յաղթեց ասորեստանեան բանակին»:*

*Խալդի-Հայկը եղել է Նաիրեան Արմէն-Հայերի աստուածը: Այդ ատեն Արմինա-Ուրարտուի արձանագրութիւնների լեզուն չի եղել նրանց խօսակցականը: Արտաշէսեան գահատոհմի արքաների, Արշակունիների տոհմի թագաւորութեան ատեն Նաիրեան ցեղերի գլխաւորները հանդէս են եկել որպէս նախարարութիւններ, որոնք հայոց «գահմանակում» յիշատակուել են արքայի գահի կողքին, նախարարական աթոռների առաջաւոր դիրքերում: Արմինա-Ուրարտական ժամանակների Նաիրեան ցեղերի ժառանգ մնացածներն են նրանք, ինչպէս՝ Խոռխոռունիները, Ռշտունիները, Արծրունիները, Տարօնի, Ծոփքի, Մոկաց, Ապահունիների, Տայքի, Աբեղեանների եւ այլ բազում նախարարութիւնները: Հայկական Լեռնաշխարհում Արմինա-Ուրարտու թագաւորական տոհմին յաջորդած թագաւորութիւնները եղել են Նաիրեան ցեղերի Երուանդունի ու Արտաշէսեան իշխանական գահատոհմերի պետութիւններ: Սահմանակից Պարթեւաստանի ու Մերձաւոր Արեւելքին տիրած Հռովմի համաձայնութեամբ Արմինա-Հայաստանին պարտադրուել է Պարթեւների Արշակունի տոհմից՝ Տրդատ Առաջինին մ.թ. 66-67 թուականներին թագաւորելու Հայաստանում: Հազար տարիներ Նաիրեանների նախարարական տները հանդուրժել էին ուրիշ ցեղերի ժառանգներին թագաւորելու Հայաստանի Մեծ ու Փոքր Հայքերում՝ Արմինա Հայկական Լեռնաշխարհում: Ափոս, ի՜նչպէս եղեւ:*

*Չկա՞ր յանդուգն ու մի քաջ Նաիրեանների Բիաինա տոհմերից մի նախարար, որ ասէր ես եմ Արմինայի արքան, ես եմ թագաւորելու այս երկրում, ես եմ նրա այրուձին ու հետեւակ զօրքին առաջնորդելու կռուի, չեղաւ . . . :*


